

# Գեղարմ

*համարի բանաստեղծությունը*

## Կապոյտ հող

Չերկէ հոգիս հերկէ - այս հողը կապոյտ է  
Կապոյտը երկնքիդ ծովերուդ նման է  
Այս հողը ուրիշ է - այս հողն երկինք է  
Այս հողը ծով է

Չերկէ հոգիս հերկէ - այս հողը կապոյտ է  
Կապոյտը երկնքի ծովերու վայել է  
Այս հողը երկնքէն փոթեր է իջեր է  
Այս հողը ծովերէն քակուեր է եկեր է  
Այս հողը կապոյտին գանձերը բերեր է

Չերկէ հոգիս հերկէ - այս հողը ուրիշ է  
Մայիս է գարուն է սիրուհի է մայր է  
Այս հողը հողերուն ամենէն կապոյտն է  
Կապոյտը երկնքիդ ծովերուդ նման է  
Չերկէ հոգիս հերկէ - այս հողը կապոյտ է  
Չող չէ - քու կեանքդ է

## Ձախրատ

Գեղարմ-60. 2017  
Գրական-գեղարվեստական,  
թարգմանական հանդես  
Հրատարակիչ՝  
«ՈԳԻ-ՆԱԻՐԻ»  
գեղարվեստի կենտրոն  
Հրատարակվում է 2002 թվից

Հասցեն՝ ԼՂՀ, 375000  
Ստեփանակերտ,  
Վ. Սարգսյան 25

Էլեկտրոնային հասցեն՝  
gekhard@yandex.ru  
hrantalex@rambler.ru  
Հեռ. +37497-252323

Տպագրվում է  
«Դիզակ-պլյուս» ՍՊԸ-ում

Խմբագիր՝  
Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գեղարմ-60.2017  
Literary-Feature  
translating periodical  
The publisher:  
«VOKI-NAIRI»  
art centre  
Published in 2002

Address: 25 V. Sarkisian str.  
Stepanakert, 375000, NKR  
E-mail: gekhard@yandex.ru  
hrantalex@rambler.ru  
Tel: +37497-252323

Editor:  
Hrant ALEXANYAN

## Գեղարմ Առն 2017

### Հ Ա Մ Ա Ր Ի Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

«Գեղարմ»-ի մատենաշար.....	3
Ուիլեյմ ՍԱՐՈՅԵԱՆ. Բաղնիք.....	4
Վահե ԱՐՄԵՆ. Բանաստեղծը խրամատում.....	8
Էռնեստ ԵՍԱՅԱՆ. Աշխարհի վերջը.....	12
Մանվել ՄԻԿՈՅԱՆ. Բանաստեղծություններ.....	17
Վլադիմիր ՄԱԼՅԱՎԻՆ. Չժուան-ցզի. Անօգտակարության օգտակարության մասին.....	25
Լի ԹԱՅ ՊՈ. Բանաստեղծություններ.....	50
Անդրեյ ՎՈԼՈՍ. Վերադարձ փանջիռուդ.....	53
Յասմինա ՄԻԽԱՅԼՈՎԻՉ. Պավիչը եւ հիպերբելիտրիստիկան .....	60
Օբրեն ՌԻՍԻՉ. Բանաստեղծություններ.....	66
Ֆրանց ՅՈԼԵՐ. Տորթը.....	69
Literary translations. Henrik EDOYAN.....	77
Ժամանակակից Իրանական պոեզիա.....	79
Աշոտ ԱԼԵԲՍԱՆՅԱՆ. Մուրճի եւ սալի արանքում.....	92
Քրիստոֆ ՌԱՆՍՄԱՅՐ. Պրժեմիշլ.....	95
Խճանկար.....	100

Կազմին եւ համարում՝ Հովհաննես ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ  
ստեղծագործությունների արտապատկերները

Գեղարմ - ի

մատենաշարով

լույս են տեսել

**Անդրեյ ՎՈԼՈՍ.**

**«ՎԵՐԱԳԱՐՉ ՓԱՆՁԻՈՒՂ»:** Վեպ:

**Թարգմ. ռուս. Շ. Մկրտչյան:**

**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2017, 448 էջ:**

Ռուս ժամանակակից արձակի վառ դեմքերից մեկի՝ Անդրեյ Վոլոսի «Վերադարձ Փանջիուղ» վեպը էպիքական շնչով գրված մի յուրահատուկ ու գեղեցիկ ձոն է՝ նվիրված թաջիկական ծագմամբ պարսիկ հռչակավոր բանաստեղծ Ռուդարիին/858-941/:

Գրողը կերտել է ամբողջական, մարդկային անկրկնելի հատկանիշներով օժտված մի լուսավոր կերպար, ով ժամանակների խորքից մեզ հետ խոսում է արդիական շեշտադրումներով:




**Ջիդի ՄԱՋԻԱ.**

**«ԸՆՉԱՆՅՈՒԾԻՅ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ»**

**Թարգմ. անգլերենից: Ստեփանակերտ,**

**«Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 200 էջ:**

Չինական ժամանակակից պոեզիայի նշանավոր դեմքերից մեկի՝ Ջիդի Մաջիայի անունն արդեն հայտնի է հայ ընթերցողներին, նրա նախորդ՝ «Հրեղեն խոսքեր» ժողովածուի հայերեն թարգմանական հրատարակությունից (2016): Բանաստեղծի նոր՝ «Ընձառյուծից մինչև Մայակովսկի» գիրքը նորովի է բացապարզում հեղինակի գեղարվեստական ու մարդկային լայն աշխարհայացքը, ուր առաջնային տեղ են զբաղեցնում ինչպես սեփական ու ազգային ինքնադիմանկարի հարուստ գունախաղերը, նույնպես եւ ընթացիկ դարաշրջանի տագնապներն ու հիմնախնդիրները:




**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ**

**ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ:** Հատոր 4:

**Թարգմ. անգլ. Ա. Աթաբեկյան:**

**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2017, 144 էջ:**

Մույն գիրքն աննախադեպ ու բազմաձևավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլեւ կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:



Ուիլերմ ՍԱՐՈՅԵԱՆ

ԲԱՂՆԻՔ



Մեն Պենիթո պողոտայի մեր տան բաղնիքը հաստատուած էր ներքնագալիթին խորը, անկիւն մը: Հոն գտնուէր տաշտ ու սեղան մը՝ տախտակամածի մը վրայ, որուն փայտերը հնամաշ էին ու տեղ-տեղ փտած: Չմեռները սառելու աստիճան ցուրտ կ'ընէր: Տաք ջուրի ծորակ չկար, որովհետեւ ջրամբար չունէինք: Տաք ջուրը կը տաքցուէր խոհանոցի կազոճախին վրայ: Լոզանքի դրութիւնը հնաբոյր էր ու նահապետական, հաստատուած մեծ մօրս՝ Լուսնբազի կողմէ, մեր լիագօր վերակացուն ու բաղնեպանը: Մեր մանկութենէն մինչեւ պատանեկութիւն՝ Լուսնբազն էր որ կը լողցընէր մեզ՝ զիս եւ եղբայրս, երբ ան մեր տունը գտնուէր: Մեծ մայրիկս շատ յաճախ մեր տունը կու գար: Մօրս հետ խօսիլ, խնդալ, կատակել, վերլիշել անցեալի երգերը, բամբասանքը եւ մանաւանդ հեզնել ամբարտաւաններուն եւ տխմարներուն տկարութիւնները՝ մեծ հաճոյք կը պատճառէին իրեն: Ի վերջոյ երբ հետզհետէ կը մեծնայինք եւ մեր այր մարդ դարձած ըլլալու ապացոյցը կը նշմարէր, պահ մը կանգ կ'առնէր ու կը բացահանչէր.

- Ահաւասիկ հասունացած մարդ մը ես, ամէն բան տեղին ու կարգին: Ծօ՛, հաճիս այնքան մը ծոէ, որ առջեւդ կախուող այդ ահաւոր բանը չտեսնեմ երբ կռնակդ կը շփեմ:

Ան կը շփէր ու կը ֆերէր մեր կռնակները ֆելսնափաթա վատորակ օճառով եւ կարծր լաթով: Մակայն երբ քիչ մը ունեւոր դարձանք եւ մեր կեանքի պայմանները բարելաուեցան, սկսաւ Հուսայթ Քինկ կոչուած աւելի լաւորակ օճառը գործածել եւ ի վերջոյ Փայմոլիվը, յաջորդեց այդ բոլորին:

Շաբաթը մէկ անգամէն աւելի լոզանք չէինք կրնար առնել, որովհետեւ նախ՝ տաք ջուր ունենալը բաւական դժուար ու բարդ խնդիր մըն էր: Ապա շաբաթը մէկ լոզանք տրամաբանական եւ բաւարար

## Գեղարմ Աշուն 2017

կը համարուէր: Միանգամայն այն համոզումը կը տիրէր թէ յաճախակի լուգանք առնել վնասակար էր առողջութեան: Մարմինին առիթ պէտք էր տրուէր հոգիին հետ միանալով ամբողջանալու: Եթէ մէկը ամէն երկու օրը անգամ մը լուգնար, հոգին մարմինին մէջ օթեանելու ապահով տեղ չէր կրնար գտնել եւ բնակիլ:

Տաշտին մէջ կար պզտիկ յղկուած աթոռակ մը, որ բերուած էր պապենական հայրենիքէն: Լուգանք առնողը կը նստէր ասոր վրայ: Աթոռակին առջեւ տղաւորուած կ'ըլլար կլայեկուած լեցուն թիթեղէ տաշտ մը, պաղ ջուրի ծորակին տակ: Երբեմն, կամ մեծ մայրիկս կը մոռնար պաղ ջուր աւելացնել տաքին, եւ կամ ալ պէտք չէր տեսներ՝ խորհելով որ ջուրը տանելի տաքութիւն ունի: Եւ երբ ջուրը թափէր մեր մարմինին, տաքութիւնը այնքան անտանելի կ'ըլլար, որ լուգացողը ոռնալով ընդոստ ոտքի կ'ելլէր եւ կը'ցատկոռտէր: Իրականութեան մէջ ջուրը տանելի տաքութիւն կ'ունենար, սակայն մարմինը պաղ ըլլալուն՝ եռացածի ազդեցութիւն կը գործէր: Նման կացութեան մը մէջ եթէ վեր ցատկէի, մեծ մայրիկս ծոծրակէս բռնելով զիս տեղս կը կնստեցընէր եւ քիթին տակէն կը տրտնջար թէ ես մարդ պիտի չըլլայի, մանաւանդ հարուստ:

Պապենական հայրենիքէն բերուած պղնձեայ թասը թիթեղին մէջ կը խոթէր եւ առատօրէն ջուր կը թափէր վրաս: Ջուրը այս անգամ այնքան տաք կը թուէր, որովհետեւ կամ թեթեւ մը պաղած կ'ըլլար, կամ ալ ես վարժուած կ'ըլլայի այրելու: Նախ գլուխս կ'օճառէր: Չեմ գիտեր թէ գլուխ ըսելով ինչ պէտք է հասկնանք: Մազերս այնքան առատ, խիտ ու երկար էին որ կը ծածկէին զանգուածային գլուխս, դէմքս, քիթս, բերանց, ականջներս եւ վիզս: Գլուխս երկու անգամ կ'օճառէր եւ պաղ ջուրով կը ցօղունէր: Ապա կարգը կու գար կռնակիս: Կռնակս մինչեւ որ ճակնդեղի պէս կարմրցնէր, չէր գոհանար: Յետոյ կատաղօրէն մը յարձակէր բազուկներուս եւ ձեռքերուս՝ միշտ տրտնջալով՝ «Տէ՛ր իմ Աստուած, ամբողջ չոր ու ցամաք ոսկոր, գաւազանի պէս, Թագուհի, աղջիկս, այս տղան ինչու՞ միս չունի իր ոսկորներուն վրայ»: Այս ըսած ատեն մօրմէս պատասխանի չէր սպասեր, որովհետեւ գիտէր թէ ան, այդ պահուն, խոհանոցը ջուր տաքցնելով զբաղած կ'ըլլար: Ընդհանրապէս տաշտին մէջ, ջուրին յատակը, կարելի կ'ըլլար նշմարել հաւաքուած աղտեղութիւնը: Եթէ հոն պէտք եղածին չափ առատ աղտեղութիւն հաւաքուած չըլլար, կը նեղուէր, տեսակ մը յանցատուր կը զգար որպէս աշխարհի լաւագոյն մանչը լողնող ճարտար բաղնեպանի իր կրած ձախողութեան համար: Պատահէր որ առատ աղտ հաւաքուէր հոն, կը հպարտանար ու կ'ըսէր. «Կը տեսնես, ծօ կը տեսնես, այգի մը պարարտացնելու չափ աղտ կայ հոս, ան ալ «ալիքանթ» որթատունկերով այգի մը:

Եթէ իր տղայէն՝ Արամէն՝ գործի բերումով նոր բառեր լսէր, զանոնք կը գործածէր իր ուզած ձեւով, առանց անդրադառնալու անոնց բուն իմաստին: Օրինակ, «ալիքանթ» բառին հնչումը կը սիրէր, հայերէնի պէս բան մըն էր եւ կամ անոր նշանակութիւնը ինք այդպէս կը մեկնաբանէր: Եզական էր մեծ մայրիկս իր գործածած բառերուն անճշտութիւններով եւ կատարած իւրայատուկ գիտերով: Եթէ անճրկէր, նոր բառեր եւ ասացուածքներ կը յօրինէր այլազան պարագաներու պահանջներուն համաձայն, որոնց իմաստը միայն ինք կը հասկնար: Իր գործին դժուարագոյն մասը վերջացած կ'ըլլար երբ օճառուած լաթ մը շարտէր ձեռքս եւ մրմռար՝ «Ա՛ն սա, եւ առջեւ մաքրէ՛»: Այդ պահուն կռնակը ինձի կը դարձնէր կամ մէկ կողմ կը նայէր ամօթխածութեամբ եւ կ'երգէր ինչ որ միտքը գար - բողոքականներէն սորված հոգեւոր իլահի մը կամ ազգային հայրենասիրական երգ մը իր յիշած եւ յօրինած բառերով: Բողոքականներէն չէր ախորժեր, զանոնք տխմար ու կրօնամոլ կ'անուանէր, սակայն «Տան ճրագը առկայձ

## Գեղարմ Աշուն 2017

պահեցեք» հոգեւոր երգը շատ կը սիրէր եւ կ'երգէր գահն իւրայատուկ աղճատ ու անճիշդ բառերով: Այս ամբողջը շատ հաճելի արարողութիւն մըն էր իրեն համար եւ թերեւս նոյնքան ալ քեզի համար եթէ ի վիճակի ես հնահատելու գործին լրջութիւնն ու տարողութիւնը: «Լա, լա, դրալա, լա: Հիմա ոտքերդ, ոտքերդ լա՛ մաքրէ, ծօ, դուն շատ կը քալես»:

Եւ այժմ վերջնական եւ ամբողջական ցօղում. հանդարտ ու կամացուկ, առատօրէն ջուր կը թափէր գլխէս մինչեւ ոտքերուս մատները եւ «օ՛խ» մը կը քաշէր: «Օխ»-ը «ախ» չէր նշանակէր հայերէն լեզուի մէջ: Վեցէ աւելի այլ լեզուներու մէջ ողբ ու կոծի բացազանչութիւն է ան: Սակայն «օխ»-ը հոս կը նշանակէր՝ «լա, որքա՛ն հանգստացուցիչ, որեւէ բան ասկէ լա կրնա՞յ ըլլալ»: Ատր կը հետեւէր խոշոր ու տաքուկ սրբիչ մը, որուն միջոցով կարելի արագութեամբ մարմինս չորցնելով այս սառի պէս պաղ բաղնիքէն տաքուկ խոհանոցը կը շտապէիմ: Խոհանոց հասնելուս, գաւաթ մը պաղ ջուրի մէջ երեք թէյի գդալ շաքարով պատրաստուած օշարակ մը կը սպասէր ինծի: Այս ըմպելիքը շարպաթ կը կոչուէր: Թերեւս այս բառը շերպէթ բառին աղաւաղումն է: Երբ գաւակներս փոքր էին, այս սովորութիւնը անոնց ալ սորվեցուցի: Եթէ բաղնիքէն ետք մայրերնին մոռնար անոնց գաւաթ մը օշարակ տալ, մանչս կամ աղջիկս կը պոռար. «Ու՛ր է շարպաթս»:

Լոզանք մը, հակառակ իր առթած աղմուկին, իրարանցման, բրտութեան եւ երգախառն կատակերգութեան, օրհնութիւն մըն էր: Լոզանքին կը հետեւէր զգեստներու ամբողջական փոփոխութիւն: Նոր լուսացուած եւ արդուկուած ներքնազգեստ, ծածկերը խնամքով կարկտնուած մաքուր գուլպաներ, նոր ու արդուկուած բամպակէ կապոյտ շապիկ եւ կապոյտ վերնազգեստ, եւ այս բոլորը լուացքի անուշ օճառին բուրումով օծուն: Մազը խոհանոցին մէջ կը չորցունէր եւ կը սանտրուէր դէպի ետ, առանց իղի: Իւղ չէինք գործածեր, որովհետեւ մազը իր ուրոյն իւղը ունէր: Ապա մկրատ մը կը տրուէր, որպէսզի ոտքիս եղունգները կտրեն: Յետոյ ծերուկ Լուսնթագը կամ մայրս, եթէ մեծ մայրս մեր տունը չըլլար, ձեռքիս մէկ կամ երկու մատներուն եղունգն այնքան խորունկ կը կտրէր, որ անոնք շաքաթ ամբողջ կը ցաւէին:

- Մարդիկ պէտք է յարմարագոյն ձեռով եղունգ կտրելու ճարտարութիւնը սորվին,- կը պոռայի ես ինքզինքէս ելած:

- Անոնք նորէն կ'աճին,- կ'ըսէր Լուսնթագ,- հիմա հիւրասրահ գնա եւ հագուստներդ հագնուէ:

Տաս-տասնհինգ վայրկեան ետք երկրորդ շարպաթ մը կու գար առաջինէն շատ աւելի կազդուրիչ:

Հրաշալի է կենդանի ըլլալ ու ապրիլ: Այպէս ըսած եմ հոս ու հոն, եւ միեւնոյն բառն այնքան յաճախ գործածած եմ որ շատեր ձանձրացած են լսելէ եւ տրտնջացած են եւ ըսած՝ մեմ մօրս՝ Լուսնթագին պէս. «Դուն երբեք գրող պիտի չըլլաս»:

Լա, ինծի այպէս կը թուի թէ անոնք իմ ձեռովս չեն լոզցած: Թերեւս առտու-իրիկուն արդիական բաղնիքի մը մէջ լոզանք առած են սուղնոց օճառ եւ նորահնար իւղեր գործածելով: Հաւանաբար լոզանքէն ետք գաւաթ մը շարպաթ ալ չեն խմած. աւելին, անկէ տասը-տասնհինգ վայրկեան ետք երկրորդ գաւաթ մըն ալ չեն ըմպած:

Թերեւս լոզանք մը անոնց համար օրհնութիւն չէր, որովհետեւ անոնք միշտ մաքուր, կամ պէտք է ըսել՝ չափազանց մաքուր էին:

Անոնք երբեք իրենց բաղնիքի տաշտին յատակը ալիքանթ որթատունկերով այգի մը պարարտացնելու չափ աղտ չեն տեսած:

## Գեղարմ Աշուն 2017

Խոհանոցի օճախը կը տաքցներ ամբողջ տունը: Ձեռուցումի այլ միջոց չկար: Միակ վառելանիթը փայտի սղոցուք եւ տաշեղ էր: Երկու տօլարով բեռնատար օթօ մը լեցուն տաշեղ կը գնէինք որ մեր երկու մառաններէն մէկը կը լեցնէր: Երկու օթօ լեցուն սղոցուք ամբողջ ձմռան կը բաւէր: Նաեւ տուն կը բերէինք հին ու մին փայտի եւ տախտակի կտորներ ուր որ գտնէինք: Ամբողջ ձմեռ, տիւ եւ գիշեր, միշտ կրակ կը մնար օճախին մէջ տունը տաքցնելու համար: Հաճելի էր օճախին կաս-կարմիր կրակին բոցերը դիտել եւ այրող եղեւնիի, մայրիի, կաղնիի եւ այլ տեսակի ծառերու իւղերուն բուրումը շնչել: Օճախին լայն ճակատին տարածութեան վրայ կային երկու փուտեր եւ անունը Էքսելսիօր, գրուած նիքելապատ գիրերով, որ խոհանոցին կէս մթութեան մէջ աստղերու պէս հպարտօրէն կը փայլէր: Տան կատուն կը սիրէր այս սքանչելի կոթողին շուրջը դառնալ եւ կամ երկննալ ու քնանալ անոր քովը, դիտելու համար Հայերը, որոնցմէ ոմանք ալ զինք կը գիտէին իրենց կարգին: Անոնք այս տունը կ'ապրէին, ինքն ալ միասին - այդ հսկայ, գորշ, արու կատուն, դիւրահաղորդ, ուժեղ, անկախ, սակայն ջերմ ու մտերիմ, քիչ մը յիմար կամ հանճար, ինչպէս որ կ'ուզէք, մանաւանդ գարնան կամ ամռան սկիզբները: Ելը՛խ, ճարտարօրէն կը բանար մղակուած դուռը, կարծես թէ լայնօրէն բաց ըլլար: Առանց վարագոյրը, դուռը կամ ինքզինք վնասելու դուրս կը սպրդէր ի խնդիր էզի մը բոյրին, աղջիկ հալածելու արկածախնդրութեան անձնատուր:

Չորս-հինգ օր տիւ եւ գիշեր կը կորսուէր: Ապա օր մըն ալ քոսոտ ու անշշուկ, կատարելապէս սպառած ու այլափոխուած, կը փլէր ու կ'երկըննար օճախին մօտ եւ կը սկսէր զարմանել ու մխիթարել ինքզինք Ժողովողի հեղինակին պէս յուսահատ. *«Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»*: Թախիծ ու տգիտութիւն: Աստուծոյ սիրոյն, ի՞նչ է այս բոլորին նշանակութիւնը: Աման մը թարմ կա՞թ:

**Հայացուց՝ Յովհաննէս ՇԷՕՂՄԵԼԵԱՆ**

Գեղարմ Աշուն 2017



Վահե ԱՐՄԵՆ  
/Իրան/  
**ԲԱՆԱՍՏԵՂԾԸ  
ԽՐԱՄԱՏՈՒՄ**

**ԼՈՒՄԱՄՈՒՑ**

Այն պատին  
Որ շարել են  
Այս բանաստեղծության շուրջ բոլորը  
Լուսամուտ են նկարում

Գուցե Աստված  
Մանուկ ժամանակ  
Գունագեղ ապակյա գնդիկ է թաքցրել  
Հենց այս լուսամուտի ետևում

**ՀԱՅԲԸ**

Կես հայացք նետեց ոտքերիս  
Ու ասաց  
Տարբերություն չունի թե ինչպես ես գնում  
Օղանավով  
Գնացքով  
Ձիով  
Թե հետիոտն  
Բոլոր դեպքերում  
Ոչ շուտ կհասնես  
Ոչ ուշ  
Այս ճամփորդությունը  
Մի ամբողջ կյանք կտևի  
Ոտքով գնա

---

*\*Բանաստեղծությունները գրված են առանց կետադրական նշանների:*



## Գեղարմ Աշուն 2017

### **ՆԱՀԱՆՁ**

Կեսգիշերին մոտ հասանք նրանց  
Գալիս էին դիմացից  
Ասացին  
Վերադարձեք  
Ասացինք  
Վերադարձեք

Ոչ նրանք էին ստում  
Ոչ մենք

### **ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ**

Որքան նման է  
Կարճ բանաստեղծությունը  
Խաղաղությանը  
Իսկ երկարաշունչ նամակները  
Պատերազմին

### **ՀԱՂԹԱՆԱԿ**

Հաղթանակի բանաստեղծությունը  
Անավարտ  
Թողեցի սեղանին ու  
Գնացի գերեզմանոց

Մրջյունները  
Մի ընկերոջը հողին հանձնելու  
Կարճ ժամանակահատվածում  
Իրենց հետ տարան  
Բանաստեղծությանս քաղցր բառերը

### **ԽՐԱՄԱՏՆԵՐ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ**

Շատ բան չեմ հիշում

Մեր խրամատները  
Դեմ առ դեմ էին փորել  
Իսկ մեր գերեզմանները  
Միմյանց կողք

## Գեղարմ Աշուն 2017

Տխուր էր և  
Մի քիչ ծիծաղելի

### **ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայրս որ գնաց  
Մի տուն քաղաքում  
Ժամ առաջ  
Նախքան ռմբակոծությունը  
Ավերվեց

### **ՄԱՅՐ**

Մայրս գնաց և  
Հացը  
Տան մարած թոնրում  
Ամեն օր  
Այրվում է

### **ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԻ ԲՈՒՅՐԸ**

Մինչև այն օրը երբ կար  
Ձեռքերը բուրում էին կարմիր վարդի բույրով  
Այն օրից երբ գնաց  
Կարմիր վարդերը  
Բուրում են նրա ձեռքերի բույրով

### **ԹԱՂԱԿ**

Հորս գերեզմանին  
Ինչպես երեխան հորի խորքում  
Արտասվեցի

Մորս գերեզմանին  
Ինչպես խելագարը հորի պռնկին  
Ծիծաղում էի  
Այդ օրը  
Մայրս բոլորից թաքուն  
Ինձ խուտուտ էր տալիս

## Գեղարմ Առն 2017

### ԱՌԵՂԾՎԱԾ

Ծեր իմաստունը  
Ժպտաց ու ասաց  
Մտածելով այս խնդիրը չես լուծի  
Այս առեղծվածի պատասխանը  
Միայն  
Այն երեխաները գիտեն  
Որ դեռևս  
Լեզու չեն եղել

### ԽՐԽԻՆՁ

Կեսգիշերին  
Մի ձի եկավ երազումս  
Հոգնած էր  
Քնեց

Ես ամբողջ գիշեր բանաստեղծություն էի գրում  
Մութուլուսին այգաբացի  
Արթանցավ  
Ու խրխնջաց  
Ձիերը երազում  
Ման են ածում բանաստեղծների

### ԱՆՁՆԱԿԱՆ ԿՏԱՎՆԵՐ

Ճերմակ երազներս  
Սպիտակ կտավին  
Իսկ կյանքիս գորշությունը  
Սև կտավին եմ նկարում

Այս երկու կտավները  
Քույր իմ  
Ոչ մի գնով չվաճառես

Պարսկերենից թարգմանեց՝  
Էդուարդ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

*«Երբ ես մեռնեմ, ինձ կթաղեք  
բերանքսիվայր, որ էլ Սովետի  
երեսը չտեսնեմ...»  
Լեռ Կամսար*

**Էռնեստ ԵՍԱՅԱՆ**

**ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՉԸ**



Սրանից մի հիսու<sup>օ</sup>ն, թե<sup>օ</sup> հինգ հարյուր տարի առաջ ես մի երագ տեսա, որը հիմա անգամ հիշելիս նույնպատիպ սարսուռ է պատում ինձ: Սարսափ չեմ ասում, քանի որ դա երագ էր, բայց որ ամբողջ կյանքում այդ երագն ինձ հետապնդեց, ինձ պահեց այդ երագ-պատվանդանի վրա, փաստ է:

Սառը պատերազմի քաղաքականության ժամանակներում աշխարհ եկած սերունդներն ապրել են այդ սարսափը, կարևոր չէ՝ խաղաղ պայմաններում<sup>օ</sup>, թե՛ պատերազմների: Էնպես որ՝ էդ երագը միայն իմ սեփականությունը չէր, և ես տասնամյակներ շարունակ ինքս ինձ քողարկված ապրում էի, հավատալով, այո, հավատալով, որ մի օր այդ երագն իրականություն կդառնա, և մենք բոլորս, ամեն ոք և ամեն ինչ կանձանանք, օդում պայթած փուչիկի պես կանհետանանք և տիեզերքում հավերժաբար կսկսի թագավորել անգո-ամայությունը:

Ես ինձ բռնել էի այն հիշողության ու մտքի վրա, երբ մի հիսու<sup>օ</sup>ն, թե<sup>օ</sup> հինգ հարյուր տարի առաջ մեր դասատու ընկեր Սարգիս Սարգսյանին արդեն որերորդ անգամ միամտաբար հարցնում էի. «Ընկեր Սարգսյան, եթե Սովետական Միությունը և Ամերիկյան (Միացյալ Նահանգներն, էլի՛...) ատոմային ռումբերով իրար ուտեն, երկրագունդը պայթեցնեն, ոչ ոք և ոչինչ կենդանի չմնա, բա հետո<sup>օ</sup>...»: Ընկեր Սարգսյանը ծիծաղում էր, բայց իմ մարմինը աննկատ ու անտես սարսուռով էր պատվում... Պահեստային մի պատասխան էր առաջարկում, ապա անցնում աշխարհագրության ընդհատված դասին, մինչև աչքերիս միջով տասնամյակների վտառը անցներ տարիքիս մեջ, և Արթուր եղբորս ձայնը ինձ արթնացներ.

- Արա՛,- սա հայերիս՝ շատերիս համար ոչ թե անձնական, այլ դիմելաձև է,- ասած՝

## Գեղարմ Աշուն 2017

մեր Նաիրա քեռակինը, էլի անջատվեցի՞ր...

- Ի՞նչ...

- Մի բեռնատար է պետք. վեշ-մեշերը տանենք Մարտունի...

- Հա՞...

Հա: Հո աշխարհի վերջը չէ: Տղա է էլի: Գնու՞մ է, հայրական տնից հեռանու՞մ է գյուղի էլեկտրիկը, թող գնա, չնայած քո հայրական տան մի պատն է հետը գնում, բայց հո աշխարհի վերջը չէ: Հիմա նստենք, շիտակ խոսենք. նա որ քաղաք չգնար, համույթի դեկավար կդառնա՞ր, Անդրկովկասի դուդուկահարների փառատոնում մրցանակ կշահե՞ր, Լիբանան ու Մարսել կտեսնե՞ր... Արվեստի վաստակավոր գործչի կոչում կստանա՞ր... Չէ: Գե՛ չէ ու ջան: Եղբայրս որ իսկական հերոս էր՝ դուդուկն ու բեմը չհաշված: Հարցրեք՝ կասեն: Մարտունաբնակները: Երբ սկսվեց Արցախյան ազատամարտը, մի օր թուրքը, քաշաբխայի աջակցությունից օգտվելով, շրջանցեց ճակատամասը և շրջափակելով «Ռաֆո» ուղեկալ-դիրքը, վաղ առավոտյան չորեքկողմյա անակնկալ հարձակում գործեց մարտունեցի տասներեք երկրապահների վրա: Խմբի հերթապահ-տղերքը ընկան մի քանի րոպե անց, մյուսները բլինդաժից դուրս գալով՝ շրջանաձև դասավորվեցին և կենաց-մահու մարտ սկսվեց հիսուն մետրի վրա: Արմաշաղախ երկրապահները վեց ժամ ու կես դիմադրեցին, մինչև թուրքից առած մեր տանկը եկավ և հյուսիս-արևելյան խրամատում քաքնված տասնյակ վարձկան-մոջահեղներին հնձեց արկահարելով:

Դա ևս աշխարհի վերջը չէր, այդ պատմության վերջն էր:

Արա, դե մեծ Ալիևին հալալ է, էլի. չնայած արդեն մոտենում էր Ազերստանի «վերջը», շուտափույթ զինադադար առաջարկեց՝ խորամանկաբար այն անվանելով «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»:

Բանակը մեջքը շտկեց:

Միայն ափսոս, շատ ափսոս, որ ինքնահավան ազգ ենք անհատապես: Այսինքն՝ ամեն ինչի նկատմամբ ուշադիր և անհանգիստ...

- Հե... հե...հե՛յ բըլանց Մելսիկ...

- Ասա՛, գրող ախպեր...

- Ինչի՞ց սկսենք...

- Ումից...

- Հա՛, ճիշտ ես ասում:

- Սովետը քանդվեց-քայքայվեց, թուրքերի հետ կռվեցինք, պրծանք (թե՞ չպրծանք... արա թուրքից պրծումն կա՞, դրանց մամուն... ամեն բան սեփականաշնորհվեց, ում դանակ սուր էր՝ ուզած տեղից կտրեց առավ... ես ու դու (ու մեզ նմանները) միայն ժամանակ ստացանք, ժամանակ, ВРЕМЯ, ոսկի՛... այ հոպ. վաշ մած, յա կամ թե չէ՝ անանըն սիքիմ...)

- Ասում են՝ Բաղդասարովը տունը ծախել, քոչել է Ստեփանակերտ, լսե՞լ ես...

- Հա՛, գնացել է ի՞նչ անի...

- Շուկայում կանաչի է ծախում. մոտիկ գյուղերից կանաչի բերողներից փունջը հարյուրով առնում է, երկու հարյուրով ծախում...

- Ցողիկն ու իր ախպեր Լևիկն էլ են գնացել. կռվել են թշնամու դեմ, պրծել, թողել գնացել: Հիմա Ռուսաստանում են:

- Գնալուն դեմ չեմ՝ իր գործն է, բայց որ էս գյոգալ երկրի սերը մերժել ու խլեք-վաղա-ին է թամահ արել, ա՛յ, դա՛ չեմ կարող տանել. Իր պապենական տան թիթեղավարսերը քամին քանդել, լցրել է Մուրադի հայաթը: Գուռ-ցանկապատ չկան՝ երևի պետք է եղել, քանդել-տարել են:

Ա՛յ, ակամջը կանչի շամշադինցի Ռաֆոյի. «Մրա վերջը հի՞նչ պիտի լինի...»:

Վե՞րջը...

## Գեղարմ Աշուն 2017

Մի հինգ, թե հինգ հարյուր տարի առաջ, Ամերիկաներից եկավ Բաքվից բռնագող-թաժ ու ամերիկայաբնակ դարձած մեր համագյուղացի Պուդոնց Սիրոժը: Գնացի տե-սության՝ շատերի պես և տեսնելով վերջին տասնամյակների ազգափախությունը, հարց-րի. «Չյա՞ժ Սիրոժ, իսկապե՞ս էդ Ամերիկան էդքան դրախտայի՞ն երկիր է, որ բոլորը գնում են...»

- Վա՛յ,- ծնկներին խփեց դրսեկը,- արա, ես քեզ մատաղ ինձ, քաքիս Ամերիկայի ամենալավեն ռիխումը, հինչ կա՞ ընդեդ. լիրփ ու կապը կտրածի երգիրա... կյոդ ու ավա-զակու երգիր, խրելքտ էն տիլիվիզորներեն չըքինի, էտ սաղ պրոպագանդայա... մըռնին մեր Ղարաբաղա ջանեն. էս ա իրեք տարե յա պենսիաս թուփըմ ըրալ, վեր կյալ-քիմիլի բիլեթ տեռնա... եկալ ըմ մեր Ջարգամարաքն ու երե ճուրը տըռեսամ, կարոտս առնին, քի-նին մըռնին...

Տեսնես մեռա՞վ Սպիտակաշենում ծնված, Ամերիկաներում մեռնելով ապրող Պու-դունց Սիրոժը: Տեսնես Դերունց Գարեգինը, Նանունց Նազարի թռնեբը, Դարգունց Կոստի երկրորդը կամ Ամերիկայում բնակություն հաստատած իր նախկին համագյու-ղացիները եղա՞ն նրա թաղմանը... Տեսնես... այ ակամջող կանչի, շամշադիցի Ռաֆո...

Պուդունց Վալոն Երեթաղում ապրում է՝ գոտկից մի խուրձ բանալիներ կախած, դրանց զնգզնգոցից արդեն հոգնած:

- Նաչալնիկ,- հարցնում է Մուրազը,- քանե՞ կաքինետ օնիս...

- ...,- երկար ու թախծապարույր նայում է հարցնողին ու լացախառն ասում.- Հինչ անի՞մ... հունց անի՞մ. էս մինը (ցույց է տալիս) մեր Երվանդ Ամունց տան բանալին ա, էս մինը՝ Գացովենը, էս մինը՝ Ռաշիդանցը, էս մինը՝ դերունց Շահենինը, էս մինը... է՞ս ումն էր, արա... տվել են, ասել՝ տներին նայիր, կզանք՝ կզանք, չե՞նք գա... քեզ հալալ...

Ու էդպես գյուղի օջախներից շատերը կուրացան, այլևս լույսը չվառվեց դրանցում: Տերերը գնացել էին հեռու-հեռու՝ Ռուսաստաններ ու Եվրոպաներ, ու պետություն-պա-պան չի ասել՝ ո՞ր...

Ով ցանկացել՝ գնացել է, ով չի կարողացել՝ մնացել է:

Պատճառները տարբեր են. անհանդիմանելի:

- Էս դեկավարներն տըռեսնաս հինչըն մըտածում,- ամեն ազամ բռնացնում է ինձ Ռա-մազը,- էս վեր շենին ջահելներն տոնը մինը տուսումն ա, երկու-երկու տուսումն ըն, հիմս էլ ընտանիքներավ ըն քոչում, էս երգիրը հուվ ա պրիլլան, հուվա՞ հացահատիկ ցաննան-հընձրլան, հուվա՞ խոզ ու կավ պըրիլա՞ն... էն մնացածը հալալ ասում չում...

- Դեկավարը հինչ անե՞, բանակ ու պետություն պահե՞, թա՞ ետ տըռնա քամակը հվաքե...

- Պա՛...,- նեղանում է, կարծես նեղանում է իմ մարտական ընկեր Ռամազը,- ես գիդա-ցալ ըմ թա տու խելունք մարթ ըս. ասում ա՝ հինչ անե՞... գյուդում չը՞ս՝ հինչ անե... օրե՞նք... օրենք ա պետք, գործող օրենք: Ռազմական դրությունը վերացվա՞ծ ա, հա՞, ասե է, ասե՞ տըռեսնամ... հունց թա՞ հինչ անե... յանի ասում ըս պետությունը օգում ա թո-դե վուչ երգրան տուս կյան, տուս ըն կյա՞մ... ա լավ է, ես քինին, գործըս մնաց...

Օրորվելով հեռանում է: Ես մնում եմ թթենու տակ նստած:

Օրը նույնպես օրորվում է, երկրագունդը՝ նույնպես: Իմ հայացքի դեմ է Ղալունց Եր-վանդի տան ճակատամասին, ժանգոտվող մեխից կախված մանգաղը, որն այլևս ոչ ոք չի բանեցնի: Ուր նայում ես՝ լացդ գալիս է: Առաջ ամայացող Երեթաղ էինք ասում, հիմս ողջ գյուղն է էդ օրին:

Էս սպանիչ մտքերի տակ երկու թթենու թուփը թափ տալ ցանկացող ուսուցիչը երկար նայեց աջ ու ձախ, վերն ու ներքև, աչքը դարպասի կողմ՝ թե եկող կլինի: Բայց ոչ ոք չե-կավ՝ չապասված քամուց բացի: Քամին թուփ կուտի՞... ուտելը՝ չգիտեմ, բայց լավ կթափի...

- Այ ախճի,- ներքին զայրույթը զսպելով, արդեն որերորդ անգամ կնոջը դիմեց ուսու-

## Գեղարմ Աշուն 2017

ցիչը,- գնա տես էդ Մալետան, Սուսանը կամ Մանուշն ինչ բանի են, ասա մի քանի բուպե-  
ով գան օգնեն՝ էս երկու թթենին թափենք...

- Արա, թո՛ղ, ռադ արա գնա, մի լիտր օղու համար... էդքան առողջություն չկա... գյու-  
ղում ո՞վ կա, որ կանչեմ գա՛ օգնի: Մոռացե՞լ ես, որ Երեթաղում երկու գույգ ու մի կենս  
մարդ ենք մնացել. մահացել-գնացել են, զոհվել-պրծել են, թողել-գնացել են, իսկ ով չի  
գնացել՝ գնացել է գործի՝ ծառայության... էն ա երեք տղաներդ մոտդ պահեիր՝ թուրք էլ  
թափ տային, գլուխ-գրպանդ էլ... ինչ ուզում ես՝ արա, ես գործ չունեմ, հարյուր տեղից  
ցավ եմ քաշում, ինձնից ի՞նչ ես ուզում, թող գոնե հիմա շնչեմ էլի, ի՞նչ ես նստել շնչիս,  
հը՞...,- ու կինը լաց եղավ:

Ամուսինը լռեց, ոչ թե նրա համար, որ ասելիք չունեիր, այլ մտածեց, թե ամեն օր իրար  
ուտելը ֆիզիկապես սպառվել է նշանակում: Գյուղից բոլոր հեռացողները կանգնեցին  
նրա աչքի առաջ, անմեղ ու մեղավոր և նա միայն ինքն իրեն ասաց.

- Գյուղատնտես էիր, քո գյուղին շա՛տ պետք էիր, հիմա քաղաքում կանաչի ես վերա-  
վաճառում, միայն քեզ՝ գլուխ ու փոր պահելու համար, չէ՞... Հնձվոր-հացագործ էիր, հի-  
մա Ստեփանակերտում այրադացի պարկերն ես շալակում... Ուսուցիչ էիր՝ մի պաշտո-  
նավորի կատարածու ես դարձել... Տաքսավարում ես՝ ամեն ծանոթի հեռվից ողջունելով,  
որ կեսօրին գյուղ հասնելու համար գրպանդ խոթի մի երկու հազարանոց... Անգամ գյու-  
ղի հարսանիքն են տանում Նադեժդայենց սրահում անցկացնում՝ մի քանի հարյուր հա-  
զարի վրա թքած ունենալով... ո՞ր մեկն ասես: Հիմա դու ինձ մի քանի հոգի տուր, թուրք  
օգնեն, թափեն, էլի հախդ առ... բայց հոգիս ես առնում, այ շան տղա՝ իմոնցից սկսած  
մինչև դու...

Սա, թշնամու ասած չդառնա, մաքուր մագոխիզմ է, ու՞մ համար ենք կորցրել այնքան  
ջահել-ջողովին, ու՞մ համար ենք էս երկիրը շինել... որ հիմա հափուռ-հափուռ, փունջ-  
փունջ չվե՞ք... Մոսկվայում ու Յորքում ձե՞զ են սպասում... լավ, ներողություն, էս ո՞նց է՝  
ով գնում՝ ինամարկան տակին, փողերը ջեբում դարս-դարս գալիս է, ամառը մի աղայա-  
վայել հանգստանում, հարյուր-հարյուր բաժանում հարազատ ու բարեկամի ու թողնում  
գնում: Չուզողի խոսք չէ, թող չուզողը ես լինեմ, բայց դու ինձ ասա՝ Մուրադիկը որ հիվան-  
դացավ, Վիտո դային որ կտակ գրելու դուռ էր ուզում բացել, էն ֆլանը, էն՝ ֆրստանը... մե-  
կը եկա՞վ ասի. «Այ հեր, ինչի՞ց ես բողոքում, դեղորայքի փող ունե՞ս, կամ՝ լոխ լավ ա ին-  
նան...»

Չեկան: Գային էլ՝ մեկ է, դազաղը դրվածին ո՞վ է ետ տուն բերել, որ իմոնք ու քոնոնք  
բերեն: Չհավատաս: Բայց որ մարդը հողից խռովել է, չկասկածես, աստված էլ մարդ-  
կանցից է խռովել ու լավ էլ արել է: Չխռովի՞... դե՛ եկեք սաղս քոչենք, ընկնենք երկրե-եր-  
կիր, եկեք մեր գերեզմանոցները մացառուտների մագիլներում թողած, հողից խռոված՝  
քաղաք ճողոպրենք: Չչարչարվենք, չքրտնենք, չսպրենք... գնանք Ստեփանակերտում  
դիվանագետ աշխատենք (դիվանի վրա ողջ օրը, հեռուստացույցի առաջ, պառկած):

Քոչե՞նք, ու դա ի՞նչ կոչենք:

Հետո էլ թե՛ եղեռն է եղել. սև, ճերմակ, մոխրագույն...

Հիմա էլ է՞ եղեռն: Հիմա էլ է՞ «թուրքը գալիս...»: Երկիր ունե՞ս՝ ունես, գորք ու գենք ու-  
նե՞ս՝ ունես, հող ու ջուր ունե՞ս՝ ունես, բահ ու գերանդի ունե՞ս՝ ունես, բա հիմա՞ ինչու եք  
գնում:

- Չէ, չէ... ոչ մի դեպքում, գնում եմ Ռուսաստան:

- Ի՞նչ կա Ռուսաստան:

- Բա էստե՞ղ ինչ կա...

- Բան չկա՞... բա թողե՞լ եք, որ...

- Լավ, ընկեր, հո աշխարհի վերջը չէ: Ի՞նչ ես ոտ ու ձեռ ընկել: Աշխարհը ինձանով ոչ  
սկսվել, ոչ վերջանալու է: Կգնամ, մի գործ կգտնեմ-կանեմ... Երկիրն էլ ձեզ լինի, պաշ-

## Գեղարմ Աշուն 2017

տոնն էլ, թուրքն էլ...

- Կզնաս, կզնաս, բա ի՞նչ... բայց ոչ մի տեղ չես հասնի, ոչ մի բանի չես հասնի, գիտե՞ս ինչու... չգիտես: Որ իմանաս, ոչ Մոսկվայի անուն կտաս, ոչ Լոսի... քոնը, քո նմաններին միայն գնալն է...

Լավ, ենթադրենք գնացիր, բա էն խոզարած ախպորդ ի՞նչ ես անելու: Էն մի կերպ մարդու տված քրո՞ջդ ինչ ես անելու... Էն փոխնախարար ժամանակդ շինել տված հորդ գերեզմանաքա՞րն ինչ ես անելու... Հետո տանելու՞ ես... հիմա, եթե էդպես է գնա, բայց էս թթուն շալի տուտը բռնիր, թուրք թափենք... սա մենակի բան չէ, մենակ թուր չես թափի: Մենակ սվաղ չես անի, ցորեն չես տանի աղաց կամ արտ չես հնձի: Մենակ նույնիսկ հաց չի ուտվում, միայն մի բան է մենակ լավ ստացվում՝ մեռնելը:

- Այանյան, մի նեղվի՛ր, ամեն ինչ լավ է լինելու, մի նեղվի՛ր...

- Ի՞նչն է լավ լինելու... ի՞նչն է լավ լինելու... կամ էլ ինչի՞ համար, ու՞մ համար, ու՞մ է պետք էդ լավը, երբ մենակ ես մնում՝ թեկուզ դրախտում: Ծնողներդ մահանալով՝ հեռացան անդարձ, որդիներդ ինքնուրույն կյանքով ապրելու ցանկությամբ ցրվեցին աշխարհով մեկ... մնացիր դու՝ քեզանից էլ վատթար փնթփնթան կնոջդ հետ: Աջ ու ձախ էլ՝ քո օրին են, երեխաները՝ Ռուսաստաններում, իրենք՝ մենակությունից կախված: Թռռներդ մեծանում են առանց պապ ու տատի սեր ու գովանքի: Ավագ ու կրտսեր՝ ընկերներդ շար են բռնել երկրից դուրս՝ Ստավրոպոլից մինչև Կամչատկա, ի՞նչը պիտի լավ լինի... ու՞մ համար պիտի լավ լինի: Միայնակ ու մենակյաց գյուղաբնակի՞: Դու էդ քաղաքների աշխուժությանը չխաբվես, հա՛... դա փող գտնելու ու ընտանիք պահելու երեսից է: Բայց, Աստված մի արասցե, ասեն՝ թուրքի սամալյոտը Արցախի օդում է...

- Այ մարդ, ի՞նչ թուրք, ինչ՝ սամալյոտ... խի էս ո՞ր թիվն է, հիմա քսանմեկերորդ դարն է, «Իսկանդեր» ու «Եվրախորհուրդ» գոյություն ունի, ՆԱՏՕ և Դոնալդ Թրամպ, ՀԱՊԿ ու ԵՏՄ, մեր սահմանը հսկվում է օր ու գիշեր... Ի՞նչ ես պանիկավատ անում...

- Չէ՛, քո մնալն այլևս օգուտ չի տա, քո գնալը՝ շահ է: Եթե էն գլխից, ինչպես խորհրդային ողջ իշխանավորներն էին հեռացել Արցախից՝ բաժվարից սկսած մինչև միլիցիոներ, պատերազմի շորշոփն առնելով, քեզ նմաններն էլ վաղուց հեռացած լինեին այստեղից, այսքան ծանր չէր լինի կռվել-մեռնելն ու մեռնելով ապրելը:

Այանյանը շրջվեց՝ շալի տուտը բռնող փնտրելու գուր ակնկալիքով: Նայեց Մուրադենց տան կողմը, Մենուիունց տան կողմը, բայց գուր... Ամեն մեկն իր գործին էր՝ ուներ, թե չուներ: Հիմա ոչ քո դարն է, ոչ քո տեսած ոսկեդարը: Հիմա անկախ, ազատ ու մեկ էլ չգիտեմ, թե ինչի դար է, գնալ-գալու դար չէ, տուրևառի դարն է՝ թաքուն, որ ուրիշ մեկը չիմանա:

Լա՛վ... քո դարը չէ՛ քո դարը չէ: Բայց հո աչքերդ բաց չէի՞ր գնալու Դըշլաղի գերեզմանատունը պառկել-մնալու: Մի բան պետք է անես՝ ապրես...

Գնաց թթան շալը փռեց թթնու տակ, մեկանգամյա պարկեր ուներ՝ ծածկոցի տակ դարսած, բերեց մեկ-մեկ երկտակեց, կցմցեց և հոգնած ու քրտնաշաղախ գնաց պնդուկենու տակ դրված նստարանին նստելու: Ծխելու:

Նրա համար արդեն, նրա նմանների համար արդեն, նրա տարեկիցների համար արդեն աշխարհի վերջն էր, իր ու իր աշխարհի վերջը:

Ասում են՝ մարդ էս աշխարհից հեռանալիս հասցնում կամ չի հասցնում մի բանի բառ կամ խոսք ասել: Ինձանից չսպասեք նման խոսքեր, ես իմ ասելիքը, քանի դեռ չեմ մեռել, հիմա եմ ասում:

- Պըրանիմ ծեր նամուսը...

2017



**Մանվել ՄԻԿՈՅԱՆ**



\* \* \*

Ժամանակը մետամորֆոզների է ենթարկվում,  
փոխում է դեմքն ամեն վայրկյան...  
Տազնապների ու հույզերի շրջապտույտում  
չենք հասցնում զանազանել,  
սակայն երբեմն տեսնում ենք  
կարմրած աչքերը հսկա մի հրեշի,  
որի բերանից գոլորշի է ելնում:  
Հետո, երբ հանգիստ ենք իբրև թե,  
մեր աչքերի առջև  
այդ գոլորշուց առաջացած  
պղպջակներ են թռչում,  
որոնք պայթում են հերթով  
մեր հայացքի ջերմությունից  
ու մեզ ընկղմում երազների մեջ:  
Եվ ժամանակը մեզ է այցելում  
հրեշտակի անմեղ տեսքով  
ու տանում աննկատ այն ոլորտները,  
որտեղից վերադարձ չկա:  
Երբ բացում ենք մեր աչքերը,  
մռռանում ենք իսկույն,  
թե որտեղից ենք վերադարձել,  
քանզի այդպես հեշտ է ավելի  
պատասպարվել ժամանակի լուսանցքներում  
և չսպասել այն օրվան,  
որը գալու է անխուսափելի՝  
առանց նայելու մեր սպասելուն:

## Գեղարմ Աշուն 2017

\* \* \*

Ես ամեն օր ծնվում եմ  
այգալույսի առաջին շողերից բացվող  
դաշտային ծաղիկների առէջներում,  
շնչում բույրերը նախնական՝  
մաքուր, ինչպես  
մանկան կարոտի առաջին թրթիռը,  
ինչպես ներշնչանք՝  
քեզ վեր բարձրացնող  
ոլորտները երկնային...  
Ես ապրում եմ Աստծու օրը՝  
Իմ երակներից ավյուն ներարկելով  
բոլոր ծառերին ու ծաղիկներին,  
լցվելով նրանց հղացման ձայներով,  
արևամետ խոյացման  
համառ սլացքով,  
և մահանում  
բոլոր թիթեռների թևերին՝  
նրանց վերջին  
թևաբախմանն ընծայելով  
սրտիս զարկերը վերջին...  
Ես ամեն օր ծնվում եմ  
դաշտային ծաղիկների առէջներում:

\* \* \*

Երբ լույսի շղաշով պատված  
խավարի գնդիկներ են թափանցում աչքերիցս ներս,  
հետո դանդաղ ներծծվում արյանս մեջ,  
հղացումի գույները խամրում են աննկատ՝  
աղճատված հույսի թունավոր անձրևից,  
կեղծ են թվում բնության ներկերը բոլոր,  
նույնիսկ համառությունը ծառերի բողբոջների,  
բացված ծաղիկների հաշվենկատ ամրությունը՝  
պտուղ դառնալու մտասևեռմամբ:  
Ես կտրում եմ երակս,  
արյանս կաթիլներն ընկնում են ջրի մեջ՝  
հանգիստ ու նվաղուն երաժշտությամբ:  
Փակում եմ աչքերս,  
քայլում ծաղկաշատ դաշտերով,  
ժամանակն անցնում է  
խելահեղ արագությամբ,  
հասնում եմ ոլորտները մաքուր ու նախնական,  
երբ գույները հիանում էին  
իրենց անհերքելի հյութեղությամբ,

## Գեղարմ Աշուն 2017

Երբ անմխիթար էին մեր աչքերը,  
իսկ գնդիկները խավարածին  
պայթում էին հեռվում՝ մեզ չհասած:  
Բացում են աչքերս, նայում դաստակիս՝  
փակ է երակս, արյան հետք չկա ու նաև սալի...  
Հայելին հուշում է,  
որ հերթական սալին է գոյացել  
աչքերիս մեջ ու համառորեն ինձ չլքող  
հոգուս անկյուններում...  
Հղացումների գույները  
այրվում են երկնքում:

\* \* \*

Ես միշտ լսում եմ անկման ձայները,  
որոնք շունչ ու ավիշ են ներարկում  
վերելքը հաղթահարելու  
անդարձ համառությանս:  
Երբ հնչում է ականջներումս  
աղմուկն անհողաբաշխ,  
ես ավելի երանությամբ եմ վայելում  
թավշե մեղեդին լռության:  
Աչքերս չեն փակում նույնիսկ քնելիս,  
որպեսզի ավելի զորեղ տեսնեմ  
ամենակույ խավարը՝  
լուսի արժեքը  
մինչև վերջին բջիջս զգալու համար:  
Ես միշտ տեսնում եմ  
սատանայի դեմքն այլանդակ  
և ավելի անվարան եմ տարալուծվում  
հրեշտակների անկրկնելի ժպիտներում:

\* \* \*

Լսում եմ կրկին  
տիեզերքից եկող շրշյունները լուսի,  
որ շոյում են մարմինս  
ձեռքերով նրբամաշկ ու տաք,  
շոյում են կուպերս,  
ու բացում են աչքերս,  
տեսնում մրջյունների  
խորաթափանց հայացքը՝  
ինքնավստահ ու ուժեղ:  
Թվում է՝ կարող եմ վերադասավորել  
շենքներն ու այլ կառույցները՝  
փողոցի երկու կողմերում

## Գեղարմ Աշուն 2017

անկանոն ցփնած:  
Շոյում են ականջներս,  
լսում եմ մեղեդին նորածիլ բույսերի՝  
հեռո՞ւ հեռուներից:  
Ու թվում է՝ կարող եմ ներարկել այն  
ախտակիր մարդկանց,  
որպեսզի մաքրվեն նրանց հայացքներն  
առօրյա տագնապների  
թանձրացող տիղմից:  
Ես թեթև եմ զգում  
ինչպես պատրանքը՝  
վերջին հույսի թափանցիկ քողով,  
տարրալուծվում շրշյուններում լույսի,  
որպեսզի չտեսնեմ երբեք  
լուռ քմծիծաղը  
լկտի ճակատագրի:

\* \* \*

Ես անցնում եմ  
տարբեր գույների լույսերի  
կարծր թվացող սյուների միջով՝  
վայելելով պատմեչների հաղթահարման  
սնամեջ պատրանքը,  
դեմքիս զգալով փշրվող հարթության  
թարմացնող շոյանքը,  
աչքերումս պահելով  
հեռացող լույսերի խրճերը բարակ,  
որպեսզի տաք լինեն մշտապես  
հիշողություններիս գույները՝  
գորշ օրերի գրոհներից  
պաշտպանվելիս...  
Ես անցնում եմ լույսերի  
կանոնավոր սյուների միջով՝  
իմ ուրվագիծը թողնելով  
նրանց մտապատկերում,  
որպեսզի երբ հեռու լինեմ,  
անվերադարձ հեռու,  
իմ փոխարեն շնչի նա  
և ժպտա ժամանակին:

## Գեղարմ Առն 2017

\* \* \*

Հողի և երկնի լուռ զուգավորմամբ  
ծնված ծաղիկներ.  
Ծաղկաթերթերին ցողը վաղորդյան՝  
լույսի բերկրանքի զվարթ արցունքներ,  
և բույրեր գերթարմ, մաքուր, նորածին՝  
Սուրբ Աստվածամոր ժպիտով օծված...  
Ոչինչ չես լսում,  
միայն մեղեդին խոտի ու ծաղկի,  
որի մեջ հոգիդ՝ միրհելուց հետո  
միայն կընկալի խորհուրդը սիրո  
և գեղեցկության...  
Այս ամենը գեթ զգալու համար  
արժեր աշխարհ գալ.  
Վա՛ռք Երկնավորին...

\* \* \*

Կտրում են դեռ մեր ծառի ճյուղերը,  
պատվաստում հեռում օտար հողի մեջ՝  
օտար ջրերով սնված ծառերին,  
ասում՝ թող արագ աճի մեր ծառը,  
թող արև տեսնի ու վեր բարձրանա:  
Տնքում է ամեն օր մեր Կենսածառը,  
մրմնջում, լալիս լուռ ու բարձրաձայն,  
ճկվում է սակայն հաճախ նա քամուց,  
խեղճանում անձրևից ու կարկուտից:  
Երբ օրորվում է անչափ ու սաստիկ,  
ասում են՝ ոչինչ, ճակատագիր է,  
փորձություններին թող նա դիմանա:  
Ու թուլանում է արմատն օրեցօր,  
դուրս ցցվում հողից՝ պապակ, ճաքչքված,  
իսկ օտար ծառին պատվաստվածները  
փարթամանում են ու ճկվում բերքից...  
Կտրում են դեռ մեր ծառի ճյուղերը՝  
ձեռքերով դավաճան ու դավադիր,  
-Ո՞վ է կտրելու ձեռքին այդ «ամուր»,  
որ մի օր հանկարծ մեր Կենսածառը  
չտապալվի խուլ հողներից դաժան:

**Ստվերների քաղաքը**

Օրը բացվում է նոր թրթիռներով,  
փորձում մոլորեցնել  
հմայքների խայտաբղետ գունապատկերում...  
Ես քայլում եմ փողոցով, զբոսայգով,  
հանդիպում է մեկը, ում պետք է ասեի,  
որ ուզում եմ շնչահեղձ լինել նրա գրկում...  
Պոկվում է ինձնից իմ ստվերը  
և թևանցուկ արած քայլում նրա հետ,  
ես առաջ եմ անցնում:  
Հետո հանդիպում է մյուսը,  
ու՜մ նույնպես նույն բառերն են ուզում ասել...  
Պոկվում է ինձնից երկրորդ սրվերս,  
թևանցուկ անում գեղեցկուհուն  
և քայլում նրա հետ...  
Հետո՝ երրորդը, չորրորդը,  
չգիտեմ էլ՝ ո՞րերորդը...  
Ստվերներս «փրկում եմ» ինձ.  
գեղուհիները ներս են թափանցում  
աչքերից միջով, հասնում սրտիս,  
արագացնում բաբախյունը՝  
գերհաճելի ռիթմով,  
իսկ ստվերս հանում է արագ պատկերը երանելի,  
թևանցուկ անում և քայլում նրա հետ  
առանց մտածելու, որ մնում են նրանք  
հիշողությանս գանձարանում,  
թաքուն նրանցից, ում ասել եմ ամեն ինչ,  
որ մի անգամ են լոկ ասում կյանքում:  
Այսպես շարունակվում է օրեր,  
ամիսներ ու տարիներ...  
Ես արդեն տեսնում եմ շատերին՝  
իմ ստվերների հետ թևանցուկ քայլելիս,  
սակայն զարմանալիորեն հայտնվում են նորերը՝  
ավելի հյութալի բույերով ու գույներով  
լցվում հոգիս և հեռանում ստվերներիս հետ...  
Ես ապրում եմ ստվերների քաղաքում  
և չեմ էլ մտածում, որ մի օր  
ինձնից պոկվելու է վերջին,  
ամենավերջին ստվերս...

**Լույսի ստեղծարդիա**

Երբ կարոտիս բազմագույն  
և անտեսանելի ճառագայթները  
բախվում են հայացքիդ  
սառցե ժայռաբեկորներին,  
նրանց բազմապատկվող ջերմությունից  
չի հալվում անգամ մի կաթիլ:  
Ճաք են տալիս բյուրեղյա հույսերի  
նրբակերտ սյուները բոլոր,  
ճեղքվում են նաև  
լույսերը հանգավորված,  
սկսվում է լույսի ստեղծարդիան,  
որն սպառնում է ամեն վայրկյան  
անդնդախոր տազնապով:  
-Որտեղի՞ց ես կլանել  
բևեռային օտար քամիներն ու  
անդիմակայելի սառնամանիքը,  
երբ մեկ հպումից անգամ  
ժամանակին հալվում էին իսկույն  
ամոթխածության եղյամներն աչքերիդ,  
և մշուշված հայացքդ  
վեր էր բարձրացնում ինձ  
անդունդներից հուսալքության՝  
տանելով ոլորաններն անսահմանության:  
Ես կրկնում եմ ամեն վայրկյան  
քո անունն աղոթքի պես,  
որը կհնչի ականջներումդ՝  
ուր էլ որ լինես,  
դու կհիշեց վերջապես,  
թե ով ես իրականում,  
կհիշես ու կարձագանքես  
ու լսելով քո ձայնը՝  
ես կմոռանամ  
անդունդների խորությունը:

\* \* \*

Ես քեզ համար այնքան եմ թանկ,  
որքան իմ միջից առկայծող  
քո հոգու լույսի արտացոլանքը:  
Դու անունդ սիրում ես  
միայն այն ժամանակ,  
երբ լսում ես իմ շուրթերից,  
դու հիշում ես, որ մարմին ունես,

## Գեղարմ Աշուն 2017

միայն այն պահին,  
երբ հավում եմ քեզ:  
Ես ինչպե՞ս դիմանամ  
այս դաժան դատավճռին՝  
չհեռանալ երբեք կյանքից,  
որպեսզի դու չմոռանաս,  
որ անուն ունես ու մարմին:

### Կարոտ

Երբ դատարկ է ներսս,  
և լռել է հոգիս,  
ես չեմ լսում ոչինչ,  
քանզի չկա թեկուզ  
չնշին մի արձագանք  
թաքուն իմ խորքերից:  
Քո պատկերն է միայն,  
որ կարող է հանկարծ  
շնչավորել ձայներ  
հեռու և շատ մոտիկ...  
Միայն քեզ եմ փնտրում,  
ու քո ձայնն է միայն  
փրկությունս միակ,  
երբ դատարկ է ներսս  
և լռել է հոգիս:



**Վլադիմիր ՄԱԼՅԱՎԻՆ**  
*/Ռուսաստան/*

**ՉԺՈՒԱՆ-ՑԶԻ.  
ԱՆՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

*Չժուան-ցզիի դիմակները,  
մարդու կերպարանքները*



Հույները մեզ թողել են ժամանակի գետի և անանց ճշմարտության, որպես ինչ-որ հավերժորեն հիշատակելի մի բանի, որ ընդմիշտ կենում է մոռացության հոսքում, հակադրությունը: Սակայն անդունդը դրանց միջև երբեմն այնքան էլ անհաղթահարելի չի թվում, նույնիսկ ի հեճուկս բանականության փաստարկների՝ երևակայությունը կարող է մեզ հուշել, որ անպարագրելի հեռանկարում ժամանակը խտանում է ի հավերժություն, գետը թափվում է օվկիանոս, ավելի ճիշտ՝ վերադառնում է դեպ իր ակունքը: Ժամանակի աշխատանքն, ըստ էության, երկիմաստ է՝ Լեթայի անաղմուկ շիթերն անդադար լվանում են «ակնթարթների պղտորությունը»՝ մերկացնելով անհունի անսասան հանգիստը, և անդադրում թաքցնում են անհունն անցողիկի խռովահույզ ալյաց տակ: Պատմության մեջ կան անուններ, որոնց նշանակությունը կռահվում է լոկ ժամանակաց անսահման հեռանկարում: Առեղծվածային անուններ, ոչ թե նրանց հետ կապված իրավիճակների շնորհիվ, այլ այն պատճառով, որ դրանք անպարագրելիորեն գերազանցում են դրանց, ամենայն ինչից գերիվեր այն պատճառով, որ դրանք բացում են ժամանակի քողն անցողիկի և առօրյայի մեջ, այս աշխարհի փոշում: Անուններ, որ մտնում են պատմության մեջ՝ որպես հավերժության ուղեմիջներ: Դրանց տերերն անցնում են աշխարհի առաջ չհասկացված, իսկ հաճախ և՛ աննշմար: Նրանց մեջ այլ, աշխարհիկ ուղիներից հեռու ճակատագիր է, որքան որ քիչ բան են նշանակում նրանք իրենց սերնդի համար, այնքան առավել նշանակալի են բոլոր ժամանակների համար: Որովհետև, ինչպես ասել է բանաստեղծը՝ նրանց «ծոցն է հոսեցրել

ժամանակն այն ամենը, որ ընթացել է ալեհատի ետքից»: Այդ անունների մեջ կա և այսպիսինը՝ Չժուան-ցզի: Չժուան-ցզիի անունն է կրում հին Չինաստանի ամենամեծ փիլիսոփայական տրակտատներից մեկը, որ դասական ավանդույթի հիմքում է ընկած: Հիմքեր չկան կասկածելու, որ Չժուան-ցզին (նրա իսկական անունն էր Չժուան Չժու)՝ իրական պատմական դեմք է: Բայց տեղեկություններն այս մարդուն ասին ծայրաստիճան աղքատիկ են և սերում են աղբյուրներից, որ որպես հուշագրային վկայություններ՝ այնքան էլ վստահություն չեն ներշնչում: Հին չինական գրականության մեջ համառոտ և միակ կենսագրական տեղեկությունը Չժուան-ցզիի մասին իր «Պատմական գրառումներում» տեղադրել է հին Չինաստանի հանրահայտ պատմիչ Սիմա Ցյանը: Ըստ Սիմա Ցյանի տեղեկությունների՝ Չժուան-ցզին ապրել է մ.թ.ա. 4-րդ դարի երկրորդ կեսում և մահացել է հաջորդ հարյուրամյակի սկզբում: Այն ժամանակ, որ ավանդաբար կոչվում էր «Մարտնչող թագավորությունների» («Չժանգո») դարաշրջան, հին Չինաստանի տարածքում գոյություն ունեին մի քանի ինքնուրույն պետություններ: Չժուան-ցզին ծնունդով Սուն փոքրիկ թագավորությունից էր, որ տեղակայված էր Խուանխեի հարթավայրի հարավային մասում, այն ժամանակվա չինական օյկունենայի (մարդաշխարհ) համարյա ամենակենտրոնում: Եթե Սիմա Ցյանին հավատանք, Չժուան-ցզին երիտասարդ տարիքում լաքե ծառերի պլանտացիաների տեսուչ է եղել, իսկ հետո չկամենալով իրեն կաշկանդել տիրակալական ծառայությամբ, գործից ազատվել է և ապրել «ազատ փիլիսոփայի» կյանքով: Նույնիսկ իր ժամա-

նակի գիտուն այրերի շրջանում նա առանձնանում էր «գիտելիքների համընդգրկունությամբ» (հատկանշական է, որ Սիմա Ցյանը տվյալ դեպքում գործածում է բարբառային «կույ» խոսքը, որ սերում է հարավչինական գրական ավանդույթից): Ահա, ուրեմն, և այն ամենը, ինչ մենք գիտենք Չժուան-ցզիի մասին Սիմա Ցյանի խոսքերից՝ պատմիչի՝ ըստ ծառայության պարտավորության: Դրան կարելի է հավելել, որ վաղնջական տարեգրություններն իրոք որ հիշատակում են Սուն թագավորության մեջ Չժուան երևելի տոհմի մասին: Վերջինս դեռևս 7-6-րդ դարերի սահմանագծին ջախջախվեց այն բանից հետո, երբ նրա առաջնորդները մասնակցեցին պալատական հեղաշրջման անհաջող փորձին, և այդ ժամանակից ի վեր ընդմիշտ վերացավ քաղաքական բեմից: Ըստ այն դարաշրջանի սովորույթների՝ մեր փիլիսոփան պիտի համարվեր տապալված տոհմի շառավիղ: Բոլոր այլևայլ տեղեկությունները դառս փիլիսոփայի մասին (այդ թվում և՛ Սիմա Ցյանի հաղորդածները) արդեն վերաբերում են նրա գրական կերպարին, որպիսին նա ձևավորվում է իրեն վերագրվող տրակտատի տեքստից: Իհարկե, այդ կերպարը գրականորեն խորհրդանշական է: Սակայն ոչ մի «գրական» միտումնավոր խորհմաստ բան նրանում չկա: Չժուան-ցզին մշտապես դրսևորվում է որպես հասարակ, համեստ, իսպառ սնապարծությունից զերծ մի մարդ: Նա ապրում է աղքատության մեջ և նույնիսկ «սանդալներ է հյուսում», բայց իրեն նեղված չի զգում և ծիծաղելով հրաժարվում է դառնալ ամենագորտիրակալի խորհրդատուն: Նա գրուցում է աշակերտների, ընկերների հետ, մեկ էլ տեսար՝ ճամփեզրի առվի մեջ ընկած

## Գեղարմ Աշուն 2017

զանգի հետ, ծուկ է բռնում, ծիծաղում, պատմում է իր երազների մասին, հիանում է ջրի մեջ կայտառող ձկներով, կարճ ասած, ապրում է ժուժկալ և Վարպետի կոչման չի հավակնում: Մեծամտության, գիտական պարծենկոտության, հոգու պաղության և ոչ մի նշույլ: Զժուան-ցզին ապրում է իր հաճույքի համար և պնդում է, որ աշխարհն իրեն բերկրեցնում է: Նա ուրախ է նույնիսկ այնժամ, երբ թաղում է կնոջը և մահանում է ինքը: Նրա հեզմական և, այդուհանդերձ, ընկերական ժպիտը երբեք թույլ չի տա հնամենի դառսի դեմքը վերածելու անմասն և անհոգի «արևելյան իմաստունի» դիմակի: Զժուան-ցզին խորհրդավորությամբ չի խաղում: Սակայն նա զինաթափելու աստիճանի անանում է: Մենք ոչինչ չգիտենք ո՛չ նրա միջավայրի, որում նա ծնվել ու մեծացել է, ո՛չ նրա ուսուցիչների և աշակերտների մասին: Այդ ամենի մասին չգիտեր արդեն Սինա Ցյանը արդեն Զժուան-ցզիից երկու դար անց: Իհարկե, հնամենի փիլիսոփային պարուրող անանունության քողը հարիր է ավանդույթին, բայց և որոշակի իմաստով դառս փիլիսոփայի աշխարհայացքի պտուղն է: Իսկապես, հենց Զժուան-ցզիի աշխատություններից այնքան էլ հեշտ չէ որոշել նրա փիլիսոփայության մշակութային զուգահեռները: Օրինակ, Զժուան-ցզին սիրում է դիմել երաժշտական փոխաբերությանը, բայց (ի տարբերություն Կոնֆուցիոսի և այլ հին հեղինակների) ոչինչ չի խոսում այն մասին, թե որ երաժշտությունն է իր սրտով: (2) Նրա զրույցները ժանրերի և ոճերի այնչափ մոլեգին խառնուրդ են, որ կարելի է լոկ ապշել, թե որ գրական ավանդույթը կարող է իր մեջ ներառել այդքան բազմադեմ գրողի: Զժուան-ցզին մեկ ան-

գամ չէ, որ խոսում է իր իդեալական միջավայրի մասին, բայց մեզ մնում է սոսկ կռահել, թե նա հասարակության որ տեսակը նկատի ունի: Ավելի հաճախ նա խոսում է «իսկական մարդու» իր իդեալի մասին, բայց ամեն ինչ նույնքան մշուշոտ է: Ի՞նչ կարելի է ասել, օրինակ, այսպիսի դիմանկարի առթիվ. «Յնության իսկական մարդիկ չգիտեին, թե ինչ բան է կյանքից բերկրելը և մահից երես թեքելը, չէին հպարտանում լույս աշխարհ գալու համար և չէին դիմադրում աշխարհից հեռանալուն: Վերացած գալիս էին նրանք, վերացած գնում էին՝ հասու չլինելով սկզբին, մտքով ձգտելով վերջին, ուրախանալով այն բանից, որ տրված է իրենց, և ինքնամոռաց վերադառնալով իրենց բնույթին: Այդպիսի մարդկանց բանականությունը խորասուզված է մոռացության մեջ, կերպարանքն անվրդով է, մարմինը՝ վսեմաշուք: Ձուվաշունչ, հանց աշունը, և ջերմին, հանց գարունը, նրանք իրենց զգացողություններում հետևում էին տարվա եղանակների ընթացքին: Նրանք անսահման ներդաշնության մեջ էին աշխարհի հետ, և անհայտ է, թե որտեղ է նրանց սահման դրված...»:

Զժուան-ցզիի հերոսները նույնիսկ ոչ այնքան տարօրինակ են, որքան հենց անհայտ մարդիկ են, դե, թեկուզ այն պատճառով, որ «անհայտ է, թե որտեղ է նրանց սահման դրված»: Բայց և, ընդ որում, հենց նույն պատճառով, ո՞վ կասի, թե նրանք հավերժորեն անհասկանալի կամ անըմբռնելի մարդիկ են: Չէ՞ որ նրանք՝ սահման չունենալով, կարող են ամենուր լինել: Դե մի՞թե և մենք՝ ինքներս, չենք կարող այլ դառնալ, համանման այն բանին, ինչպես արթնացող մարդը նման չէ նրան, ում նա տեսել է երազում: «Եվ դու և ես՝ դա

## Գեղարմ Աշուն 2017

լոկ երազ է,- ասուն է Չժուան-ցզին իր պերսոնաժներից մեկի շուրթերով: -Ահա անհեթեթ զրույցներ: Բայց եթե նույնիսկ տասը հազար սերունդ անց հանդիպես իմաստունի, ով գիտի դրանց իմաստը, ապա կթվա, թե մի գիշեր է անցել...»: Որքան էլ երկար լինի երազը, արթնացող մարդու համար այն խտանում է ակնթարթում: Բայց ո՞վ գիտի, արդյոք արթնացումն ամեն անգամ հերթական երազի հրավեր չէ՞: Ինչ էլ որ գոյություն ունենա աշխարհի երեսին, միշտ էլ պարզվում է, որ կա ևս մի բան: Ամեն ինչ հնարավոր է: Չկա ավելի տափակ ճշմարտություն և, այդուհանդերձ, առավել ունակ դառնալու, լուրջ ընկալելու դեպքում՝ անսպառ խորհրդածության աղբյուր: Չէ՞ որ այն ուսուցանում է ըմբռնել անսահման հնարավորությունների անսահման աշխարհը: Ո՛չ, Չժուան-ցզիի դեպքում ամեն ինչ այնքան էլ պարզ չէ, նույնիսկ, եթե նա երբեմն հասարակ մեկն է թվում: Փորձենք գտնել դառս իմաստունի առեղծվածի բանալին իր անունը կրող գրքի տեքստում: Այս գիրքը լինելիության երկար ճանապարհ է անցել: Կայսերական գրապահոցի կատալոգում, որը կազմվել է մեր դարաշրջանի շեմին, հիշատակվում է 52 գծից բաղկացած «Չժուան-ցզի» տրակտատը: Երեք հարյուրամյակ անց կային ցուցակներ, որոնք 26 թե 27 գլուխ էին պարունակում: Իսկ տրակտատը վերջնական տեսքի է բերել 3-4-րդ դարերի սահմանագծին՝ նրա դասական մեկնիչ Գո Սյանը, ով դրանում 33 գլուխ է առանձնացրել, դրանք բաժանելով երեք կատեգորիայի՝ «ներքին», «արտաքին» և «խառը»: Գո Սյանի իրականացրած խմբագրումը համընդհանուր ճանաչման է արժանացել: Տրակտատի հնագույն հայտնի տար-

բերակները ներկայացված են ձեռագիր հատվածներով, որ վերաբերում են Թան դարաշրջանին (7-9-րդ դարեր): Իսկ ամենահուսալինները գրքի ամբողջովին պահպանված տարբերակներից կարելի է համարել նրա տպագիր հրատարակությունները, որոնք հայտնվել են 11-12-րդ դարերում: Միամտություն կլինի մտածելը, թե հնագույն արտագրողները մեզ են հասցրել համարյա անանուն իմաստունի ժառանգությունը՝ չկորցնելով և չեղծելով նրա և ոչ մի խոսքը: Յնագույն չինական գրականության մեջ կա մոտավորապես 60 հղում «Չժուան-ցզիի» հատվածներին, որոնք բացակայում են գրքի գոյություն ունեցող տարբերակներում: Հայտնի են նաև որոշ անհետացած գլուխների անուններ, և մնում է միայն հուսալ. որ դրանք, դե, թեկուզ մասնակիորեն, մտել են մինչև մեր ժամանակները պահպանված տեքստերի կորուստի մեջ: Միանգամայն բացառիկ դժվարություններ են կապված տրակտատի բանասիրական քննության հետ: Չժուան-ցզին Կոնֆուցիոսը չէ՞ ինչպես իր խառնվածքով, այնպես էլ և՛ իր դիրքով չինական ավանդություն: Նրան վերագրվող դիրքը գրավել է ոչ այնքան մանրակրկիտ գրասերների ուշադրությունը, որքան միստիկների և բանաստեղծների, ովքեր դրա մեջ ոչ թե տափակ պարզություն են փնտրել, այլ ստեղծագործական ներշնչանք: Ըստ էության, լուրջ խմբագրական աշխատանքը նրա վրա սկսվել է սոսկ անցած հարյուրամյակից և դեռևս հեռու է եզրափակումից, քանզի այդ դասական հուշարձանը տուժել է անհայտ բանաբաղների և արտագրողների սխալներից, ինչպես հին չինական գրականության և ոչ մի այլ ստեղծագործություն: Սակայն գլխավոր բար-

## Գեղարմ Աշուն 2017

դուքյունները ստեղծում են Չժուան-ց-գզիի լեզվի ոճական յուրահատկությունները, որ հագեցած են բարբառա-յին տարրերով, հազվագյուտ բառե-րով, մեզ անհայտ սյուժեների հղումնե-րով և այլ մեկնաբանման համար բարդ հռետորական հնարքներով: Չափա-զանց բարդացնում է գործը և Չժուան-ցզիի գրելաեղանակը՝ յուրատիպ, նույնիսկ բացառիկ խոսքի վարպետի չինական ավանդույթում, որ բառարա-նային նորմերից և քերականական կա-նոններից վեր է: Արդյունքում՝ տրակ-տատի մեկնիչը չափազանց հաճախ ստիպված է որոշել, թե արդյոք գործ ունի արտագրողի հերթական սխալի՞, ավելի ուշ շրջանի ընդմիջարկողի հեր-թական սխալի՞ հետ, և կամ թե փիլիսո-փա-բանաստեղծի բառակերտվածքի՞ հետ: Շատ հաճախ Չժուան-ցզիի թարգմանիչը ստիպված է ինչ-որ բա-ներ վերաշարադրելու, ժամանակ առ ժամանակ դեմ առնելով նախադասու-թյունների, որոնց կարելի է վերագրել ճիշտ հակառակ իմաստը: Ընթերցողը, ով չի զլանա կարդալ «Չժուան-ցզիի» միակ ամբողջական ռուսերեն թարգ-մանությունը, որ իրագործել է Լ.Գ.Պոզդնեևան, կհամոզվի, թե որքան բարդ է Չժուան-ցզիի խելքի մոտ մեկ-նությունը, միաժամանակ մտահոգվե-լով բնագրին հարազատ մնալու և ռու-սաց լեզվի կանոնների մասին: Առան-ձին խնդիր է տրակտատի մեզ հասած տեքստի վավերականության հարցը: Չինաստանում այն վաղուց է դրված, և հին չինացի մեկնիչները քիչ ջանք ու ժամանակ չեն վատնել՝ փորձելով հաստատել, թե ինչն է գրքում պատկա-նում հենց Չժուան-ցզիին: Հիմա նրանց փնտրտուքների մեջ խորանա-լու կարիք չկա: Տրակտատի «արտա-քին» և «խառը» բաժիններում կան ոչ

քիչ հատվածներ, որոնք աներկբա վկայություններ են պարունակում դրանց ավելի ուշ ժամանակների ծագ-ման մասին, դիցուք՝ մինչև մ.թ.ա. 2-րդ դարը: Սակայն տեքստի վավերակա-նության համապարփակ չափանիշնե-րը դրանց հեղինակների անձնական հայացքների և տպավորությունների վրա հիմնված կամայական հաշվարկ-ներից այն կողմ չեն անցնում: Տրակ-տատի թվագրման փորձը մի շարք լեզ-վաբանական հատկանիշներով, որ ձե-ռարկել էր չինագետ Ա.Մ.Կարապետ-յանցը, հիմք է տալիս խոսելու գրքի «ներքին» բաժնի առավել ակնհայտ ոճական միեղենության մասին: Սա-կայն և դրա այլ բաժիններում էլ չկան տեքստեր, որ ակնհայտորեն դուրս են մնում Չժուան-ցզիի հիմնած գրական ավանդույթից: Ակներև է, որ Չժուան-ց-զիին վերագրվող գրքի վավերականու-թյան խնդիրը հազիվ թե լուծելի է զուտ բանասիրական միջոցներով: Գիտենա-լով վաղնջական չինական մտքի ընդ-հանուր պատկերը, մենք կարող ենք, իհարկե, խոսել Չժուան-ցզիի վրա այլ փիլիսոփայական դպրոցների ազդե-ցության մասին, առավել ևս, որ Չժու-ան-ցզին հիանալիորեն տեղյակ էր դրանց: Բարդությունը, սակայն, այն է, որ դեռևս ոչ մեկին չի հաջողվել բացա-հայտել պատմական երևույթի էությունը՝ պատկերելով այն միայն ցաքուց-րիվ գործոնների ներգործության արդ-յունքով: Սակայն, գուցե թե, ուղիմ մեզ հուշի հենց Չժուան-ցզիի՞ դիրքորոշու-մը: Դառս փիլիսոփայի մասին դասա-կան կարծիքը պահպանվել է նրա գր-քի վերջին գլխում, ուր կա նաև հին Չի-նաստանի փիլիսոփայական ուսմունք-ների ամփոփումը: Մենք այնտեղ կար-դում ենք.

Աղոտ, անպարագրելի, ձևագուրկ,

առանց միակերպության փոխակերպությունների մեջ կենող: Կյանքն է արդյոք, մա՞հն է արդյոք: Երկինքն ու Երկիրը միաձուլվ են ինձ հետ: Պայծառատես ոգին շարժունակ է՝ ո՞ր է այդպես առեղծվածորեն սլանում, ուրկի՞ց է այդքան հանկարծ հայտնվում: Իրաց ողջ բազմազանությունը՝ հանց փռված ցանց, և չկա սկիզբ դրանում: Հներն ուսուցանում են և այդպիսի հայացք աշխարհին: Չժուան Չժուան ընկալեց այդ խրատները և հետևեց դրանց: Անհատների գրույցներում, խելահեղ խոսքերում, հանդուգն ու անսահման արտահայտություններում նա իրեն ազատ էր արձակում, ոչնչով չսահմանափակելով իրեն, և իրաց վրա որոշակի հայացք չունենալով: Նա համարում էր, որ աշխարհը թաղվել է ապականության մեջ, և ինքը նրա հետ խոսելու բան չունի: Նա թափառում էր Երկնքի և Երկրի ոգու հետ, բայց իրաց բազմազանությանը վերից չէր նայում, չէր դատում «ճշմարիտի» և «կեղծի» մասին և առօրյա աշխարհում պահպանում էր առաքինությունը: Թեպետ նրա գրերը պաճուճագեղ են, դրանց հանդգնությունն անվնաս է: Թեպետ նրա գրույցները խառնափնթոր են, դրանց անկարգությունը հաճույք է պատճառում: Դրանցում թաքչած է իմաստի անսպառ լիությունը: Վերևում նա ճամփորդում էր այն բանի հետ, ինչն արարում է իրերը, ներքևում ընկերություն էր անում այն բանի հետ, որ գերազանցում է կյանքն ու մահը, և ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: Իր հիմքում նա անընդգրկելի, ընդարձակ ու անմիջական է: Իր ակունքում նա անհատակ խորն ու անկապանք է, կարելի է ասել, որ ամենայն ինչ ընդգրկել և կատարելության է հասել: Եվ, այդուհանդերձ, նրա փոփոխություններն ու իրաց ըմբռնման

համապատասխանության ճշմարտությունն անսահման է ու անորսալի: Որքան անպարագրելի է այն, որքան մթին: Անհնար է սպառել այն:

Կասկած չկա, որ այս ոգեշունչ կարծիքի հեղինակը Չժուան-ցգի մասին լսելով չէ, որ գիտեր: Այդքան համարձակ ու այդքան ճշմարտացի Սուն դարաշրջանի փիլիսոփայի մասին ոչ մեկը չէր գրել: Այստեղ յուրաքանչյուր խոսքը խորհրդածությունների համար հարստագույն սնունդ է տալիս: Բայց ամենայն վերլուծությունից առաջ այդ հյուսիսը բնութագրող հրավիրում է իրաց վրա ընդարձակ հայացքի, ներթափանցման առ մտքի «անպարագրելի հիմքը», հասու լինելու նրա գրույցների «մտքի անսպառ լիությանը» ցանկացած տեսանկյան հաղթահարմանը: Արդյոք նմանատիպ բան հնարավո՞ր է: Որպեսզի հասկանաք Չժուան-ցգիի մտքերի «անպարագրելի հիմքը», հասու լինեք նրա գրույցներ «մտքի անսպառ լիությանը», յուրատեսակ ջանք է պետք: Դրա համար ինչ-որ գաղափար, միտք կամ տեսակետ հասկանալը բավական չէ, որ «Երկնքի և Երկրի ընկերը» չունեն «իրաց վրա որոշակի հայացք»: Չժուան-ցգիի գիրքը բնակեցված է միմյանց բնավ չնմանվող մի քանի տասնյակ պերսոնաժներով, բայց մենք այստեղ չենք գտնում դառս գրողի պրոտագոնիստին: Այդ գրքում հնչում են հարյուրավոր տարբեր ձայներ, բայց մենք դրանց մեջ չենք լսում հեղինակային ձայնը: Չժուան-ցգիի մտքի ընթացքը ներկայանում է որպես անհայտ կերպարի, քնածին և նույնիսկ անհեթեթ դիմակների պատկերասրահ, և այդ դիմակներն իրենց անհեթեթությամբ հիշեցնում են այն մասին, որ իրենք լոկ դիմակներ են: Այդ հոսքը, այսպիսով, ներ-

կայանում է ոչ միայն՝ որպես անսահման ու անկանոն գրգռահարույց թեթև խաղ, բայց և ինքնաժխտումների անհատնում հերթագայություն, այսինքն, կարծես թե սխալների, վրիպանքների, «ստեղծագործական ձախողումների» արտահայտություն: Չժուլան-ցզի խաղում է ամենքի և ամեն ինչի հետ, իսկ խաղն անլուրջ և անօգուտ զբաղմունք է համարվում: Եթե մենք չենք ուզում Սուն թագավորության փիլիսոփային համարել անպատասխանատու ծաղրաբան կամ անհմուտ մտածող, որ անդադար հակասում է ինքն իրեն (իսկ այդպես էին իրոք գնահատում Չժուլան-ցզիին շատերը հենց Չինաստանում), մենք պիտի ջանանք գտնել իմաստը հենց անիմաստության, նրա «խելահեղ զրույցների» անիմաստության մեջ: Չժուլան-ցզիի ժառանգության գնահատականն, ի վերջո, կախված է այն բանից, թե մենք ինչ ենք փնտրում՝ արդյո՞ք մենք կբավարարվենք եղածի հայեցումով, թե՞ միշտ կփնտրենք այլ մի բան: Արդյո՞ք մենք կբավարարվենք ուսմունքի և նրա գաղափարական «ազդեցությունների» և «փոխառությունների» գաղափարական խաղի հայեցումով, թե՞ կծագենք մեզ տրված մտքի ձևերի ողջ հանրագումարի ամբողջական ընկալմանը, դրանցից յուրաքանչյուրի ներունակ արժեքի ընդունմանը, դրանց միասնական հեռանկարի բացահայտմանը, ինչը որ կախված չլինի սուբյեկտիվ գործոններից: Արդյո՞ք մենք ի վերջո կծագտենք ավարտուն «փիլիսոփայական համակարգի» բացահայտմանը, որի ետևում կեցած է վարկածային, միշտ վարկածային, իհարկե, անհատական հեղինակը, կամ ականջալուր կլինենք ամմիջականորեն կենսալի մտքերի աճին, դրանց ազատ և անվերջանալի

հոսքին, որ ենթադրում է գաղափարների և թեմաների մշտատև վերածակերպում, երկխոսության առկայությունը և դրանում ազատ մասնակցության հնարավորությունը յուրաքանչյուրի համար: Այստեղ ընտրությունը վերաբերում է ոչ միայն Չժուլան-ցզիի ստեղծագործության գնահատականին: Այն ուղղակի կապ ունի ամբողջությամբ վերցված մտածողության խնդիրների և բնույթի ըմբռնման հետ: Խոսքն այն մասին է, թե արդյո՞ք մենք կբավարարվենք մտքի զննմանը ենթակա պահերով, թե՞ կփնտրենք մտքի «ծննդաբերական պահը», նրա, այսպես ասած, նախապատմությունը, այն համակող պատմությունը: Կարծում ենք, որ երկրորդ մոտեցումն ավելի գերադասելի է, համեմայնդեպս, երկու պատճառով: Առաջին՝ այն համահունչ է հենց Չժուլան-ցզիի դիրքորոշմանը, ով չի կամենում իրավագուրկ անել աշխարհի ձայներից և ոչ մեկը: Նա ինքն էլ խոսում է տարբեր ձայներով: Եվ դա սուրբատյան երկխոսություն չէ, որն ավելի շուտ ինտելեկտի դիմակավորված մենախոսություն է: Սա իսկապես երկխոսություն է, տարբեր փորձերի բախում, որն ամենևին չի եզրափակվում պայմանական ճշմարտության ծնունդով: Չէ՞ որ Չժուլան-ցզի, ինչպես մենք արդեն գիտենք, «իրաց վրա որոշակի հայացք չուներ»: Հիմքեր կան ենթադրելու, որ դառս փիլիսոփայի հավատամքը սկզբունքորեն չի հանգեցվում մեկ հայտարարի, ինչ-որ «գաղափարների համակարգի»: Օրինակ, Չժան Ցզունգունը իր Չժուլան-ցզիի փիլիսոփայությանը նվիրված՝ վերջերս հրատարակած ուսումնասիրության մեջ բավական համոզիչ կերպով ցույց տվեց, որ դառս փիլիսոփայի գրքում առկա են միանգամայն տարբեր և նույնիսկ

## Գեղարմ Աշուն 2017

իրար բացառող աշխարհայացքային դիրքորոշումներ, դրանում կարելի է հայտնաբերել և՛ բնազանցություն, և՛ բնազանցության ժխտում, մոնիզմ և պլյուրալիզմ, օբյեկտիվ աշխարհի իրականության հաստատում և դրա հանգեցումը սուբյեկտին: Մենք պետք է կամ Չժուան-ցզիի գիրքը համարենք հակասական մտքերի կուտակում, կամ դրանում փնտրենք ինչ-որ գերհամակարգ, որ ընդգրկում է նույնիսկ անհամակարգայնությունը: Պարզ է, որ հեռանկարային է միայն երկրորդ ուղին:

Երկրորդ, մեր ընտրած մոտեցումն ազատում է ուրիշի մտածողության համակարգի հանդեպ ապրիորի արժեքներ, հաստատումներ և դասակարգման սխեմաներ կիրառելու անհրաժեշտությունից՝ ստեղծելով ճակատագրական խզում հետազոտողի և հետազոտման օբյեկտի միջև: Բերելով իրականության ամբողջական ընկալման, այդ մոտեցումն ամենևին չի նշանակում՝ միասնականի և, հետևաբար, մտքի պատմության ժխտում: Սակայն այն պահանջում է հենց շարժման հասկացության վերագնահատում, պատմական շարժման վեկտորային և անդառնալի ժամանակի գաղափարի ներմուծում բազմապլան, տարածյուղ, դարձունակ փոփոխությունների ավելի ընդգրկումն հղացքի մեջ: Ի վերջո, և դա, թերևս, կարևորն է՝ այդպիսի մոտեցումը բնավ էլ չի ենթադրում մակերեսային էկլեկտիզմ և ինտելեկտուալ անսկզբունքայնության ուրիշ դրսևորումներ, այլ ընդհակառակը՝ տալիս է փաստերի պատմական և տիպոլոգիական գնահատման հստակ չափանիշներ հենց այն պատճառով, որ թույլատրում է դրանք դնել մտքի բոլոր շարժումների միասնական հե-

ռանկարի մեջ: Այժմ Չժուան-ցզիի անհատական յուրօրինակության խնդիրը վերափոխվում է նրա ստեղծագործության մեջ առ աշխարհը զանազան վերաբերմունքի կերպերի փոխներգործությունների խնդրի: Նոր ձևակերպման առավելությունն այն է, որ այն թույլատրում է մի ամբողջության մեջ միավորել և Չժուան-ցզիի մտքի ներքին կարգը, հազվագյուտորեն բազմադեմ գրողի, և նրա ժառանգության ճակատագիրը Չինաստանում, ուր այն ժամանակի ընթացքում վերածվել է գերանձնական ճշմարտության յուրատեսակ նշանի, դարձել է ավանդույթ՝ չկորցնելով իր անհատականությունը և իր բացառիկ տեղը չինական մշակույթի մեջ: Չժուան-ցզիի մտքի փոխակերպումների մասին մասամբ կարելի է դատել հենց տրակտատի բովանդակությամբ: Բազմանշանակ սիմվոլների, մշուշոտ այլաբանությունների, գրքում առկա ֆանտաստիկ իրավիճակների հետ մեկտեղ, հատկապես նրա «արտաքին» և «խառը» բաժիններում, կան ձևակերպումներ և անցումներ, որոնք ընթերցվում են՝ որպես այդ բազմիմաստ կերպարների պատկերների բացատրություններ կամ մեկնություններ: Միևնույն միտումը տեսանելի է Չժուան-ցզիի ժառանգության ճակատագրի մեջ: Շատ եզրեր, որ վճռորոշ են դարձել դառսական ավանդույթում, գտնվեցին Չժուան-ցզիից շատ ավելի ուշ կամ հստակ փիլիսոփայական իմաստ ստացան նրա մեկնիչների շնորհիվ: Այն ժամանակից ի վեր, երբ 3-րդ դարում Չժուան-ցզիի գրությունները դարձյալ հանրահայտ դարձան, հարյուր հիսուն չինացի գիտնականներ իրենցից հետո թողեցին տրակտատի մեկնությունները, չասած արդեն անհամար գեղարվեստական ստեղ-



## Գեղարմ Աշուն 2017

ծագործությունների մասին, որ զարգացնում են Չժուան-ցզիից քաղած թեմաները: Եվ հարկ է ասել, որ հինավուրց դառնական փիլիսոփան բավարարում է ամենատարաբնույթ հետաքրքրությունները, համոզմունքները և ճաշակները: Նրա տրակտատը կրոնական դառնիզմի ավանդույթում սրբազան գիրք էր դարձել, և դրան ոչ պակաս հաճույքով էին դիմում չինացի բուդդիստները: Չինաստանի և ողջ Յեռավոր Արևելքի ավանդույթում Չժուան-ցզիի ժառանգությունը հավասար հաջողությամբ սնում էր փիլիսոփայական մտահայեցությունը և կրոնական ճգնակեցությունը, գեղարվեստական ստեղծագործությունն ու գիտությունը, ռազմարվեստները, քաղաքական և էթիկական միտքը, և այլն: Չժուան-ցզին Չինաստանում՝ դա պարզապես հերթական «փիլիսոփայական համակարգ» չէ: Սակայն սխալ կլիներ Չժուան-ցզիի և նրա մեկնիչների միջև հավասարության նշան դնելը: Թեպետ Չժուան-ցզիին հղումներ են անում և ավելի ուշ շրջանի դառնական և բուդդիստական քարոզիչները, Չժուան-ցզին կրոնական ուսուցիչ չէր և երկրային կյանքը չէր հակադրում ինչ-որ վերին կյանքի: Թեև ավելի ուշ շրջանի բանաստեղծներն ու արվեստագետները հենրից և ոչ մեկին այդքան հաճախ չէին վկայակոչում, քան Չժուան-ցզիին, նա ոչ բանաստեղծ էր, ոչ էլ արվեստաբան:

Թեպետ Չժուան-ցզիին դիմում էին միջնադարյան մետաֆիզիկները, նա ինքն իրենից հետո բնագանգական ուսմունք չի թողել և նույնիսկ, ինչպես մենք կտեսնենք, անտարբեր էր բնագանցության հանդեպ: Միջնադարյան մեկնիչները սիրում էին համակարգ փնտրել Չժուան-ցզիի ժառանգության

մեջ և տրամաբանական հաջորդականություն հաստատել նրա գրքի գլուխների դասավորության մեջ: Իսկ հենց գրքի տեքստում չկա շարադրման որևէ համակարգման և որևէ ակնարկ: Միավորե՞նք արդյոք Չժուան-ցզիին նրա ավելի ուշ շրջանի մեկնիչների հետ: Դառնական ավանդույթի պատմական ճակատագրերում միասնության և տարբերության խնդիրն ունի որոշակի զուգահեռներ դառնական տրակտատներում՝ հենց դատողության կազմավորման հետ կապված: Ի դեպ, «տրակտատ» բառը բնավ հարիր չէ դառնական ստեղծագործություններին: Դառնները պատկանում են այն մտածողների թվին, որոնք չեն ձգտում շարադրման համակարգայնության և պարզության: Մտքի հաջորդական շարժման փոխարեն, որ կազմավորվում է տրամաբանական ապացույցների շղթայով, պատումը դառնական գրքերում ցրվում է առանձին հատվածների և դրսևորվում է՝ որպես զանազան գրական ոճերի և ձևերի արտասովոր միահյուսում՝ առակների, առասպելական սյուժեների, տրամաբանական փաստարկման, պարադոքսների, պաթետիկ մենախոսությունների, ծաղրերգական երկխոսությունների, և այլն: Չժուան-ցզին ոչ թե պարզապես ազատ տնօրինում է իր արտահայտչամիջոցների հարստագույն պաշարը: Նա նույնիսկ չի փորձում տարբերակել ճշմարիտ և կեղծ խոսքը և ոչ մի տեղ չի ասում, ինչպես, օրինակ, ասում է Պլատոնը՝ «այստեղ ավարտվում է փիլիսոփայությունը, և սկսվում է առասպելը: Չժուան-ցզին ամենայն այլընտրանքի պայմանականություն հետամտող և դրանց միջև ընտրելու չկամության զգացողություն է հարուցում: Նա հետևողականորեն հանդես է գալիս

ցանկացած էքստրեմիզմի դեմ և չի ուզում առավելություն տալ ինչ-որ բանի ընդդիմության ցանկացած զույգում, լինի դա երա՞զ, թե՞ արթնություն, կյա՞նք, թե՞ մահ, ճշմարտություն, թե՞ սուտ, և այդպես շարունակ: Չժուան-ցզիի առակների մեջ չկա ավելի հանրահայտը և առավել ներհատուկն իր անընդօրինակելի գրելատեղանակին, քան այն, որում պատմվում է, թե ինչպես մի անգամ փիլիսոփան երազում տեսավ, որ ինքը փոքրիկ թիթեռնիկ է, ծաղկանց մեջ ճախրող: Արթնանալով՝ Չժուան-ցզիին չի կարողանում որոշել, թե արդյոք ինքը Չժուան-ցզիին է, ով երազում տեսել էր, որ ինքը թիթեռնի՞կ է, թե՞ թիթեռ է, ով երազում տեսնում է, որ ինքը Չժուան-ցզիին է: Չժուան-ցզիի գրելատեղանակում կա մի անհատում գաղտնիք՝ գաղտնիք ավելի անվերապահ և, դրա հետ մեկտեղ, ավելի անմիջական, ավելի մոտ մարդու ներքին կյանքին, քան Յերակլիտեսի «մթին» ասացվածները կամ Պլատոնի ինտելեկտուալ երկխոսությունների առեղծվածը: Դա անառարկելիորեն իրականի պատրանքայնության և երևութականի իրականության գաղտնիքն է: Նույնիսկ, եթե Չժուան-ցզիին նրբագյուտ հնարամիտ է թվում, նա ոչինչ չի հորինում: Չժուան-ցզիի և թիթեռնիկի մասին առակի հանճարեղ միամտությունը հաստատ նշանն է այն բանի, որ մեր առջև ոչ թե պարզապես ֆանտազիա է, ոչ թե «գրականություն է», այլ հիրավի եղածի արտացոլանքն է՝ այն բանի, որ ինքը՝ փիլիսոփան, կոչում էր «մեծ արթնություն՝ ընդմեջ մեծ քնի»: Անլուծելիի և անպարզի աշխարհում Չժուան-ցզիին տարածք է բացում զուցե թե ոգու ամենավսեմ աշխատանքի համար՝ ըմբռնել անհայտը՝ սովորակաճում, և մեծը՝ փոքրում, հասու լինել

իմաստին այնտեղ, ուր կործանված է «ամենահասության» հռետորությունը, և իմաստ չկա: Ինչպե՞ս, ուրեմն, մեկնել Չժուան-ցզիին: Ցանկացած մեկնություն բացատրություն է, բնագրի հարստություն, որ կոչված է այս կամ այն իրավիճակն ավելի ընտել դարձնելու: (Չկա, սակայն, երաշխիք, որ մեկնիչը պարզապես լռության չի մատնել այն, ինչը որ իր համար անհասկանալի է մնացել, և չի փոխել նկարագրման արժանահավատությունը շարադրման կարգաբերմամբ և հաջորդականությամբ): Բայց Չժուան-ցզիին պատկանում է այն արտասովոր պատմողների թվին, ովքեր հայտնիի մեջ ստիպում են զգալ անհայտը: Նա մեզնից պահանջում է գիտակցել, որ ամենայն հասկանալին ճիշտ նույնքան էլ անհասկանալի է: Չժուան-ցզիի շվարեցնող ոճը պահանջում է ինչ-որ բացարձակապես նոր, հիրավի անհնար բացատրություն: Նա պահանջում է կասկածի տակ առնել անկասկածելին և սովորել հասկանալ չհասկացածն ու անհասկանալին, իմանալ հենց այն, ինչը մենք չգիտենք: Բայց ինչո՞ւ և ոչ: Յուրաքանչյուրին հայտնի է, թե ինչ է նա հասկանում և, ավելին, ամենից լավ հասկանում է հենց այն, ինչի մասին չի կարող ասել: Եվ մի՞թե մահը՝ միակ բացարձակապես անհայտ բանն այս կյանքում, զուցե թե, խորհրդածության և իմացության ամենահամապարփակ խթանն է: (3)Մենք պետք է ընդունենք ճշմարտության աննկարագրելիության մասին այդ կանխադրույթը, զուցե թե միակը Չժուան-ցզիի փիլիսոփայության մեջ: Ընդունենք դա այնքան լրջորեն, որպեսզի չմտածենք, որ Չժուան-ցզիին հակասության մեջ մտնելով իր իսկ պնդումների հետ՝ ջանում է նկարագրել աննարագրելին: Որպեսզի

հասկանանք դառսական գրողին, միանգամայն յուրահատուկ ջանք է պետք: Հարկ է կարողանալ ունկնդրել արտապատկերային լեզուն, որում բառի վկայվող ունակությունը սպառում է իրեն, պետք է կարողանալ, ոչինչ լուրջ չընդունելով, քո կյանքի ամեն մի վայրկյանին, Չժուան-ցզի խոսքերով ասած՝ դառնալ «այնպիսին, ինչպիսին դեռ չես եղել»: Պետք է իմանալ, մի խոսքով, բանալ քեզ փորձի չսահմանափակված դաշտի առաջ՝ հրաժարվելով նույնիսկ ինքդ քեզ սահմանափակելու հրաժարումից: Չժուան-ցզիին հասկանալու ջանքը համարժեք է լիովին ազատության ջանքերին: Այդուհանդերձ, որտեղի՞ց է Չժուան-ցզիի տեղերը փոխելու և նույնիսկ պարզապես հասկանալին և անհասկանալին միախառնելու այդ ձգտումը, այդ անորոշությունը մտածողության գլխավոր՝ իրականության բնույթի մասին հարցում: Արդյոք դրանից չէ՞, որ դատողությունների ու փորձի զանազան տեսակները Չժուան-ցզիի մոտ հավասարապես ենթարկված են ինչ-որ բարձրագույն իրականության, որը բացահայտում է իրեն ողջ գոյողի անորոշ միասնության մեջ: Այդպիսի միասնությունը գերազանցում է տարբերությունը և նույնականությունը և այդ պատճառով չի կարող ոչ անվանվել, ոչ էլ նկարագրվել: Այն ավելի շուտ այս կամ այն կերպ հուշվում է՝ պարադոքսալ դատողություններով, ասացվածների հակադիր փոխդասավորությամբ, եթե խոսենք գերագույնս ընդարձակ համատեքստերի մասին, աղոտ-համանման սիմվոլների խմբով: Հյուսելով իր առակները և կցկտուր մենախոսությունները, Չժուան-ցզին ասես կատարում է միևնույն անհայտ սյուիտի այլազանություններ: Նրա ոճի ընդհանուր

հատկանիշը խորհրդածությունների կազմավորման յուրատեսակ փոխաբերական հիմքն է՝ «միասնությունը հակադրության միջոցով» սկզբունքով: Չժուան-ցզի ընթերցելիս՝ մենք դեգերում ենք տարողունակ պատկերների և համարձակ փոխաբերությունների անտառում՝ այդ բարձրագույն իրականության ներկայության անբացատրելի և ամենագոյնազանների մեջ: Այդպիսին են. օրինակ, Վիթխարի գուղձի, Մայրական արգանդի, Շրջանի առանցքի, Հալոցային կաթսայի, Կրակի, Ջրային մակերեսի, Ուռկանի, Օվկիանոսի և այլ բաների պատկերները: Շճարտությանը հասու իմաստունի վիճակի մասին է հաղորդում փոխաբերությունների այլ շարքը՝ Ինքնամոռացությունը, Առավոտյան պարզությունը, Պաղած մոխիրը, Չորացած ծառը: Այս պատկերներից յուրաքանչյուրը լիովին ինքնուրույն է: Եվ դրանցից յուրաքանչյուրն ինչ-որ բան է հաղորդում այն իրականությունից, որին դրանք պատկանում են միատեղ, հանց թելեր, որ հյուսվում են անծայրածիր նախշում, Անճառելի իրականություն, քանզի ճշմարտությունն այստեղ առկա է այն պահին, երբ այն չի երևում: Սիմվոլների նախշը, ցրված չֆիքսված, չդրսևորված կենտրոնի շուրջ, կարող էր հարմար օրինակ ծառայել մշակույթի ուսումնասիրման այն մոդելի համար, որին տրամադրում է դառսական ավանդույթը: Այդ մոդելին համապատասխանում է մտածողության կազմավորման գլխավոր սկզբունքը ոչ միայն դառսիզմի մեջ, այլ նաև՝ ողջ չինական մտքի գլխավոր գծում՝ «Միջինի» կամ «Արքայականի» գծում, ուղի, որն ամենահամապարփակն է, անպատճառ դրական, ամենայն պառակտում և բաժանում հաղթահարող, բայցև՝ գոյու-

թյունը մեկ արտոնյալ սկզբի չենթարկող: Ոչինչ չի խանգարում մեր մեթոդը տարածելուն և չինական ավանդույթն այլ մշակույթների հետ համադրելու ուղորտին: Բոլոր դեպքերում՝ մեր նպատակը պիտի լինի ոչ թե զուգահեռների որոնումը, հոգևոր կյանքի այս կամ այն երևույթների նույնացումը, այլ մտածողության համընդգրկուն համակարգի վերարտադրությունը, որի առանձին տարրերը, պահպանելով իրենց ինքնատիպությունը, փոխադարձ պարզաբանում են միմյանց: Այդ պատճառով՝ մենք կարիք չունենք Չժուան-ցզիի յուրաքանչյուր խոսքը հալած յուրի տեղը նդունելու, ոչ էլ նայելու նրա ստեղծագործությանը՝ որպես վաղուց սպառված և միայն անտիկվարային հետաքրքրություն հարուցող մտքի փուլի: Հարկ է հասկանալ, որ խոսքն այնպիսի ճշմարտության մասին է, որի առաջ ոչ միայն դառսական իմաստունի մեկնիչները, այլ նաև հենց ինքը և մեզնից յուրաքանչյուրը գտնվում ենք հավասար վիճակում: Ժամանակաց անհայտ հեռվից գալով մեզ՝ Չժուան-ցզիի ժառանգությունը ծառայում է անհայտի բացահայտմանը մեր մեջ: Անշուշտ, այստեղ ուրվագրվող մոտեցումը Չժուան-ցզիին պիտի տարբերի գրականության մեջ պատահող դառսիզմի այնպիսի անորոշ կատեգորիաներով մեկնաբանելու փորձից, ինչպիսին են՝ «կյանքային դիրքորոշումը», «խելքի կերտվածքը», «մտատրամադրվածությունը», և այլն: Փորձեր, որոնք ծնվել են, ըստ էության, դառս փիլիսոփայի ստեղծագործության վերլուծության մեզ հայտնի դժվարություններից խուսափելու համար: Շատ ավելի հաճախ եվրոպացի, դե, նաև արևմտյան փիլիսոփայության դպրոցն անցած չինացի ժամանակակից հեղի-

նակները ջանում են Չժուան-ցզիի հայացքները լիովին փոխադրել եվրոպական եզրաբանության մեջ: Հաճախ նրանք փորձում են վերստեղծել դառսիզմի փիլիսոփայական սինթեզը, և նրանց ուղղորդում են ոչ միայն դպրոցական սովորույթները: «Իմանալու» ձգտումը ներփակված է եվրոպական մտքի հենց սրտում, հատկապես դա է միավորում մնացյալում այդչափ անմիավորելի Աթենքն ու Երուսաղեմը: Բանականության օրենքների տրամաբանական համընդհանրությունը միշտ Արևմուտքում համարվել է ճշմարիտ գոյության նախատիպար, և հազվադեպ է պատահել, որ դասական փիլիսոփայական ավանդույթը կերտողներից որևէ մեկը ենթադրի, որ մտածողը կարող է քամահրել կոնցեպտուալ կատարելությունը և իրականությունն ընկալել՝ զուտ հանգամանքներից ելնելով, առանց «ինչի համարի» և «ինչու»-ի, որպես բանաստեղծ, ով խոսելով բացառիկի մասին, բացահայտում է իրաց լիակատար միասնությունը: Չժուան-ցզիի մասին արևմտյան գրականության նույնիսկ թռուցիկ ծանոթությունը բավ է այն բանի համար, որպեսզի տեսնես դրա կանխակալությունը դառս փիլիսոփայի նկատմամբ: Մենք այստեղ բավական շատ դատողություններ կգտնենք «Միասնականի» և «Բացարձակի» մասին, բայց չենք գտնի այն փաստի արժանի գնահատականը, որ դառսական աշխարհայացքի հիմքում ընկած է, այդուհանդերձ, «փոխակերպման» կատեգորիան: (Դե, և ի՞նչ է իրականում «Ամենայն ինչի կերպափոխության փիլիսոփայությունն ամեն ինչի»: Ինչ-որ Օվիդիոսի «Մետամորֆոզների» պես մի բան՝ տարօրինակ և միամիտ ընթերցանություն): Արևմտյան հեղինակները հա-

## Գեղարմ Աշուն 2017

ճուլքով են խոսում դառսիզմի մեջ «ճշմարիտ-գոյողի» հասկացության մասին, բայց չեն կամենում նկատել, որ իրականությունը դառսական մտքում ընկալվում է՝ հենց որպես ամենայն էության սահման, այդ թվում, անշուշտ, և «ճշմարիտ-գոյողի»: Արևմտյան հետազոտողները դառսական գեղագիտության պահանջների ոգով համառորեն փնտրում են Չժուան-ցզիի պատկերների այլաբանական, զուտ գործիքավորային իմաստը, երես թեքելով այն ակնհայտ իրավիճակից, որ այդ պատկերները ճնշում են իրենք իրենց և, հենց դառսների խոստովանությամբ, միմիայն արժանի են անհեթեթ կոչվելու: Արդյո՞ք մենք պիտի դառսներին կասկածենք նենգամտության մեջ, երբ նրանք հայտարարում են, որ իրենց ճիշտը դրանց մասին բոլոր խոսքերից առավել պարզ է, և ճշմարտությունը «դրսևորելու» ամենայն փորձ ապարդյուն է և նույնիսկ հղի է հոգևոր մահով: Եվ եթե դառսական իմաստուններն իսկապես ուզում էին ասել այն, ինչը որ գտնում են նրանց գրքերում ռացիոնալ մտածողության համակարգողները, ապա ինչո՞ւ էին նրանք այդքան «այլաբանորեն» արտահայտվում: Կարծում ենք, որ միակ լուրջ վերաբերմունքը Չժուան-ցզիի ժառանգությանն այն է, որ նրան ընդունես այնպիսին, ինչպիսին նա կա, և ձգտես գտնել ճշմարտությունը, որի մասին խոսում է Չժուան-ցզին, սովորականի մեջ, յուրաքանչյուրի համար բաց և ամեն մեկին հասկանալի կամ անհասկանալի նրա զրույցների իմաստում: Եթե ավելի ընդգրկում խոսենք, դառսական ավանդույթի չափումը եվրոպական արշինով այդքան էլ բեղմնավոր զբաղմունք չի թվում, չնայած որ այն խոստանում է հարմար ու կարճ (նույնիսկ

նախօրոք հայտնի) ճանապարհ՝ առ դառսների իմաստությունը: Գիշտն ասած, համանման հետազոտման հենց գործիքավորման ամբողջության մեջ ոչ մի պարսավելի բան չկա: Բայց մեր խնդիրը պիտի լինի, հավանաբար, ոչ թե այն, որ համոզվենք Չժուան-ցզիի այս կամ այն տեսակի գիտելիքի առկայության կամ բացակայության մեջ, որ տարբերակելի է ժամանակակից աշխարհում, այլ այն, որ գիտակցենք նրա փիլիսոփայության հենց պայմանները: Չեշտ է ցույց տալ, որ այդ պայմանները յուրահատուկ են յուրաքանչյուր մշակույթի ավանդույթում, որ մարդկության պատմության մեջ, ի հակադրություն այն բանի, որ մինչև վերջին ժամանակներս իր մասին մտածել է եվրոպական փիլիսոփայությունը, գոյություն չունի ոչ մտքի համապարփակ ելակետ, ոչ էլ փիլիսոփայության համապարփակ սկզբունք: Անհարմար է նույնիսկ հիշատակել այն մասին, որ եվրոպական, չինական կամ հնդկական հասկացությունները երբեք համարժեք չեն և չունեն համաձայնությունների ընդհանուր համակարգ: Այդուհանդերձ, չկա ավելի տարածված և ավելի աննկատ սխալ, քան անհայտից երես թեքելը՝ կոչելով այն հայտնի խոսքով: Շատ հաճախ մտքի այլ ավանդույթները հետազոտող եվրոպացիների «օբյեկտիվության» դիմակի տակ թաքնված էր լինում այդ ավանդույթներում փիլիսոփայական երկխոսության մեջ հավասար զուգընկերոջ տեսնելու չկամությունը, վերաբերմունքը նրանց հանդեպ՝ որպես պասիվ «հետազոտման օբյեկտի», որ պիտանի է լոկ այն բանի համար, որպեսզի ավելորդ անգամ հաստատի իրենց իսկ պատկերացումները, ի վերջո, նրանց հանդեպ զուտ թանգարա-

## Գեղարմ Աշուն 2017

նային հիացմունքով: Չափազանց հաճախ Արևմուտքը զբաղված էր օտար մշակույթների «ապամոլորեցմամբ»: Երբեք ուշ չի լինի տեսնելը, թե արդյո՞ք չի կարող այդ մշակույթների ուսումնասիրությունը ծառայել հենց Արևմուտքի ապամոլորեցմանը: Ակնհայտ է, որ օտար մշակույթների փիլիսոփայական ավանդույթների հետազոտությունը պետք է ընդգրկի դրանց ողջ մարդաբանական համատեքստը: Շատ առումներով նրան վիճակված է լինելու միաժամանակ փիլիսոփայության հակադրությունը՝ բառիս նեղ և ավանդական իմաստով, և նրա լրացումը, քանզի նրա առարկան հենց այն է, ինչը նախկինում մնում էր փիլիսոփայական ռեֆլեքսիայի շրջանակներից դուրս: Մտքի ներքին օրենքների դիտարկման փոխարեն՝ մարդաբանորեն մտածող փիլիսոփան դիմում է ըմբռնմանը նախորդող իրականությանը: Նրա կոչումը մտքերի անհունչ քայլերն ունկնդրելն է: «Փիլիսոփայության համակարգը» կառուցելու փոխարեն, որը հավակնում է համապարփակության, բայց երբեք չի արդարացնում այդ հավակնությունը, այն հետազոտում է մտային և անմիտի փոխհարաբերությունները, մտքի նախապատմության առկայությունը նրա պատմության մեջ՝ ձևեր, որոնք վկայում են մարդու առավել լայն ու անվերապահ միասնության մասին, քան վերացական պատկերացումները բնության և մարդկային մտածողության ընդհանրության մասին: Չժուան-ցզիի ժառանգությունը հարստագույն սնունդ է տալիս փիլիսոփայության մեջ այդ տեսակի մարդաբանական հեռանկարի նշանակալիության մասին խորհրդածելու համար: Բոլորն էլ ընդունում են, որ այն բավարարում է ամենախստապահանջ ռեֆլեքսիային, որ Չժուան-ցզիին, որ

ընդունում է միայն բացարձակ չափանիշները և օժտված է փայլուն դիալեկտիկական շնորհով, գուցե թե, առավելագույնս «փիլիսոփայականն է» բոլոր հնագույն չին մտածողներից: Եվ, այդուհանդերձ, Չժուան-ցզիի աշխարհը չի տեղավորվում փիլիսոփայության ընտել շրջանակների մեջ: Համենայնդեպս, ենթադրվում էր, որ փիլիսոփան պիտի լուրջ խոսի: Դե, ուրեմն, ինչպե՞ս կոչես «անբան գրույցների» այդ հորինողին, պարապ գրույցների այդ պատմողին, որ չի կամենում ոչ լուրջ լինել և ոչ էլ ճշմարտանման: Սակայն որքան էլ անլուրջ լինի Չժուան-ցզիին, նա պահանջներ է առաջադրում, որ եվրոպացի փիլիսոփաների չափանիշներով անկարելի են: Քանզի նրանցից ո՞վ կհամարձակվեր պնդել, որ իր զբաղմունքը կարող է երանություն և ուժ բերել, որ մարդուն գերիվեր է դարձնում նույնիսկ երկնաբաններից: Չժուան-ցզի իմաստունին չի սպառնում այն բախտը, որ լիովին հնարավոր է եվրոպացի փիլիսոփաների շրջանում՝ լինել տիտան՝ մտքում, և գաճաճ՝ կյանքում: Չժուան-ցզիին միտումնավոր ժխտում է ամենայն իմաստակուն: Նա խորհուրդ է տալիս՝ «պարապ շրջել անսահման հեռաստանում»: Հնչում է, ինչպես Ռոզանովի մոտ. «քիթը փորել ու հեռուն նայել»: Հենց այդպես. «պոչը տարուբերել կեղտի մեջ» և «թռչել ամպերից էլ անդին», լինել երկնքի և երկրի ընկերը, լինել քո ներսում քեզնից դուրս: Այդ ծայրահեղությունները Չժուան-ցզիի մեջ օրգանապես համակցվում են՝ չնեղելով, այլ, ընդհակառակը, միմյանց ազատագրելով: Եվ դառս փիլիսոփայի բոլոր խոսքերը՝ կոչ է մարդկանց ազատելու՝ իրենց կյանքի համար: Չժուան-ցզիի աշխարհն ապրում է, այնտեղ կարծրացածության և մեռյալ բաների համար

## Գեղարմ Աշուն 2017

տեղ չկա, այնտեղ անընդհատ ինչ-որ բան է պատահում: Այնտեղ բոլոր իրերը կենում են ազատության մեջ, հարանման այն բանին, թե ինչ ազատ են սավառնում երկնքում թռչունները և կայտռում ջրերում ձկները, որ այնքան հաճախ են գրավում դառս փիլիսոփայի հայացքը: Եվ, հանց ազատ արձակված թռչուն, Չժուան-ցզիի խոսքն ազատ ճախրում է, քմահաճ ու անպաճույճ: Որոշակի իմաստով՝ Չժուան-ցզիին ամենահակափիլիսոփայական փիլիսոփան է: Նա ոչ թե պարզապես ժխտում է փիլիսոփայությունը, որ պարփակվում է մտքի հայեցման մեջ: Նա ժխտում է մտքի ինքնահիմնավորման որոշ հնարքները, որ հիմնարար են Արևմուտքի փիլիսոփայական ավանդույթի համար: Բանն այստեղ Չժուան-ցզիի անվստահությունը չէ՝ առ բանականությունը, այլ՝ մարդկային գոյության լիությունից երես դարձնելու չկամությունը: Այստեղից է դառսի ուշադրությունն առ անգիտակցականը հարակադեմիական փիլիսոփայությունը: Այսպես, արդյո՞ք Չժուան-ցզիին փիլիսոփա է: Հնարավոր է, որ սա հենց այն դեպքն է, երբ ցանկացած պատասխան լոկ կփչացնի հարցը: Խոսքն այստեղ հենց փիլիսոփայությունն հասկացության վերագնահատման մասին է: Եթե ժամանակակից ազգագրությունը կարողացել է գտնել մշակույթի այն հասկացությունը, որ ընդգրկում է նույնիսկ նրանց, ում նախկինում «վայրենիներ» էին կոչում, ապա փիլիսոփայությունը, դրված մարդաբանական հեռանկարի մեջ, փնտրում է մտքի ինքնավկայումների բոլոր ձևերի ընդհանրական հիմքը, նույնիսկ այնպիսիներին, որոնք հեռու են ավանդական փիլիսոփայության ոլորտից: Ավելի ճիշտ ասած, մտ-

քի նախապատմության որոնումն անխուսափելիորեն բերում է դեպի մարդաբանություն, որը փնտրում է մշակույթի բնութենական ակունքները: Այն փաստը, որ մեր օրերում ազգաբանությունը դարձել է համարյա թե փիլիսոփայական դպրոցների հիմնական մարտադաշտը, ավելորդ անգամ ցույց է տալիս, թե որ ուղղությամբ է ընթացում մարդու հոգեբանությունն ինքն իր մասին:

Տվյալ դեպքում հին պատկերացումները հաղթահարելու պատրաստականությունը չի նշանակում՝ ինտելեկտուալ կամայականություն: Ոչ մի դրոճատիկ պսիխոլոգիզմ, «ներմղում» ուրիշի փորձի մեջ: Օտար մշակույթը՝ որպես բանավիճորեն իր սեփականի տեղ օգտագործելու և ոչ մի փորձ: Հաղթահարվում են հենց անհատական կարծիքների անարխիստական ինքնականությունը, բանականության ինքնավարությամբ ծնված կեղծ բաժանումները, առանց կիսատոների դուալիզմը, որ հաստատում է ավանդական մշակութային ինքնագիտակցությունը՝ կամ «բարբարոսներ», կամ «օտարներ», կամ «այնպիսիք, ինչպիսիք մենք ենք»:

Քիչ առաջ մենք ասացինք, որ մեր ընտրած հետազոտման ուղին մեզնից պահանջում է միշտ այլ բան փնտրել: Խոսքն այստեղ տրամաբանական հակադրության մասին չէ՝ միևնույն մասին չէ, որ պլուսի հայելային արտացոլանքն է, «ոչ»-ի մասին չէ, որ լոկ ի դուրս շրջված «Այո»-ն է: Խոսքը բոլոր ձևերի ըմբռնման մասին է, «այլ»-ին հասու լինելու՝ որպես իրերի միջնորդավորման և փոխակերպման համապարփակ միջավայրի, կարողության մասին է, այլ մի բանի մեջ նույն բանի շարունակությունը տեսնելու ունակու-

## Գեղարմ Աշուն 2017

թյան մասին է, հարանման այն բանին, ինչպես երազից արթնացած Չժուան-ցզին իրեն քնած է զգում:

Չինական միտքն ընդունակ է խթանելու մատնացույց արված ինտեգրալ միասնության որոնումը, քանզի նրանում մենք գտնում ենք համապարփակ Տարբերության փայլուն զարգացումը՝ Միասնության գաղափարը, որը լուծում է տարբերությունների անսահման բազմությունը: Այդ միտքը չի ճանաչում իդեալականի և նյութականի, հոգևորի և մարմնականի, բանականության և զգացմունքի, էմպիրիկի և ռացիոնալի, օբյեկտիվի և սուբյեկտիվի հակադրումները, որոնք, ի վերջո, իրականությունը հանգեցնում են «սկզբունքների»: Չինական ավանդույթին խորթ է «Ավելի շատ իմանալն ավելի քչի մասին» ակադեմիական հետաքրքրությունը: Այնտեղ շատ շուտ սպառվեց նաև մտքի փակ համակարգի կազմավորման միտումը, որը հաղթահարվեց «աշխարհում բոլոր ճանապարհների միասնական նշանակության» գաղափարով: Եվ առաջին անգամ այդ ինտեգրալ աշխարհայացքը «ամենաթափանց Միասնության» դիրքից ազդարարեց հենց Չժուան-ցզին: Նրա գրքի վերջին գլուխն այս խոսքերով է սկսվում.

Այժմ շատ են աշխարհը կարգաբերելու գիտակները: Նրանցից յուրաքանչյուրը համարում է, որ իր արածին ոչինչ չես կարող հավելել: Սակայն ի՞նչն է այն, որ հները կոչում էին՝ դառնի արվեստ: Պատասխանեմ՝ չկա ոչինչ, ուր այն չլինի: Հարցնում են՝ ուրկի՞ց է գալիս ոգեկանությունը, ուրկի՞ց է հայտնվում պայծառատեսությունը: Իմաստուններն ինչ-որ բանից քաղում են իմաստությունը, տիրակալներն ինչ-որ բանի շնորհիվ իշխանու-

թյուն են ձեռք բերում՝ այդ ամենը սերուն է Միասնականից:

Այսպես, ամենայնի սկիզբը՝ Միասնականն է: Ամենայն փիլիսոփայություն, բոլոր խոսքերը, պատկերներն ու ճանապարհները հաղորդում են միևնույն բանի մասին և միևնույն բանին են դիմում: Սակայն դա միասնականն է, որ ան-միասնական է: Այստեղ է թաքնված այն եզրաբանության բազմանշանակության պատճառը, որ չինական մշակույթի ամենանկատելի և եվրոպացի հետազոտողների շվարեցնող հատկանիշներից է: Մենք հայտնաբերում ենք, որ Չինաստանում իմաստություն հասկացությունը կամ «դառնի արվեստը» հավասարապես վերաբերում էր և՛ պետությունը ղեկավարելուն, և՛ կրոնական ճգնակեցությանը, էթիկային և արվեստին, գիտությանը և տեխնիկային: Ավելի ճիշտ ասած՝ «դառնի արվեստը», համաձայն չինական ավանդույթի, ընկած է հիմքում և հնարավոր է դարձնում իմացության և պրակտիկայի բոլոր տեսակները:

«Ամուր ասպազենի համար անպայման կգտնվի հատու զենք»՝ ազդարարում է դառսական ասացվածքը: Մտքի համակարգերի ձգտումն առ կատարելություն հենց սեփական կործանման ձգտումն է: Իդեալական համակարգն անհապաղ քանդվում է, հանց բուրգ դրված իր բարձունքին: «Մեծ միասնականը» դառսական մտքում՝ դա այն է, ուր կործանվում են բոլոր մտային կառուցվածքները, երբ դրանք սպառում են իրենց: Դա ամենայն ինքնամեկուսացման վերջն է՝ ամենաթափանց Ուրիշի աշխարհը:

Չժուան-ցզին սիրում է ծանակել դոգմատիկ փիլիսոփաներին, որ ազատ են լոկ այլոց ժխտելիս, իսկ



## Գեղարմ Աշուն 2017

ներքուստ կաշկանդված են սեփական կանխակալ գաղափարներով: Նա ծաղրում է այն համակարգերի ստեղծողներին, ովքեր կենում են այն պատրանքային վիճակում, թե իբր իրենք ազատ են ճշմարտության համար և հակադրվում են ավանդույթի ժառանգորդներին: Արտաքննապես վերջինիս շրջանակներով կաշկանդված Ավանդույթի ժառանգորդներն իրականում ազատ են ներքնապես դրանք հաղթահարելու մեջ, գերադասելով փորձի շնորհած հարաբերակցությունը Ուրիշի հետ ճշմարտության հաղորդման խորությունն ինքնամեկուսացած սուբյեկտի մակերեսային յուրատիպությունից: Հնարավոր է, Չժուան-ցզիի ժառանգության ճակատագրում՝ «մասնավոր մտածողի», որ դարձել է ողջ չինական քաղաքակրթության խորհրդանիշը, վերարտադրվել է Ավանդույթի այդ սկզբունքը, անվերապահ Միասնության սկզբունքն՝ առանց միասնականության: Համանման մի բան մենք կարող ենք դիտարկել և Չժուան-ցզիի մտքի ներքին կազմավորման մեջ, որի հիմնական կատեգորիաները միմյանց հետ կապված են ավելի անմիջական և անառարկելի, քան դա կարող է արվել տրամաբանա-քերականական էկզեզեզայի միջոցներով: Հենց այդ կետում հին չինացի մեկնիչները բավարարվում են տեքստաբանական բացատրություններով և անտեսում են հին դաոսի մտքի իրական խորությունը: Համապատասխանությունները, որոնք դուրս են բերվում տեքստային համեմատություններից, տվյալ դեպքում հանդես են գալիս՝ որպես երկրորդական և անէական՝ համընդգրկուն, անկարագրելի և տրամաբանորեն չմիավորվող կատեգորիաների առջև: Չժուան-ցզիի զրույցները, նրա հին

հետևորդ ժուան-ցզիի խոսքերով ասած, հիանալի են այն բանով, որ բերում են առ «բարձրագույն գաղափարի ըմբռնումը» (իսկ կոնֆուցիականությունը ժուան-ցզին անվանում է ուսմունք մասնավորությունների մասին): Կամ, ինչպես զուտ չինական պարզությամբ, ինչը որ հաճախ եվրոպացիներին անթույլատրելի միամտություն է թվում, արտահայտվել է Չժուան-ցզիի մեկ այլ չինացի մեկնիչ՝ Սյաո Տյանշին. ««Չժուան-ցզի» գրքի ներքին, արտաքին և խառը բաժիններն իրականում արտահայտում են միայն դաոս: Հասկանալով դա, կարելի է խոսել Չժուան-ցզիի ուսմունքի մասին»: Չժուան-ցզիի ժառանգության ընկալման պատմությունը ժամանակակից աշխարհում գրավիչ և, անկասկած, ուսանելի սյուժե կլիներ: Սակայն այն արժանի է հատուկ ուսումնասիրման առարկա լինելու: Բավական է ասել, որ հիմնավոր դաոս գրողի ստեղծագործությունը միշտ համեմատել ու համեմատում են Արևմուտքի ամենատարբեր, երբեմն՝ իրարից շատ հեռու մտածողների հետ՝ թե՛ հին և թե՛ հատկապես նոր: Որոշ հետազոտողներ փնտրում են դաոսների ուսմունքի առասպելաբանական և շամանիստական հիմքը, ուրիշները դրանում ապշեցուցիչ զուգահեռներ են գտնում ժամանակակից արվեստի գեղագիտական նորմերի և ժամանակակից գիտության սկզբունքների հետ: Յուրաքանչյուր այդպիսի զուգորդություն կարող է վիճելի համարվել: Ինչը որ անվիճելի է, այդպիսի զուգորդության հենց փորձերի անհրաժեշտությունն ու ինքնաբերականությունն է: Դրանք թելադրվում են ժամանակակից դարաշրջանի և մշակութային ավանդույթների ինտենսիվ փոխներգործության պայմաններով, և ավելին, մշա-

## Գեղարմ Աշուն 2017

կույթի զարգացման համընդհանուր օրինաչափություններով: Միայն հարաբերվելով այլ մշակույթի, մարդիկ հասկանում են, որ իրենք մշակույթի տեր են: Սակայն մշակույթների երկխոսությունը պահանջում է հրաժարում մտահայեցական սահմանափակությունից: Այն պահանջում է, որքան էլ տարօրինակ է, հրաժարում իմացության և երկխոսության պայմանների կանխադրումից: Ճշմարիտ երկխոսության պայմանը՝ պայմանների բացակայությունն է: Շեշտենք, որ իմաստավորում է պահանջում ոչ միայն Չժուան-ցզիի ստեղծագործության այս կամ այն մասը, այլ նաև այդ մեկնությունների հենց բազմաբանական փաստը: Չժուան-ցզիի գրքում բազում հեղինակային ձայների առկայությունը և դառս գրողի գնահատման անմիանշանակությունը ժամանակակից աշխարհում պիտի հասկացվեն՝ որպես նույն կարգի երևույթներ, և ավելին՝ որպես մտածողության ինչ-որ համապարփակ օրինաչափությունների վկայություններ: Բայց ի՞նչ է նշանակում ընդունելը, որ խորհրդածությունը կարող է դառնալ ազատ ստեղծագործական խաղ, ուր մարդը բացահայտվում է՝ որպես գոյության անվերջանալի հեռանկար: Դա առաջին հերթին՝ նշանակում է հրաժարում մտքի ինքնամեկուսացումից էության փիլիսոփայության մեջ: Պատմականորեն մարդաբանական հեռանկարի իմաստավորումը մշակույթների հետազոտման մեջ հնարավոր դարձավ արևմտակտ-հունանիտար ռացիոնալիզմի ժառանգության հաղթահարման շնորհիվ: Ինչպես հայտնի է, վերջին գլխավոր գործող անձը զուտ սուբյեկտն էր, որ ինքնահայեցման ճանապարհով բացահայտում էր մտածողության համապար-

փակ օրենքները: Ինքնանույնականության, գիտակցության իմացաբանական անշարժության պահանջը նշանակում էր, սակայն, ոչ այլ բան, քան կենաց փորձի ինքնասահմանակում, ճշմարտության չափանիշը դառնում էր ինքնամեկուսացումն աշխարհից: Դասական ռացիոնալիզմի փիլիսոփան ինքն իր մեջ փնտրում էր ճշմարտությունը ինքնադատարկման գնով: Որքան ավելի էր նա գիտակցում իր ինտելեկտուալ մեծությունը, այնքան ավելի սուր էր զգում իր սահմանափակությունն իրական կյանքում: Եվ որքան ավելի շատ էր նրա վստահությունը ամրակուռ գիտելիքին տիրապետելու մեջ, այդքան ավելի հստակ էր նա գիտակցում իրեն այդ վիճակում, ինչը որ խախտում էր իր համար անխախտելի սուբյեկտիվ-դոգմատիկ էգոյի սահմանները: Արևմուտքի իդեալիստական փիլիսոփայության պատմությունը, մնացյալ բաներից զատ, հետևողական խորացումն է մարդու մեջ անմատչելի և, այդուհանդերձ, միշտ խախտվող սահմանի թեմայի մեջ: Սուբյեկտիվիստական ռացիոնալիզմի ներքին հակասականությունն արտացոլվել է Նոր ժամանակի մշակույթի մի շարք երևույթներում, ողբերգական կամքի և նիհիլիզմի մոտիվներում, ոճավորված գրականության, որպես հանցավոր ցանկության պատկերման, ձևավորման մեջ, «անիծյալ բանաստեղծի» ռոմանտիկ կերպարում, տարաշխարհիկ բաների ճաշակում, որպես ընտել բանից առարգելված, արտասովոր, օտար միջավայր փոխադրվելու տենչ, որպես ինքնանեղացման փոխարինման ձև: Իր բովանդակությամբ հոգեբանական ռացիոնալիզմի այդ տեսակին համապատասխանում են անցյալ դարում

մողայիկ պատմական կամ ազգագրական պատումները, որոնք հրապարակավ կամ ոչ հրապարակավ հիմնված էին մարդկանց զգայական բնույթի միասնության գաղափարի վրա: Ժամանակակից արևմտյան փիլիսոփայության մեջ հումանիտար ռացիոնալիզմի քննադատության սպեկուլյատիվ սինթեզները դարձան ֆորմալ կառուցվածքների որոնումները, որոնք կոչված էին դարձյալ բացահայտելու ճշմարտության համապարփակ չափանիշները, բայց այս անգամ՝ առանց սուբյեկտի ինքնավար կամքի: Ստրուկտուրալիզմի դրույթները նրա ծրագիրն անհրազորօժեի են դարձնում: Առաջին, ապրիորական կառուցվածքների որոնումը, որն ունի իր սեփական, արտաքին աշխարհի հետ չկապված բովանդակությունը, բացահայտում է իմաստի տիպիկ կարտեզիանական աիդ և արվում է մշակութային ձևերի դատարկման, անդիմության գնով: Երկրորդ, ապրիորականության վրա ձևելով «մտածողության կառուցվածքները», ստրուկտուրալ վերլուծությունը դատապարտված է պտտվելու արդյունքի և տեսության համապատասխանության արատավոր շրջանում: Այդ կառուցվածքներն ինքնին միայն ինտերպրետատիվ են և չեն կարող հավասարեցվել լեզվին՝ որպես կառուցվածք ծնողի: Անպտուղ է և ստրուկտուրալիզմի հավակնոտությունը առ փոխանցման սխեմաները՝ մշակույթի գանազան «կողերի» փոխանցման և անցումների բացահայտման ասպարեզում, քանզի ստրուկտուրալիզմի և հակառեալիզմի դիտարկվող համապատասխանությունների հաճախականությունն օբյեկտների միջև չի կարող ճշմարտության չափանիշ լինել: Ակնհայտ է, որ ոչ դասական ռացիոնա-

լիզմի ինքնամեկուսացված սուբյեկտը, ոչ էլ ստրուկտուրալ տեսությունների անանուն սուբյեկտիվությունը (որի հակառակ կողմն է անհատական կամքի իռացիոնալ ինքնահաստատումը) չեն ակարող դառնալ մշակույթների կենսունակ և ստեղծագործական երկխոսության հիմք: Այդպիսի հիմք կարելի է գտնել լոկ մարդուն պատմական էակ համարելու մեջ, այսինքն՝ որոշարկելի էակ, բայց դրա հետ մեկտեղ՝ փոփոխության ունակ, բաց աշխարհի առաջ և այդ պատճառով՝ որևէ ձևակերպման մեջ չտեղավորվող: Մշտապես ինչ-որ բան լինելով, մարդը երբեք ինքն իրեն հավասար չէ: Կենդանի արարածների մեջ նա միակն է, ով առավելություն ունի ինքնագիտակցելու իրեն այն չափով, որքանով նա ճանաչում է ինչ որ ինքը կա և ինչ որ ձգտում է լինել: Նա միակն է, ով գիտի, թե ինչ բան է սեփական անորոշությունն ապրելը: Նա չի կարող չկենալ աշխարհից դուրս, խոսքով և մտքով բաժանելով ինքն իրեն աշխարհից: Բայց դա իրագործելի է լոկ այնքանով, որքանով նա մնում է աշխարհի հետ և նշանակելին կտրված չէ նշանակողից: Եվ եթե մարդկային գոյության սրտում թաքնված է խզումը, ապա արդյո՞ք այստեղից չի հետևում, որ մարդու մեջ ամեն ինչ անկատար է, անավարտ, որ ամեն ինչ նրա մեջ ճանապարհ է: Իմաստության՝ որպես ճանապարհի (Դաոյի) ձևակերպման մեջ շատ ավելի խորունկ իմաստ է թաքնված, քան այն, որ կարող է հաստատվել վերլուծության միջոցներով: Մենք չենք կարող ճանաչել մեզ այլ կերպ, քան ինքներս մեր հանդեպ հեռավորություն հաստատելով: Եվ, ո՞վ գիտե, գուցե թե, որքան շատ լինի այդ հեռավորությունը, այնքան շուտ մենք նպատակին մոտ կլի-

նենք: «Մեծագույն ճանապարհորդը բակից դուրս չի գալիս»: Մենք պիտի ընդունենք դառնական ասույթի տառացի իմաստը: Միջմշակութային երկխոսության պարադոքսները, որ հիմնված են «այլության» (ըստ Ա.Յ.Գուրկիչի խոսքի) կանխավարկածի վրա, որ բազմիցս նշվել է գրականության մեջ: «Արդյո՞ք մենք չենք կարող,- հարցնում է, օրինակ, ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Ռիկյորը,- քննադատության ենթադրյալ խզման սահմաններից անդին, հենց գերագույնս հեռացված է մեզանից և գերագույնս մոտ է մեզ Լարունը «քոնի» և «օտարի» միջև մեկնաբանման մի մասն է, որի միջոցով ինքներս մեզ ենք վերագրում տվյալ ավանդույթի որոշակի իմաստը: Պոլ Ռիկյորի նկարագրած իրավիճակը չի կարելի ստատիկորեն դիտարկել. «Մարդաբանափիլիսոփայական հետազոտման առավելությունը, հավանաբար, բացատրությամբ չի սահմանափակվում:

Ճանապարհորդությունն առ մշակույթի համապարփակ հիմքը բարօրություն կլինի, եթե միայն այն փոխի հենց ճանապարհորդին: Խոսքը, ըստ էության, մշակույթի փոփոխությունների մասին է, որոնք նախօրոք չեն հաշվարկվել, անկանխակալ և այդ պատճառով՝ լիովին ազատ, բայց միաժամանակ՝ մեթոդաբար հետևողական: Խոսքն, ըստ էության, մշակույթի կենաց աճի, մարդկային գոյության սահմանների միջոցով մշակույթի ինքնորոշման մասին է: Միայն առկա գոյության տրվածությունը հաղթահարելու պատրաստակամությամբ է դրսևորվում մարդկության ստեղծագործական պրոցեսը, որ սահմանվում է մշակույթը պահպանելու ձգտումով, ի դեմս նրա մշտառկա կործանման: Մարդը տրվա-

ծություն չէ, «երևույթ» չէ: Նա մշտապես ինքն իրեն անցնում է: Նա գոյություն ունի և, ավելին, դառնում է մարդ, լոկ հարցանելով իր գոյության մասին: Բայց չի կարելի մտածել, որ նրա գոյությանը վիճակված է մնալու հավերժական տարակուսանքի առարկա: Մարդու իր մասին հարցանելու հենց պատրաստակամության մեջ թաքնված է մարդու էությունը: Դրանք ենթադրում են մարդու մեջ ինչ-որ բանի գոյությունը, ինչը դրդում է նրան այդ հարցերը տալու, ինչը դրանք հնարավոր է դարձնում: Եվ տվյալ դեպքում՝ որքան քիչ է վստահությունը իմացությանը տիրապետելու մեջ, այնքան էլ, որքան էլ տարօրինակ է, ավելի շատ է վստահությունը ամենայն խորհրդածության թաքնված պայմանի առկայության մեջ, այդ նախնական ճշմարտությունը մարդու մասին, որը կարող է մտքով հասանելի լինել, բայց չի կարող նրա աճապարությունների առարկա լինել: Մարդը չի կարող ճշմարտությունից հեռանալ: Բայց նա կարող է գալ առ այն: Անշուշտ, ճանապարհը «քեզնից դեպի քեզ» անորսալի է տրամաբանական բանաձևերի համար, այն գերազանցում է դուալիզմը, որը հաստատում է լեզուն՝ շարժվելով առաջ, մենք այստեղ ենք վերադառնում, բարձրանալով՝ իջնում ենք, դուրս գալով՝ ներս ենք մտնում: Այդ երկակի շարժման մեջ՝ իրականության ողջ բնույթն է, որը մեզ տրված է ոչ որպես թեզիս, այլ որպես ինչ-որ իրացում, շարժում, իրադարձություն: Յենց իրադարձություն, գոյության փաստերի համավիճակ, որն ասես գիտակցության և գոյության սահմանն է, միաժամանակ՝ դրա միավորող և բաժանողը: Դրան համապատասխանում է իրաց կարգը վերականգնելու հաստատակամությունը,

որը նախորդում է իրերին դիմակայելու մեր ունակությանը, ամեն ինչ սահմանելու հաստատականությանը, ամենայն ինչ իր տեղում թողնելով, «ըմբռնման» գործողությունը, գոյության և մտածողության դիմամիկայի հաղթահարումը սուբյեկտիվացված գիտակցության սահմանափակությունից: Խզման անխուսափելիության անանցանելիության սահմանափակությամբ այն վերադարձնում է առ աշխարհի կատարյալ ամբողջականությունը: Այն տանում է դեպի մեր ընդհանրական տունը, որը, ըստ Թ.Ս.Էլիոթի.

*Ողջ կյանքն է, այրվող  
յուրաքանչյուր վայրկյանում.  
Եվ ոչ պարզապես մեկ մարդու  
կյանքը,  
Այլ նաև հիմնավորը քարի, որն  
անհնար է կռահել...*

Յինավուրց քարի կյանքը՝ տարածության մեջ խտացված հավերժությունը: Կոնկրետացված անսահմանը: Ահա նշաններն իրականության, որ երբեք անտարբեր չի թողնում, բայց միշտ ոչ մեկին է: Այդ իրականությունն աշխարհի անկործանության «համառ փաստն է» (Ա.Ն. Ուայդհեդի արտահայտությունը), որպես ամբողջություն վերցրած, այն, եթե դիմենք չինական եզրին, համագրավ «դատարկությունն է», որ երևութական աշխարհից անբաժան է: Ամենաթափանց դատարկության անպարագրելի հեռանկարում իրերը չեն հղում ինչ-որ բնազանցական իրականության, այլ հենց իրենք բացում են իրենց՝ հաստատելով իրենց անհատական գոյության բացարձակ բնույթը: Այդպես մենք ըմբռնում ենք տարբերությունների անպայմանականությունը համապարփակ ան-տարբերակման մեջ: Ամերիկացի բանաստեղծ Էզրա Փաունդը, հղում

անելով հին չին փիլիսոփա Մեն-ցզիին, յուրովի է արտահայտել աշխարհի ընկալումն իր «կոնկրետ դատարկության» մեջ.

*Աշխարհում կա, ասաց Մեն-ցզին  
միայն Phenomena Monumenta-ն,  
Բնության մեջ կան գրություններ,  
որոնց համար բառեր պետք չեն,  
կաղնու տերևը երբեք չինարի  
տերև չէ...*

«Մոնումենտալ երևույթները», նրբերանգները, որ վերածվում են գոյության հիմնարար փաստերի, հակադրային միասնության առեղծվածն անցողիկ և անփոփոխ, անհատական և ընդհանրական՝ ահա լեզվին և ընկալմանը նախորդող իրականության անվանումը, որը դրսևորվում է մարդկային ինքնաճանաչողության հեռանկարում: Այդ ճանաչողությունը հաստատում է անվերջավոր իրերի վերջավորության մեջ: Այն հիմնվում է ոչ թե մարդու անվերջավորության ազդարարման վրա, այլ նրա վերջավորությունն ընդունելու վրա:

Խորհրդածության այդպիսի հեռանկարում աշխարհը պայծառատեսանում է ամենայն գոյողի ողջ ոչ-դուլության մեջ, որը գերազանցում է նույնականության և տարբերության տրամաբանությունը, մասը զատված չէ ամբողջից, իրերի միջև ամենայն հարաբերություն հղի է նույնականությամբ: Օբյեկտների ցանկացած դասավորություն վկայում է համանման մասերի չդրսևորված կառուցվածքի մասին: Պատճառային դետերմինիզմն այստեղ տեղը զիջում է գոյությանը համամասնակցությանը՝ որպես միջնորդավորման անսահման ուժի: Այսպես, պատկերների իզոմորֆիզմի լույսի ներքո փոխակերպությունների համընդհանուր հոսքը յուրաքանչյուր պահը

դրսևորում է «ամբողջությամբ վերցրած աշխարհի» անկործանելիությունը և, հետևաբար, կյանքի անկործանությունը, որքան էլ որ վաղանցիկ լինեն նրա դրսևորումները:

Պատկերների այդ իզոմորֆիզմը ունի ոչ միայն արտաքին, տարածական չափում, այլ նաև տարածվում է հենց գոյության վրա: Նա հաստատում է իրականությունը՝ որպես յուրատեսակ գոյության ավելցուկ՝ որպես ուժի ավելցուկ: Հին չինական ասացվածքի խոսքերով՝ «սառույցը ջրից է ծագում, բայց այն ջրից պաղ է»: Օկամի ածելու սկզբունքը, որ արգելում է անհիմն բազմապատկել եությունները, իզոմորֆիզմի սկզբունքը կամ համամասնակցությունը գոյությանը, հակադրում է «նարմինը նարմնի մեջ, «սաղմը նարմնական արգանդում», «լույսը լույսի մեջ» և այլ պատկերները: Ամենայն ինչի հաշվարկմանն այստեղ հակադրված է մտածողության հեռանկարը, որի մասին ասվում է Չժուան-ցզիի երկխոսության մեջ, որը չի պահպանվել նրա գրքի տեքստում, բայց հայտնի է այլ աղբյուրներից.

- Արդյո՞ք աշխարհը սահման ունի:

- Անսահմանի ետևում կա ևս անսահմանություն:

Իզոմորֆիզմի կամ գոյության ոչ-դուալության հասկացությունը թույլատրում է դնել աշխարհի պատկերների բնույթի մասին հարցը, մասնավորապես, դառնական տեքստերի մասին հարցը, չէղելով փաստերի կոնկրետությունից և միաժամանակ պահանջելով դրանց մեկնությունը չդրսևորված ամբողջականության լույսի ներքո, այն հիմնավորում է խզման և ժառանգորդության համընկնումը, առանձին փաստերի միասնականությունը և նրանց ներքին հեռանկարի համընդհանրությունը: Ըմբռնման պարադոք-

սալ բնույթը տվյալ դեպքում լավ է ձևակերպել Լ.Վիտգենշտեյնը, ով նկատել է. «Մենք ասում ենք, որ մենք հասկանում ենք նախադասությունն այն իմաստով, որ այն կարող է փոխարինվել այլ մեկով, որ նույն բանն է նշանակում, բայց այն իմաստով, որ այն չի կարող փոխարինվել այլ մեկով»: Իմաստը՝ դա նույնականությունն է տարբերության մեջ, ամենագո Ուրիշը, որը կարելի է «բացահայտել» կամ «ճանաչել», բայց անկարելի է նկարագրել: Ամեն մի արտահայտության ընկալումը պիտի միջնորդավորվի որպես ամբողջություն իրականության ըմբռնումով, բայց այդ ամբողջականությունը գոյություն չունի՝ առանց միակ փաստի տվյալ արտահայտության: Եվ եթե իրականությունն անսահման հեռանկար է, անթափանց ամենայն սահմանափակ հայացքի համար, նրա բացահայտումը հառնում միաժամանակ՝ որպես նրա քողարկում:

Դե որքա՞ն է պետք ըմբռնման համար: Ո՞րն է իմաստի այն նվազագույնը, որ ստեղծում է խորհրդածությունը, որը թույլատրում է հասկանալ իրերի իմաստավորումը: Մենք դեռևս կարող ենք միայն ասել, որ ըմբռնումը սկսվում է այնտեղ, ուր դատողության կարգը, կարծես թե, ինքն իրեն հաղթահարելով, մեզ բերում է դեպի գոյության կարգը: Մենք կարող ենք այդ ունակությունը կապել խոսքի բանաստեղծի գործառնությին, որ զանց է առնում լեզվի սովորական կիրառումը՝ որպես օբյեկտիվացված աշխարհի նկարագրության միջոց: Լեզվի այդպիսի կիրառումը՝ «իմաստի պոեզիան», հակադրվում է լեզվաբանական ռեդուկցիոնիզմին, լեզվի ֆորմալիզացիայի փորձերին:

Իմաստի վերածնման գործողությունը նշանավորում է դարձն առ գի-

## Գեղարմ Աշուն 2017

տակցության համագրավ ամբողջականությունը՝ ինքնահայեցող մտքի բյուրը, մեզ համար անպարագրելի, անսպառ և այդ իմաստով՝ «մոռացված»։ Մտատեսությունը պահպանվում է անսահմանի «տեսությամբ», նշանը պահպանվում է խոսքով, իսկ խոսքը՝ սիմվոլով։ Այդ դեպքում փիլիսոփայելը ձեռք է բերում մտքի մոռացված ելակետերի լուսաբանման բնույթ, այն տանում է հակառակ ուղղության ճանապարհով, որ անցել է միտքը։ Փույթ չէ, թե ինչից սկսես, շրջանագծի կենտրոն կարող ես ընկնել նրա ցանկացած կետից, գիտակցության ցանկացած փաստ կարող է դառնալ ուղեցույց մտքի կենտրոնացման համար։ Այստեղ մտածողության համար բացվում է անպայմանական դառնալու հնարավորությունը, չկորցնելով նաև մեթոդական խստությունը։ Մենք շարժվում ենք ասես թե մտքի հակառակ ուղղությամբ, գալով մեր խորհրդածությունների վերջին, բացահայտում ենք, որ եկել ենք դրանց ակունքին, որ մենք լոկ հիշում էինք, այլ ոչ թե առաջ շարժվում։ Բայց մենք գիտակցում ենք, որ այլ ճանապարհ դեպի թեզ չի կարող լինել։

Մտքի այսպիսի խնդիրը շատ առումներով արմատապես տարբերվում է մտածողության գործողության ըմբռնումից դասական ռացիոնալիզմի եվրոպական փիլիսոփայության մեջ։ Եթե այնտեղ միտքը հիմնավորվում էր կամքով առ սուբյեկտի միասնականացումը աշխարհի սուբյեկտ-օբյեկտային կոտորակման հաշվին, ապա ամենագրավ «դատարկության» փիլիսոփայության մեջ գիտակցությունը, ընդհակառակը, «ազատ է արձակվում» իր նախաստեղծ լիության մեջ։ «Մտքի մոռացված հոսքի» փիլիսոփան չի կամենում իրեն աշխարհից պոկել, «եսը»՝

«ոչ եսից», և թույլատրում է սուբյեկտի բազմակիությունը՝ հանուն ողջ գոյողի համագրավ միասնականության։ Այդպիսին է արևելյան մտքի դիրքորոշումը, որն իր տարբեր ձևերում բացում է չցանկության խորությունը մարդու մեջ։

Չցանկությունը, որի մասին խոսում ենք, իրականում նշանակում է՝ ցանկության, բնության ինքնաբերական կյանքի ամենայն տենչի վերականգնումը։ Այն ազատագրում է միջնորդավորող երևակայության ուժը, որն ունակ է բերելու ըմբռնման, հաշտեցնելով էքզիստենցիալ խզումները, որի մասին են վկայում գիտակցության սիմվոլները։ Այն բացահայտում է և միաժամանակ հաստատում է իրականությունը՝ որպես մտերմիկ ուրիշ։ Այսպես, ճշմարտությունը ներկայանում է՝ որպես հանդիպում Ուրիշի հետ անսահման մեծ տարածության միջոցով՝ միշտ անսպասելի և, այդուհանդերձ, սպասվող, որպես փորձություն, որ ազատագրում է պատրանքներից և սահմանում է կյանքի անվերապահ նշանակությունը, որպես մաքուր փոխշփում, մտերմություն հանուն մտերմության, վավերականության նախաստեղծ արժանահավատությունը։ Թեպետ ըմբռնումը տվյալ դեպքում պահանջում է զուտ ստեղծագործական ներըմբռնում, այն դրանով չի սահմանափակվում։ Իրականությունը հարաբերությունների հարաբերության ձև է, և մենք գալիս ենք դրան միջնորդավորված, մեր փորձի մեթոդաբար հետևողական քննադատության միջոցով։ Դա իրականություն է, որ տրված է մեր ըմբռնմանը, չի հանգեցվում ո՛չ փորձին, ո՛չ իմացությանը, բայց գրկում է թե՛ մեկը և թե՛ մյուսը։

Վերն արտահայտված նշումները

ոչ-դուալության և համագրավ դատարկության մասին՝ որպես գոյության էական հատկանիշների, չցանկության մասին՝ որպես աշխարհի զուտ մարդկային սկզբի, մոռացության մասին՝ որպես իրականության բացահայտման միջոցի, մեզ նախապատրաստում է դառնական ուսմունքի ընկալմանը, որտեղ բոլոր այդ հասկացություններն արմատական դեր են խաղում: Մեկ անգամ ևս նշենք, որ խոսքը փիլիսոփայական համակարգի մասին չէ և ոչ էլ նույնիսկ որոշակի մշակութային ավանդույթի, այլ այն ավանդույթի մասին, որ ֆորմաներ չունի, իր անպարագրելիության մեջ մթին գոյելու հեռանկարի մասին: Այդ ինքնավկայությունների համապարփակ միջավայրը, որ ի մի է բերում մշակույթների երկխոսությունը և մարդու ինքնահաստիքությունը, հառնում է (ըստ էության անհասկանալի) ամենագո Տարբերության՝ որպես ոչ տարբերություն հասկացությունը: Անշուշտ, գիտակցելու պահանջի մեջ, որ միշտ գոյություն ունի ինչ-որ այլ բան, հասկանալ անհասկանալին և հասու լինելու անհասանելիին ձգտման մեջ թաքնված է անկործան պարադոքսը: Սակայն ապրում է այդ պահանջով, դրանում է աճում մարդը, եթե նույնիսկ կյանքը նրա համար՝ անհմացության առարկա է: Մի՞թե դրան չեն, կամա թե ակամա, ենթարկվում մշակույթների հետազոտողները, ովքեր ունակ են հասնելու իրաց դասակարգման ամենատարաբնույթ բանականության ըմբռնմանը, ինչը ենթադրում է նրանց մեջ ինչ-որ չսահմանվող, ինչ-որ աքսիոմատիկ բաների վրա չհիմնված, ասես ինչ-որ երկրորդ պլանի բանականության առկայությունը: Չժուան-ցզի մարդու մեջ այդ ունակությունն անվանում է մտածելու ընդունակություն, որ բանականության

թույլտվությունը չի խնդրում, «առանց թևերի թռչելու» ունակությունը: Եվ թող ֆիզիկան կամ կենսաբանությունը պնդեն, թե մարդը չի կարող թռչել: Թռիչքի զգագողությունը խորթ չէ մարդուն:

Այս մատնաշված չարտիկուլացված գերռացիոնալության նշանակությունը, որ նախորդում և պարագրկում է բոլոր պատմականորեն զննվող տրամաբանության համակարգերը՝ ապագայի գործն է: Այժմ լոկ կարելի է ասել, որ դրան հասու լինելը ենթադրում է խորհրդածությունը հասկացությունների իր սահմանի մասին, որում դրանք փոխարկվում են «ուրիշի»: Համանման անցումը կազմում է նմանատիպ տրամաբանության էությունը: Դա նշանակում է, որ որքան քիչ է տարբերակելի այդպիսի գերտրամաբանությունը, այնքան անկասկած է նրա առկայությունը: Դա ամենագո Սահմանն է, որն ամեն ինչ ժողովում և ամեն ինչ բաժանում է: Չժուան-ցզիի գիրքը ծնվել է այդ սահմանի և մարդկային կյանքում դրա նշանակալիության մասին խորհրդածելուց, որ գերագույնս այժմեական է մարդկության բոլոր հին թե նոր մշակույթների հանդիպման մեր դարում:

Ինչպիսի՞ն է, ուրեմն, Չժուան-ցզիի ժառանգության դիտարկման լավագույն կարգը: Այդ հարցին կարելի է տարակերպ պատասխանել: Բայց ամեն դեպքում՝ հարկ չկա դառն փիլիսոփայի գրությունները համարել աշխարհի տարբեր ընկալման ձևերի բեկորներ: Մեզ չափտի խաբի նրա խորհրդածությունների երևութական նկարագրությունը կամ դատողությունների թեթևալիկ տոնայնությունը: Դրանց ետևում թաքնված է ավելի բարձր, կամ, եթե կկամենաք, ավելի խորը կարգի միասնություն, քան արտաքին, ձևակարգված միասնությունը: Այդ միասնության բացահայտումը, այդ



## Գեղարմ Աշուն 2017

«բարձրագույն գաղափարի» կամ «անպարագրելի հիմքի», հին չին դաոսի «անհատակ ակունքի» (եթե ուշադիր վերաբերվես այն բանին, ինչ որ նա ասում է իր ստեղծագործության «նոռացված» առանցքակետի մասին), հենց մեր խնդիրն է: Գրքում, որ դիմում է լայն ընթերցողին, թող թույլատրելի լինի բանասիրական նրբերանգները քամահրելը և զոհելը «լուսաբանման լիությունը»՝ հանուն որքան հնարավոր է հիմնավոր, թեև, անհրաժեշտաբար, միշտ անավարտ, հնամենի դաոս գորդի մտքերի առանցքակետի էքսպոզիցիային: Անշուշտ, այդ «բարձրագույն գաղափարի» խուսանավող առկայությունից զատ, Չժուան-ցզիի՝ իրեն վերագրվող գրքում, կան նաև դաոսի վերին հասողության ձևավորման փորձեր և ռացիոնալ սխեմաներ, որ պատկանում են ողջ չինական ավանդույթին, և մեկ անգամ գտնված գրական հնարքի ոչ այնքան հաջող նմանակումներ: Միշտ էլ կգտնվեն ոչ իրենց ցանածը հավաքելու սիրահարներ: Բայց հնամենի դաոսի ճանապարհի ճշմարտությունը նրանց ճիգերից ավելի շատ չի տառապում, քան բյուրեղի մակերեսը եղունգի հպումից: Ընդունենք, ուրեմն, Չժուան-ցզիի խոսքերը՝ որպես Միասնական խոսքի յուրատեսակ տարընթերցումներ և այլացումներ, որպես անսպառ «գլոսոլալիա», հիշելով այն մասին, որ ճշմարտության որոնումներում չկա աուտենտիկ տեքստ, այլ կամիայն աուտենտիկ փորձ: Փորձ, որը ոչ մեկին չի պատկանում:

Չժուան-ցզիի գիրքը միշտ գրավել և գրավելու է ընթերցողներին մտքի և երևակայության խիզախությամբ, անկաշկանդ սրամտությամբ, խորհրդածությունների խորությամբ և ճշգրտությամբ ամենատարակերպ առարկաների մասին: Եվ, այդուհանդերձ, նրա

հնայքի ամենակարևոր գաղտնիքն այլ տեղ է, ինչ-որ բանում, որն անհամեմատելի ավելի անտեսանելի, անպաճույճ, պարզ է թվում, այնտեղ արձանագրված է մարդու ճշմարտության որոնումը, որն իրականանում է գերագույն անկեղծությամբ և լիովին վստահությամբ առ ինքը, հենց ինքը, մարդու ներքին ճանապարհը՝ իրենից դեպի ինքը: Եվ ավելին, այդ ճանապարհը սկսելու անկեղծ ցանկությունը: Քանզի այդ ճանապարհը սկիզբ ունի, բայց այն վերջ չունի:

Թեպետ Չժուան-ցզին, ինչպես հին չինացի փիլիսոփաներից և ոչ մեկը, պաշտպանում է մարդկային քննադատական մտահայեցության իրավունքները, չկա առավել վատ ծառայություն նրա գործին, քան նրան ներկայացնել՝ որպես ավարտուն և օբյեկտիվ ճշմարտությունների հավաքածուի տեր մարդ: Չանապատասխանաբար՝ շարադրանքն այս գրքում ենթարկված չէ որևէ վերացական սխեմայի:

Չնայած որոշ թեմաների առանձնացմանը Չժուան-ցզիի ստեղծագործության մեջ, այն կոչված է ոչ այնքան տարբերակելու, որքան միավորելու, բացահայտելով ինչ-որ անպայմանական-անարտահայտելի եւ չդիմակավորված կապերը դաոսիզմի հասկացությունների եւ մոտիվների միջև: Ի դեպ, գրքի կոմպոզիցիան որոշակի չափով վերարտադրում է դաոսական մտքի շարժումը որպես վերադարձ առ իրականություն, որը ոչ թե թաքնված է մտահայեցության հեռավոր բարձունքներում եւ ոչ թե գիտակցության խուլ անկյուններում, այլ մշտապես գոյում է գործում է հենց կենաց առանցքում:

Ռուսերենից թարգմանեց  
Վարդան ՖԵՐԵՆՇԹՅԱՆԸ



**ԼԻ ԹԱՅ ՊՈ**  
/Չինաստան/

**ԽՈՂԵՐ ԱՆԴՈՐԲ ԳԻՇԵՐԻՆ**

Իմ անկողնու կողքին  
Շողն է պառկել լուսնի,  
Գուցե եղյա՞մ է դա,-  
Լավ չգիտեմ ես էլ:

Երբ նայում եմ վերև,  
Լուսինն է մշուշում,  
Երբ գլուխս եմ հակում,  
Հայրենիքս եմ հիշում

**ՃԵՐՄԱԿ ՉԿՆԿՈՒԼԸ**

Աշնան մեղմահոս գետն ի վար  
Ճերմակ ձկնկուլին եմ նայում:

Ասես եղյամ էր, թռավ  
Եվ հեռվում լողում է, հմայում:

Թախծում է հոգիս,  
Սիրտս կարոտից մայում է:

Մեն-մենակ կանգնած եմ  
Կղզյակում՝ ավազուտ, ամայի:

**ԼՈՒՇԱՆԻ ԼԵՈՆԵՐՈՒՄ ՆԱՅՈՒՄ ԵՄ ՋՐՎԵԺԻՆ**

Մայրամուտն է հրավառված  
Ետևում մութի,

## Գեղարմ Աշուն 2017

Ես նայում եմ շարքին լերանց  
Ու գոռ ջրվեժին:

Անտես հեռվից թռչում է նա  
Անտառներով թաց,

Ասես երկնից Ծիր-Կաթինն է  
Գահավիժել ցած:

### ԿԱՏԱԿՈՎ ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒՄ ԵՄ ԻՄ ԸՆԿԵՐ ԴՈՒ ՖՈՒԻՆ

Լեռան կատարին,  
Ուր հակվել են վար եղևնիք կանաչ,  
Դու Ֆուին տեսա պատահմամբ,-  
Տոթ, արևոտ էր միջօրեն:

Թույլ տվեք իմանամ, ի՛նչ ընկեր,  
Ինչո՞ւ եք նիհարել, դարձել անճանաչ:  
Իսկապե՞ս այդքան դժվար է  
Տող-տողի ետևից շարելը:

### ԼՈՒՄՆՅԱԿԻ ՏԱԿ ԽՄՈՒՄ ԵՄ ՄԵՆԱԿ

Ծաղկունքի մեջ, գիշերվա դեմ  
դնում եմ կուլաս

Ու անընկեր կո՛ւմ եմ անում  
գինուց ցուցլան:

Բայց այդ ժամին ես լուսնին եմ  
կանչում, որ մոտ գա,

Մեկ է՛լ շուքիս, հանց թասընկեր  
երեքով դարձանք:

Իսկ լուսինը,- հարցնում եմ ես,-  
մի՞թե կկոնձի,

Եվ մի շուքն էլ, թեպետ նա միշտ  
հետևում է ինձ:

Լուսին-ստվեր անբաժան են  
Եվ ես գիշերում

## Գեղարմ Աշուն 2017

Համաձայն եմ լավ քեֆ անել  
թեկուզ մինչ գարուն:

Ես երգում եմ՝ նվագիս տակ  
լուսի՛նն է պարում,

Ես պարում եմ՝ պա՛ր եմ գալիս  
շուքս երերում:

Եվ քանի դեռ մենք քեֆով ենք՝  
ուրախ ենք ու գոհ,

Թողած քեֆով՝ հեռանում ենք  
տարբեր ճամփեքով:

Ու ես նորից կյանքում պիտի  
թափառեմ մենակ:

Յտեսություն, կհանդիպենք  
Ծիր-Կաթինի տակ:

Թարգմանությունները՝  
Շանթ ՍԿՐՏՉՅԱՆԻ

**Անդրեյ ՎՈԼՈՍ**  
/Ռուսաստան/

**ՎԵՐԱԴԱՐՁ  
ՓԱՆՋԻՌՈՒԴ**  
/հատված վեպից/



Սամանյան տիրակալներին մակա-  
նուն էին տալիս նրանց մահից հետո:  
Էմիր Ահմադին սկսեցին կոչել Սպան-  
ված: Նրա քունը պահպանում էր առյու-  
ծը, որը կորյուն ժամանակ բերել էին որ-  
սից: Մի անգամ հանգստի սենյակների  
դռների մոտ, չգիտես ինչու, ո՛չ առյուծը  
կար, ո՛չ էլ պահապանները, և Ք. ծ. 913  
թվականի դեկտեմբերյան մի մութ գիշեր,  
այսինքն՝ երեք հարյուր տարուց մի փոքր  
ավելի անց Մուհամմեդ մարգարեին Մեք-  
քայից Մեդինա վերաբնակեցնելուց հե-  
տո, մի քանի թյուրք դուլամ առանց խո-  
չընդոտի մտան Էմիրի մոտ, որպեսզի կտ-  
րեն նրա կոկորդը: Որոշ ժամանակա-  
հատվածում պարզ չէր, թե ում ձեռքերի  
մեջ կրնկնի Խորասանի ոսկե խնձորը:  
Սակայն երջանկությունը, համենայն  
դեպս, հակվեց սամանյանների կողմը:  
Դավադիրներին կոտորեցին, ընդ որում  
մահվանից առաջ երկու հոգի ցույց տվե-  
ցին քաթիբին, այսինքն՝ Էմիրի գրասեն-  
յակի դեկավարին, որպես իրենց պարա-  
գլխի և կազմակերպչի: Տարօրինակ է դա  
լսելը,- երբեք նախկինում քարտուղար-  
նամակավարները նման ձեռնարկումնե-  
րի մեջ չէին մտնում: Այսպես թե այնպես,  
չարադավ քերականին, որը բծախնդրո-  
րեն ճիգ էր դնում հավատացնելու հանգ-  
ուցյալի համախոհներին իր անմեղությու-  
նը, փութով և արյունալի մեռցրին, որից  
հետո շեյխերը և Բուխարայի զինվորա-  
կանությունը, ոչ երկար խորհրդակցելով,  
միահամուռ թագավոր հռչակեցին Էմիր  
Սպանվածի ութամյա Նասր որդուն:

Նա հստակ հիշում էր իր բարձրացու-  
մի տամուկ ձմեռային օրը: Բուխարայի  
վրա ցածրիկ սողում էին ամպերը: Ստի-  
պելով հեծյալներին կկոցել աչքերը,  
ցուրտ քամին երեսներին բռերով մեկ  
թաց ձյուն էր շարտում, մեկ անձրևաշի-  
թեր: Չիամոռները յուղափայլում էին:  
Հարյուրապետերի մորթե գրակները  
նույնպես լողված տեսք ունեին: Խոշո-

## Գեղարմ Աշուն 2017

րամարմին դուրսը տղային դրեց ուտերին և անցավ առաջ: Երբ գորքերը ցասումնալի բղավում էին, ցնցելով տեղերով և բորբոքելով փռնչացող ձիերին, խոնավ օդը ծածանվեց տևական արձագանքի ռիթմով:

Հաջորդ օրը նրան, ինչպես դա պարտադիր էր նաև յուրաքանչյուրի համար, ով ելնում էր Բուխարայի գահին, բարձրացրին սպիտակ կոշմայի վրա և դրեցին Կանաչ քարին: Նա Արկի պալատում պառկեց հղկված մարդահասակ կանաչ մարմարի գուգահեռանիստին, լայնքն ու բարձրությունը՝ երկու արմնկաչափ:

Գուլամները տղային խնամակալ առաջադրեցին դպիր Ջայխանին:

Նա մարդ էր քաջատեղյակ, ողջամիտ, փութաջան և ուսյալ, ամեն ինչում խորաթափանց՝ վերաշնորհ ու գիտուն: Վեզիրության սկզբում նա գրում էր աշխարհի տարբեր երկրներ՝ խնդրելով ուղարկել արքայական պալատների կանոնակարգերն ու սովորույթները, ինչպես և՛ Ռումի, Թուրքմենստանի, Հինդուստանի, Չինաստանի, Իրաքի, Սիրիայի, Եգիպտոսի, Չանգիբարի, Չաբուլի, Սինդիի և արաբական երկրների պետություններին: Ստացված բոլոր ցուցակները քննում և լավ ծանրութեթև էր անում: Ամենալավերը նա ընտրում էր, իսկ այն, ինչը խրախուսելի չէր, թողնում: Շնորհիվ նրա խելքի և հանձնառության, պետության բոլոր գործերը կարգի բերվեցին: Խռովություններ էին ծագում՝ դրանցից ամեն մեկի վրա նա գործ էր ուղարկում, և գործը վերադառնում էր հաղթանակած ու հաջողությամբ:

Եթե Նասրը որք չլիներ, նրա կյանքն, ավելի շուտ կընթանար այնպես, ինչպես Խորասանում ցանկացած ազնվագարն մարդու կյանքը. չովգան խաղալով, որսորդությամբ, պարապ-սարապ, նվազ հարբեցողությամբ և նույնքան վաղ անառակությամբ: Հասակակիցների կյանքի մասին փոքրիշտե հավաստի պատկերացում ունենալով, տղան իսկույն սկսեց ըմբոստանալ կյանքի ռիթմի և ոճի դեմ, որ պարտադրել էր խնամակալը: Միառժամանակ նրանք իրար հետ մրցում էին համառությամբ, սակայն Ջեյխանին, բացի համառությունից, կարողանում էր նաև հետևողականություն ցուցաբերել, կոպտորեն կտրելով պալատականների փորձերը, առնելու դեռահաս էմիրի դիրքը՝ մի ավելորդ անուշահացով:

Մյուս ազնվական զավակների կյանքին տղան կարող էր միայն նախանձել. Օր չկար, որ առավոտյան վազքից, ցատկելուց, ըմբշամարտից, վարժություններից և լողալուց հետո, որը ներմուծել էր խնամակալն ըստ հունաց մմուշօրինակի, նա չընկներ երկու խոժոռ սիրիացիների մամիչների տակ, ովքեր կրթում էին նրան արաբերենի, օրենսգիտության, աշխարհագրության, աստղագիտության և մաթեմատիկայի իմացության մեջ, ինչպես նաև (ի հավելումն) Գուրանի մեկնության: Այնուհետև, թարմանալով մի բաժակ թթվասերով և լոշիկով, անչափահաս տիրակալը հայտնվում էր խորհրդի շենքում, որտեղ նրան նախատեսված էր բարձրի ամենաբարձր կույտը, որի կողքին՝ քիչ ավելի ցածր, նստում էր Ջայխանին:

Ջայխանին նրան դիվանագիտության հմտություններն էր ուսուցանում, որի միակ նպատակն էր՝ գոյություն ունեցող աշխարհակարգը պահպանել:

Անշուշտ, յուրաքանչյուր իրադարձություն առանձին՝ անկրկնելի էր յուրովի, և որքան էլ նման լինեին նախորդին, պահանջում էր իր սեփական գնահատականը: Այդ պատճառով, օրինակ, մի տարի առաջ Ջայխանին մտածեց առատ ընծա տալ խիվայեցիներին, որոնք մի քարավան նվիրատվություն էին արել, իսկ այժմ զսպվածություն դրսևորեց, թեև ո՛չ կողոպուտն էր դարձել ավելի շատ, ո՛չ խիվայեցու խորամանկությունը: Ինչո՞ւ՝ իրեն էլ անհայտ էր: Բայց կարևոր էլ չէր, որքանով ներկա այցելությունը խիվայեցիների՝ վերջինը չէր: Ամեն բան կրկնվում է՝ դրանով հաստատելով ժամանակ-

## Գեղարմ Աշուն 2017

ների անփոփոխելիությունը. նորից ու նորից վերադառնալով, անցյալը ներկան ազատում է այսրոպեականի վրաերթից և թույլ է տալիս գալիքում որոշ վստահություն ունենալ:

Այո, երկինքը պտտվում է՝ յուրաքանչյուր ակնթարթ փոխելով շուրջն ամենը, բայց նաև անշեղորեն շրջելով իր սկավառակը դեպի այն քերթը, որից այն կսկսվի սկզբից: Նորից խիվայեցիներն ընծաներով կգան, և նորից էմիրը դրանք կընդունի: Շատ բան աշխարհում նշանակություն ունի, բայց ավելի շատ՝ չունի:

Խոսում էին անշտապ. բառը թանկ արժեք՝ ամեն մի բառի ետևում երևին էին տալիս վիթխարի իմաստներ,- իսկ լինելով արտաբերված՝ անվերադարձ քարանում:

Նասրին հանձնում էին հրամանագրեր ու գալարներ: Նայելով իր ուսուցչին, նա դանդաղ գլխի շարժումով հաստատում էր իր համաձայնությունը՝ ընդունել դրանք: Ներկաները՝ Բուխարայի և պալատի երեսուն-քառասուն բարձրաստիճան այրեր, մեծալրջորեն մորթներն էին հարդարում այն բոպեի սպասումով, թե երբ կատարվածին իրենց վկա լինելու պարտականությունը ավարտին կհասնի:

Կարճատև պաշտոնեական գրույցից հետո,- ավելի շատ ակնարկումներով,- Ջայխանին կարող էր սկսել հարցուփորձը՝ ամեն ինչի վերաբերյալ: Չե՞ն եկել արդյոք վաճառականները հյուսիսից, սլավոնների կողմից: Ո՞չ... Իսկ որտեղի՞ց են եկել: Ա՛խ, ահա թե ինչ... դե, սովորական բան է: Իսկ նաև ասում են, Հերաթ մի մի մարդ է եկել Քեշավարից, բացատրում է, թե ետկեսօրեի կլիմայում նորից են բազմացել միաջքանի եղջերավոր մարդիկ... չե՞ք լսել... ափսոս: Գե Ալլահն ավելի լավ գիտի:

Օրերից մի օր հյուրերից ինչ-որ մեկը, կարկամելով և շփոթված, ասաց, որ իր մարդիկ ծովային խեցիներ են բերել,- շտապով դուրս թափեց կաշվե պայուսակից ու մեկնեց առաջ:

-Որտեղի՞ց եք բերել,- ճշգրտեց Ջայխանին՝ զարմացած նայելով իր առջև սուփրայի վրա թափված փոշոտված քարերին,- որոշները իրոք որ խեցու տեսք ունեին:

-Սարից:

-Սարի՞ց,- զարմացած և մտախոհ նորից հարցրեց գահապահը:- Ի դեպ, ես լսել եմ, որ լեռներում գտնում են ծովային կենդանիների մմանակներ:

-Այո, այո,- գլխով արեց ոգևորված նվիրատուն:

-Սա կեղծը չի՞,- խիստ հարցրեց Ջայխանին:

-Աստված իմ, մի՞թե ես ձեզ կհամարձակվեի ներկայացնել կեղծը: Ո՛չ, ո՛չ: Բոլորովին հասարակ մարդիկ են բերել ինձ... ասում են, էմիր, ահա թե ինչ ենք գտել:

-Ծովային կենդանիներին հատուկ է ջրում ապրելը,- նկատեց Ջայխանին:- Հետևաբար՝ կամ այդ տեղում նախկինում ջուր է եղել, կամ էլ ինչ-որ մեկը հանել է ջրից ու տարել սարերը:

-Քամի՞ն,- ենթադրեց հյուրերից մեկը:

-Թռչունները,- վստահ արտահայտվեց մյուսը:

-Ուսուցի՛չ, գուցե այնտեղ իրոք նախկինում ջուր է եղել:

-Գա լրիվ բացառվում է,- կարճ կտրեց Ջայխանին: Եվ քմծիծաղեց,- ծովը՝ ծով, լեռները՝ լեռներ: Լեռները չեն քայլում:

-Բայց, ուսուցի՛չ, օրինակ, ավագն բարխանները փոխում են իրենց տեղադրվածքը: Քամին բերում է ավազը, և բարխանն աստիճանաբար տեղափոխվում է: Հայրս ինձ ասում էր, որ նրա ծննդավայրը թաղվել է բարխանի տակ, իսկ երբ նա փոքրիկ տղա է եղել, ոչնչով դա չի կանխագուշակվել:

-Ավագը,- գայրացած նետեց Ջայխանին:- Ի՞նչ իմաստ ունի անհամեմատելի իրե-

## Գեղարմ Աշուն 2017

որը համեմատելը: Ի՞նչ ընդհանուր բան կա ավագի և քարի միջև, ջրի և կրակի միջև:

Նա լռեց:

Ներկաները նույնպես լռեցին:

-Համեմայն դեպս, պիտի որ թռչուններ եղած լինեն,- անվճռական մտորմամբ ասաց ուսուցիչը:- Ըստ էության, ինչո՞վ են վատ կեր ծովային կենդանիները թռչնաձագերի համար:

Այդ հարցը պատասխան չունեցավ: Պարզապես բոլորը գլուխներն էին տմբտմբացնում՝ ինչո՞վ:

Բայց, որպես կանոն, Ջայխանին գրույցն այդքան խոր գիտական հունով չէր տանում, որոնց մեջ կարող էր կողմնորոշվել միայն վավերական ուսյալ մարդը: Որպես կանոն, նա միայն անշտապ գլխով էր անում, կոպերով փակելով հոգնած աչքերը, որովհետև իրեն՝ զանազան կիրառական և հայեցողական գիտություններին վերաբերող բազում երկերի հեղինակին, քաջ հայտնի էր, թե որքա՞ն մեծ է վերնախավի հարցատյացությունը՝ պարզապես զարմանալի է, մինչև ո՞ր սահմաններն է այն տարածվում:

Վերջիվերջո գործը հասնում էր կերուխումին, որը հանդիսանում էր պարտադիր հաստատումն ընթացիկ պայմանավորվածությունների լրջության, և միշտ էլ Ջայխանին այնպես էր անում, որ Նասրը միշտ ինչ-որ նոր և անհետաձգելի գործեր ունենար՝ պատրաստվել վաղվա որսորդության, որին իրեն պետք է ուղեկցեին դեսպաններ, կամ չովզան խաղար նրանց հարգարժան օգնականների հետ:

Եթե ազատ ժամ կամ օր էլ տրվում էր, երբ կարելի էր շունչը տեղը բերել գիտական երկերի ստեղծումից զատ, Ջայխանին ընդօրինակում էր Գուրանը: Նա սքանչելի գեղագրող էր: Նասրը սիրում էր նայել, թե ինչպես է գահապահն իր առջև, ցածրիկ սեղանիկի վրա տեղադրելով մի քանի թանաքաման, շարելով գրչածայրերն ու վրձինները, գալար գալարի ետևից թարմ մազադաթը ծածկում նորանոր տողերով: Հերթական ընդօրինակված և կազմ քաշած տեքստը Ջայխանին դարսում էր մեծ փայտե սնդուկի մեջ: Նասրը մի անգամ չէ, որ հարցել էր՝ այնտեղ բոլորը միասին քանի՞ հատ են:

-Ժամանակը կգա, կիմանաք,- ամեն անգամ պատասխանում էր գիտնականը:

Եվ ժամանակը եկավ. ո՛չ ավելի, քան մեկ շաբաթ տանջվելով մեջքի ցավերից և թեթևություն չստանալով ո՛չ յուրայիններից, ո՛չ հրեա բուժակներից, ծերուկը հոգին տվեց Նրա բարի ձեռքերը, Ով իմանում է և գիտի:

Մահից առաջ նա խնդրեց իր գերեզմանի գիսավերևում դնել գրքի բոլոր ձեռագիր ընդօրինակումները, որպես երաշխիք այն բանի, որ Տիրոջ հրեշտակները, որոնք ստիպված գործ են ունենալու նորաթող հոգու հետ, բարեհաճ լինեն:

\*\*\*

Պարզվեց, որպես հավելված ամեն մի Գուրանի, Ջեյխանին առանձին եզրակացություն է գրել: Նրանից ամենամավալունի մեջ մանրամասն շարադրվում էին դուրանյան գիտությունները, տարրնթերցումները, հազվագյուտ բառերը, արաբական դարձվածքները, փոփոխվող և փոփոխված բանաստեղծությունները, մեկնությունները, Գուրանի ի վերուստ տրված շնորհի պատճառներն ու նրա օրենքները: Առաջին բառից մինչև վերջինը այն գրված էր ոսկով: Տեքստը երիզապատում էին տոնականորեն փայլող զարդանախշեր՝ փիրուզի փոշու պայծառ կապույտը, որդանաներկի չխամրող կարմիրը և կապույտ կլոր մեդալիոնները՝ Մարգարեի ոսկե ասացություններով:



## Գեղարմ Աշուն 2017

Մնացած բոլորը Ջեյխանին արտածել էր սովորական թանաքով, սակայն Դուրանի տասներորդ և հինգերորդ մասերը, սուրահները և բոլոր երեսուններկու մասերը նույնպես զարդանկարել էր ոսկով:

-Քառասներեք ցուցակ,- ասաց Բալամին, գլուխն օրորելով:- Ամփոփումն էլ հետը: Այլ քեզ բան:

Նրանք դուրս հանեցին և հատակին շարեցին ծանրաքաշ գրքերն ու այժմ նստած էին բաց անդուկի մոտ:

Նասրը գլխով էր անում:

-Այո, տքնել է ծերուկը: Այսօր արդեն նրա հոգին կհայտնվի դրախտում:

-Հուսով եմ: Բայցևայնպես պետք է ասել մարդկանց, որպեսզի գերեզմանափոսը փորեն ավելի ընդարձակ:

-Ինչո՞ւ:

-Այլապես Դուրանները չեն տեղավորվի:

Նասրը մտքերի մեջ ընկավ: Աբուլֆազ Բալամին ոչ թե պարզապես նրա ընկերն էր, այլ ընկերն էր օրորոցից. նրանք մեծացել էին միասին, կիսելով սկզբում մանկական զվարճանքները, հետո պարապմունքների ու հանգստի ժամերը, իսկ հիմա խորհրդի ու դատարանի նիստերը: Բայց ամենաշատը նա իր ընկերոջը գնահատում էր այն բանի համար, որ հատկապես նրա գլխում էին ծագում այդքան պարզ և առողջ մտքեր:

Տասնյոթամյա Նասրի կողքին՝ բարձրահասակ, թիկնեղ, հզոր, շարժումներում նպատակամետ, կտրուկ, նրա բարակոսկոր, միհարավուն, միշտ ինչ-որ բանից թախծոտ ընկերն այնքա՛ն շատ էր սիրում լռությունն ու գրքերը, այնքա՛ն հաճախ էր մեռնում խոհական հայեցողությամբ ամպի կամ ծաղկի,- թեև իրենից մեծ էր մի կես տարով, բայց լրիվ տղեկի տպավորություն էր թողնում:

Սակայն գուր չէր Աբուլֆազի հայրը Սպանվածի երբեմնի այդքան արժեվորված և հարգված վեզիրը համարվում,- հատկապես հորից էր նա ժառանգել դատողական իր բնույթը, կարողանում էր զսպվածություն հանդես բերել, նախընտրում էր մի թույլ ավելի մտածել, քան թե ուղղել հետևանքները հապճեպ որոշումների, և ամբողջությամբ մեջ ինչպես ավելի լավ հավասարակշռել պոռթկուն ու ջահել էմիրին:

-Ստիպված ես լինելու նոր վեզիր նշանակել,- հազիվ նկատելի հոգոցով ասաց Աբուլֆազը:

-Ես արդեն նշանակել եմ,- գլխով արեց Նասրը:- Իմ վեզիրը՝ դո՛ւ ես:

-Հասկանում եմ: Բայց թյուրք դուլամներն այդ պաշտոնում ուզում են իրենց մարդուն:

Պատանի էմիրը հոնքերը կիսեց:

-Դուլամներն են ուզում... Էդ քիչ է՝ ով ինչ է ուզում: Սամանյաններն իրենց վեզիր են ընտրել միայն երկու ցեղից. կամ Ջայխանիներից, կամ Բալամիներից: Ինչ վերաբերում է Ջայխանիին, նա գահապահ էր, իսկ հիմա հանգչում է Ալլահի հետ՝ համապատասխան սերունդ չթողած: Բալամին հաշվի մեջ է: Էլ ի՞նչ է պետք: Դուլամները պիտի հասկանան՝ երկու վեզիր չի լինում:

Խոժոռվելով՝ Նասրը սկսեց արագ շրխկացնել սարդիոնե թագրեհը, ինչպես միշտ խորհուրդ անելիս:

Իհարկե, ինքն էլ էր հասկանում, որ իր ասածն ամենևին չի լուծում խնդիրը: Միշտ երկու խմբի բաժանված պալատը տարաբնույթ ինտրիգների թույն էր թափում: Հանգուցյալ Ջայխանին կարողանում էր հավասարակշռություն պահպանել,- այդպես հինդիկ աճապարարները մատի վրա պարզում են մեծ պղնձյա մատուցարանը, որի վրա-

## Գեղարմ Աշուն 2017

յով, իրար չբախվելով, գլորվում են մի քանի խնձոր: Գահապահի մահով հավասարակշռություն պահպանելու խնդիրը դրվում էր իր սեփական ուսերին:

Այնինչ դուլամները՝ պետության գլխավոր ուժերից մեկն էր: Դա բանակն է: Ավելի ճշգրիտ՝ նրա թյուրքական մասը: Դուլամներն ուզում են, որ պետությունից որքան հնարավոր է քիչ իշխանական աստիճաններ իրենց բաժանի: Դրա համար կցանկանային վեզիրի պաշտոնում տեսնել իրենց ցեղակիցներից և պարագլուխներից մեկին՝ Այ-Թեզին բեյին:

Այ-Թեզինը՝ զորապետ է, ամենագլխավոր զորապետը, թյուրքական պալատական գվարդիայի հրամանատարը: Դա լուրջ ֆիզուր է. նա պետության մեջ զբաղեցնում է երրորդ տեղը՝ պալատի գործերի կառավարչից՝ հաջիբից հետո: Ոչ միայն գվարդիային է հրամայում, նրա ենթակայության տակ են ծառայում նաև ղվիչաղները՝ թեթև հեծելազորի երկու գունդ: Այ-Թեզինն ինքն է ընտրում նրանց, առավելապես՝ անգրագետներից, սակայն իր ճյուղավորված ցեղի հանդուզն ներկայացուցիչներից: Փառք Ալլահին, որ ղվիչաղները հավերժ թշնամանքի մեջ են օղուզների հետ, եթե միավորվեն, նրանց հետ վարվելու այլևս ճար չի գտնվի:

Հատիկը հատիկին հերթական շրխկոցը չհաջորդեց:

-Լավ կլիներ նրան տեղապահ նշանակելինք Սամարղանդում,- ծոր տվեց Նասրը՝ երազկոտ նայելով իր դիմաց: Եվ իսկույն էլ դժգոհ հաստատեց,- բայց Այ-Թեզինը Սամարղանդ չի մեկնի:

-Չի մեկնի,- համաձայնեց Բալամին:- Բայց դե բոլորը տարակուսանքի մեջ կընկնեն, եթե դու դուլամին տեղապահ նշանակես: Պետք է նրան ինչ-որ ձևով շահես: Որովհետև վճռական որևէ բան նրա վերաբերմամբ հիմա չենք կարող ձեռնարկել:

-Հասկանում եմ,- շունչ քաշեց Նասրը:- Ես արդեն մտածել եմ այդ մասին: Նա սաստիկ զգույշ է: Միշտ շրջապատված զինակիրներով, տունը՝ բերդ է: Ստրուկներն իրեն սիրում են... Բացի թյուրքերից իր մոտ ոչ ոքի չի թողնում: Ժամանակ կպահանջվի՝ ինչ-որ ձևով մեր մարդուն նրա մոտ կզգենք... սպասելով պահին:

Նրանք երկուսն էլ հասկանում էին, ինչի մասին է խոսքը:

-Դե հա: Իսկ որոշել պետք է հիմա:

-Այդ անիծյալ թյուրքերից միշտ գլխացավանքն ավելի շատ է, քան օգուտը:- Նասրը հայիոյեց և ոտքով ուզածի պես հրեց բարձր:- Թքած: Ուշադրություն մի դարձրու: Թող Այ-Թեզինը կուլ տա և կորչի: Վեզիր է ուզում: Ի՞նչ խորհուրդներ տա: Բթամիս բռի: Ինչ կարող է նա անել, ուսերից գլուխներ թռցնելուց բացի: Վերջ, ես ասացի՝ վեզիրը դու ես:

Բալամին միտք արեց:

-Հետաքրքիր որոշում է: Նույնիսկ եթե նրանք նույն պահին էլ չըմբոստանան, դու ամբողջ կյանքովդ թշնամի կվաստակես: Ուժեղ, լուրջ թշնամի:

-Ըմբոստանալ չեն համարձակվի: Նրանք, իհարկե, ուժ են, բայց այսուհանդերձ առանց իմամների աջակցության լուրջ գործողությունների չեն համարձակվի դիմել: Քանի իմամները մի կողմ են քաշված՝ թյուրքերի վրա կարելի է հենվել առանց վախենալու: Ոչինչ, կդիմանա: Ինչ-որ խոստում կտամ, կշոյեմ, կխոսեմ, կխոստանամ: Գուցե, կուշբեզի տե՞ղն ազատվի:

-Չգիտեմ,- շունչը տեղը բերեց Բալամին:- Ամեն բան կարող է լինել: Առայժմ ոչինչ կանխատեսելի չէ:

-Դե վերջ, բավ է այդ մասին: Կան առավել կարևոր թեմաներ:

-Օրինակ: Ընդհանրապես մեր գնալու ժամանակն է, բոլորը վաղուց հավաքվել են:

## Գեղարմ Առն 2017

-Այո, այո... հիմա,- Նասրը գլխով արեց:- Մի բան ենք քննարկելու: Ջայխանին մեզնից հեռացավ: Մենք նրան փառք ու պատվով կճանապարհենք: Մեր խիղճը մաքուր կլինի: Հետևաբար, մենք կարող ենք սկսել այն, ինչը կանխանշված է:

-Իսկ ի՞նչ է կանխանշված,- սարքովի տարակուսանքով հարցրեց Բալամին:

-Դու գերազանց գիտես, մեզ ինչ է կանխանշված: Արշավանք Նև Շահփուր:

-Ա՛խ, արշավա՛նքը Նև Շահփուր:

-Դու մոռացե՞լ ես,- նեղացավ Նասրը:- Ասվա՛ծ է, ասվա՛ծ: Այո՛, արշավանք Նև Շահփուր: Նև Շահփուրը մերն է: Բայց միշտ հետաձգվում է: Դա դեռ պատիս ողջուքյան օրոք է սկսվել: Նև Շահփուրը երրորդ տարին է հարկ չի վճարում: Ի՞նչին սպասենք: Մինչև նրանք մեզ վրա բոլորովի՞ն ուշադրություն չդարձնեն:

-Ջայխանին դեմ էր այդ արշավանքին,- մեկամաղձոտ նկատեց Բալամին և իսկույն էլ բարձրացրեց ձեռքերը, հայտնապես մարելով էմիրի վրդովմունքը:- Բայց նույնիսկ, եթե ես համաձայնեմ քեզ հետ այն հաշվով, որ ժամանակն է խելքի բերելու տեղական արքայիկներին, ապա միևնույն է, ծայրահեղ դեպքում կա մի հանգամանք, որը խոչընդոտում է արշավանքը: Ես ուզում եմ ասել, հիմա՛ է խոչընդոտում, ներկայումս:

-Ի՞նչը:

-Քո սամարղանդյան հորեղբայրը:

-Ֆարահնու՞շը:

-Ֆարահնուշը: Ֆարահնուշ Սամանյանը:

-Դու մտածում ես, նա...

-Ֆարահնուշը ծույլ է և անգործունյա: Եզան պես առողջ, իսկ պատվասիրությունը կակաչի մի սերմնահատիկի չափ էլ չի լինի: Նա փալասի մեկն է: Գիտեմ ես նրան էդ ոռբացին. ալարում է քամակը բարձից պոկի: Նրա ինչի՞ն են այդ հոգսերը: Իր համար նստած է Սամարղանդում, առանց դարդուցավի, միշտ կարող է հույս դնել մեր զորակցության վրա,- և նա ահա, ոչ այս, ոչ այն, բռի մեջ կխեղդի երաշտահավին ու կշարժվի առաջ՝ երկնքում խփելու կռունկին: Ո՛չ, նա այդպիսի մարդ չի:

-Իսկ եթե որևէ մեկը խորհուրդ տա՞: Եվ հետո, գիտես, երբ կոնի վրա նման խաղագումարներ են, մարդիկ երբեմն փոխվում են,- նկատեց Բալամին:- Ինչ է Սամարղանդը Բուխարայի համեմատ: Ազնվագարմ Բուխարա: Դա հո դդում չի շուկայում:

-Եվ գորքն էլ՝ փալա՛ս: Դմբոներ են, գործով տեսել եմ նրանց: Չի համարձակվի:

-Չորքը՝ բանի պետք չի,- համաձայնեց Բալամին:- Բայց չէ որ հակառակորդն էլ նրա դեմ մի բան չի:- Եվ ավելացրեց, որպեսզի քաղցրացնի վիրավորանքը:- Այդպես է նա մտածում, ծայրահեղ դեպքում:

-Ա՛խ, այդպե՛ս է նա մտածում,- կատաղեց Նասրը:- Ա՛խ, մի բան չի՛: Դա լավ է: Խորհուրդին՝ այստե՛ղ: Չորապետերի՛ն՝ այստեղ: Անհապա՛ղ:

Նասրը տեղից թռավ:

-Սպասի՛ր,- ասաց Բալամին՝ վեր կենալով նրա ետևից:- Եկ գոնե ծերուկին թաղենք:

Ռուսերենից թարգմանեց  
Շանթ ՄԿՐՏՉՅԱՆԸ

**Յասմինա ՄԻԽԱՅԼՈՎԻՉ**  
/Մերփիա/

**ՊԱՎԻՉԸ ԵՎ  
ՀԻՊԵՐԲԵԼԻՏՐԻՍՏԻԿԱՆ**



Ռոբերտ Կուլերը «Գրքերի վերջը» հրատարակության («The End of Books», «Նյու-Յորք Թայմս», 21 հունիսի 1992թ.) և «Հիպերգրականություն. պատմվածքներ համակարգչի համար» («Hyperfiction: Novels for Computer», «Նյու-Յորք Թայմս», 29 օգոստոսի 1993թ.) անունով ծավալուն հոդվածի մեջ խոսում է մի երևույթի մասին, որը ծագել է Ամերիկայում հետմոդեռնի շրջանակներում եւ տարածվել Եվրոպայում ու ճապոնիայում:

Իրականում ինչի՞ մասին է խոսքը: Այդ երևույթի պատճառը ոչ միայն որոշակի տեխնոլոգիա՝ տվյալ դեպքում պոլիգրաֆիական, հետևում թողնելն է, այլև գրական ստեղծագործություն ինքնին գրելու, հրատարակելու, կարդալու և քննադատելու գործընթացի արմատական փոփոխությունն է: Այսօր գրական տեքստը միայն գիրքը չէ: Այն կարող է ընդգրկվել սկավառակի մեջ, ոչ թե գրքի կազմի տակ, և էլեկտրոնային միջնորդի հնարավորությունների օգտագործումը անկասելիորեն փոխում է շարադրման ու ընկալման ձևը: Գրքային բնագիրը վերաճում է էլեկտրոնային բնագրի, գրառումն ու ընթերցումը տեղի են ունենում համակարգչի վրա, ինչը ոչ գծային ու ոչ ժամանակագրական շարադրանքի հնարավորություն է ստեղծում՝ նման բանահյուսության հին շարադրանքին, երբ ռաբսոդները դրվագները կամայականորեն իրար են կապում ու կազմում ինչ-որ շարժուն ամբողջություն, որը դասական իմաստով ոչ սկիզբ ունի, ոչ էլ վերջ և որտեղ բնագիրը հարափոփոխ է:

20-րդ դարավերջին գեղարվեստա-

կան բնագրի կյանքը ընթանում է համակարգչին բնորոշ թվացյալ անսահմանության մեջ, հիպերտարածությունում, որտեղ էլեկտրոնային գրառման տեխնոլոգիան, այսպես կոչված հիպերբնագիրը, հանգեցնում է բնագրի բաղադրիչների միջև առավել բարդ ու բազմաշերտ կապերի, տվյալ դեպքում ձևավորելով մի յուրահատուկ ցանց: Ընթերցողների դիզիտալ կազմակերպության միջոցով ստեղծագործության բազմաթիվ տարբերակների ու վարկածների ստեղծումը, նոր շերտերի ու իմաստային կենտրոնների նոր միացությունների միջոցով տեքստային դրվագների կապակցումը, հեղինակի հետ միասին ընթերցողին նույնպես բնագրի արարիչ լինելու հնարավորություն է տալիս: Կարծում եմ՝ հիպերտեքստի և հիպերբեխորիստիկայի առաջացման հետ հնարավոր դարձավ խոսել այն մասին, որ շատ հետմոդեռնիստական տեսական կառույցներ առաջին անգամ գործնական մարմնավորում ստացան: «Հիպերտեքստ» եզրույթը ես օգտագործում եմ՝ նկատի ունենալով այն իմաստը, որը ձևակերպել է Ռոբերտ Կուլվերը. «Հիպերտեքստը էլեկտրոնային տեքստ է, որի գրի առնելն ու ընթերցումը կատարվում է համակարգչի վրա, որտեղ անգոր է հրատարակչական տպագրության կարգուկանոնը, նրա բռնատիրությունն ու սահմանափակումները, քանի որ տեքստը գոյություն ունի պրոցեսորի ստեղծած չեզոք տարածության մեջ: Ի տարբերություն միակողմ ուղղվածությանը թերթումով տպագիր տեքստի, հիպերտեքստը արմատապես այլ տեխնոլոգիա է՝ ինտերակտիվ ու բազմաձայն, որը հաստատում է դիսկուր-

սի բազմակարծությունը տեքստի խիստ որոշակի կայունության նկատմամբ»: («Նյու-Յորք Թայմս», 21 հունիսի 1992թ.): Հարկ է ընդգծել այն փաստը, որ գոյություն ունի գեղարվեստական ստեղծագործությունների երկու տեսակ, որոնց համակարգչային հրապարակումը կարող է ցանկալի արդյունք ունենալ: Առաջինը՝ գրականություն, որն ի սկզբանե գրվել է համակարգչի համար և CD-ից չի կարող փախադրվել գրքի մեջ: Երկրորդը դասական եղանակով տպագրված այն ստեղծագործություններն են, որոնց գեղարվեստական մաշկը հիպերտեքստի հատկություններ ունի: Դա տեղի է ունենում հենց այն պատճառով, որ հիպերտարածության բավիղը բոլոր իմաստների ու շերտերի բացահայտման ավելի համաչափ հնարավորություն է տալիս, քան տպագիր տարբերակը: Ինչ վերաբերում է դասական գծային-ժամանակագրական հատկություններով գրական տեքստերին, ապա դրանց համակարգիչ փոխադրումը կհանգեցնի լոկ էկրանից ավանդական ընթերցանության:

Այդ երկրորդ տեսակի գրական ստեղծագործությունների հաջողված օրինակ է Միլորադ Պավիչի արձակը: Այսպես կոչված էլեկտրոնային գրողներն այդ հեղինակին համարում են հիպերգրականության նախակարապետ: Իհարկե, հիպերգրականության ի հայտ գալը չէ (մոտ 1990 թվական, երբ լույս տեսավ դիսկետի վրա առաջին վեպը Michael Joyce "Afternoon"), որ Միլորադ Պավիչի ստեղծագործությունները միացրել է համակարգչի աշխարհի հետ: Պավիչն ինքը «Խազարական բառարանի» առաջին ար-

ծագանքների մեջ այդ ստեղծագործության ընթերցանությունը կապում էր բեյսիկի սկզբի հետ: Այդ զուգահեռները սկզբում հազվադեպ էին նկատվում, հետո ավելի հաճախ: Մայքլ Ջոյսը «Խազարական բառարանի» նյութային հրատարակումից (1988) անմիջապես հետո փորձեց կապ հաստատել Պավլիչի հետ: Ռոբերտ Կուլերը, 1988 թվականին «Նյու-Յորք Թայմսում» «Խազարական բառարան»-ի գրախոսականում կանխատեսեց մոտակա մի քանի տարիների ընթացքում սպասվող մի շարք գրական երևույթներ և Պավլիչի գրքերի տեղը դրանց մեջ. «Այն ժամանակից, երբ համակարգչի ջատագով ու մարգարե Թեդ Նիլսոնը մոգոնել է «հիպերտեքստ» բառը, որպեսզի գրեթե 20 տարի անց բնութագրի այդ երևույթը, սկսվել է երազների որսորդների այդ նոր ջոկատով հետաքրքրված աշակերտների հաստատում, իսկ հիմա արդեն արագընթաց աճ: Հիմա գրի են առնվում նոր տեսակի «գրքեր»՝ առանց կազմի, ինտերակտիվ, ընդլայնման ենթակա, անկասկած՝ տվյալ պահի դրությամբ դրանց մի ամբողջ շարք գոյություն ունի հիպերտարածության մեջ, և «Խազարական բառարանը» հեշտությամբ կարող է իր տեղը զբաղեցնել այդ ոգեշնչված ձիավորների մեջ» («He Thinks the Way We Dream», «Նյու-Յորք Թայմս Բուկ Ռևյու» 20 նոյեմբերի, 1988թ.):

Պավլիչի պատմվածքների կառուցվածքը կարելի է պայմանականորեն համեմատել համակարգչային խաղի հետ: Դրանցում տարածությունը կարծես սահմանափակված չէ, այնպես որ՝ ստեղծվում է անսահմանության պատրանք: Մակարդակից մակար-

դակ, հետ ու առաջ, աջ ու ձախ անցումներ կատարելով՝ լուծվում են հանելուկներ և հավաքվում տեղեկություններ, որպեսզի խճանկարն ամբողջանա, իսկ դա կարող են անել միայն խաղի վարպետները:

«Թարս երեսի վրա շրջված ձեռնոցը» պատմվածքը հիպերտեքստի որոշ հիմնարար հատկանիշների բացահայտման համար լավագույն մոլոշն է: Պատմվածքի առաջին մասում ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, որ դա դասական գծային շարադրանք է մեկ ուղղվածության ընթացքով: Ընդսմին, պատմվածքի մեջտեղում շարադրանքը հետ է դառնում դեպի սկիզբը: Այսպես, պատմվածքի երկրորդ մասում դրվագները տեղերը փոխելով, չեն կորցնում իմաստային կապը, միևնույն ժամանակ ձևավորում են բոլորովին նոր ամբողջականություն՝ այլ սկիզբ ու վերջով, ինչպես նաև իրադարձությունների այլ ընթացքով: Այսպիսով, տեքստային բաժինները, որոնք պատմվածքի առաջին մասում, թվում էր՝ ամուր կապված էին իրենց տեղերին, այնուհետև ասես ցրվում են տարածության մեջ, որպեսզի վերադասավորվեն, կարծես խաղաքարտեր, նոր կապ հաստատելով միմյանց միջև ու իր նշանակությունը փոխած ամբողջության հետ: Ուրիշ պատմվածքների օրինակի վրա կարելի է նշարել և հիպերտեքստի այլ առանձնահատկություններ, դրանք կապելով համակարգչային խաղերի սկզբունքների հետ: Սակայն առավել հետաքրքիր է Պավլիչի պատմվածքների շրջափուլայնացման համակարգի քննումը, քանի որ դրանք աստիճան են հանդիսանում դեպի նրա վեպերը: Հիշենք

թեկուզ «Ռուս քերօեն» հավաքածուն, որտեղ հեղինակը վերջաբանում ասում է, որ երկու պատմվածք այնքան սերտ փոխկապակցվածության մեջ են գտնվում, որ «պատմվածքներից մեկում առաջադրված հարցի պատասխանը կարելի է գտնել մյուս պատմվածքի մեջ, իսկ երկուսը միասին կարդալով, դրանք կազմում են երրորդ պատմվածքը»:

Այսպիսով, մենք մոտեցանք «Խազարական բառարանը», «Թեյով նկարված բնանկար», «Քամու ներսի կողմը» և «Վերջին սերը Կոստանդնուպոլսում» վեպերին, որոնք, յուրաքանչյուրը յուրովի, կարելի է դիտարկել և որպես պատմվածքների շարք: Դրանցում ամեն անգամ օգտագործվում է զուգակցության նոր միջոց: Այդ շղթաների օղակների միջև կապերն այնքան բազմազան ու հարուստ են նրանցից, որոնք կարող են ստեղծվել մեխանիկական ճանապարհով հիպերտեքստային գրականության մինչ այս ընծեռած մեթոդների օգնությամբ, որ մարդը անպայման պետք է հարցնի, իսկ ինչի՞ համար է պետք հիպերգրականությունը, եթե համակարգչային միջավայրից դուրս արդեն ստեղծված են ամենից առաջ բովանդակության և նշանակության առումով դրանց գերազանցող ստեղծագործություններ: Պատասխան. թերևս նրա համար, որ օրինակ, «Խազարական բառարանը», «Թեյով նկարված բնանկարը», «Քամու ներսի կողմը» և «Վերջին սերը Կոստանդնուպոլսում» վեպերի յուրահատկությունները առավել տպավորիչ կարելի է ներկայացնել համակարգչային միջավայրում: Ակնհայտ է, որ և՛ վեպերի (վեպ-բառարան, վեպ-խաչբառ, վեպ-կլեպսիդրա

և վեպ-տարո), և՛ պատմվածքների կառուցվածքն արդեն ներսից մաշել է տպագրական տեխնոլոգիան ու սկսվել է փնտրտուք գոյության նոր միջավայրի, որտեղ այդ արձակը կվերածնվեր նոր կերպարով:

Ինչպիսի՞ տեսք կունենար «Խազարական բառարանի» հիպերտեքստային տարբերակը: Բառարանային հոդվածները հիպերտարածության մեջ կստեղծեին շարժուն ցանց, իսկ ցուցիչները, այսինքն հանգուցակետերը, որ ընտրել էր կարդացողը իր ընթերցման ընթացքում, հնարավոր կդարձնեին տարբեր մուտքերով ու ելքերով, սկիզբներով ու վերջերով տեղաշարժը: Կարող են հղում կատարել «Խազարական բառարանի» տպագիր տարբերակի զուտ հղման նշաններին, որոնք արդեն թռչկոտելու, մի տեղից մյուսն անցնելու և կարդացողի տարբերակի ստեղծման հնարավորություն են տալիս: Վեպի համակարգչային տարբերակում պատմվածք-հոդվածների միջև կապի կառույցն ավելի հեշտ կառուցված կլիներ: Մի տեղից մյուսն անցնելը հնարավոր կլիներ առանց գրքի տանջալից թերթումի՝ էջերի միջև մատները պահելով, առանց ներդրված թղթի կտորների կամ կարդացված պարբերություններն ընդգծելու և այլն, և այդպես բոլոր մակարդակներում, ամենաորոշակիից մինչև ամենավերացականը: Բացի դրանից, գոյություն ունի ընթեցանության հերթականությունը պահելու հնարավորություն, այնպես որ ընթերցողը կարող է վերհիշել իմաստով իրարից տարբերվող պարբերությունների իր կարդացած տարբերակները: Ըստ երևույթին, գոյություն ունի հոդվածների ձևափոխման

հսկայական, բայց ոչ անսահման քանակ, սակայն դա չէ էականը: Էականն այն է, որ «Խազարական բառարանի» նման գրքի տեղափոխումը համակարգչային միջավայր, որը դրվագների այդպիսի տեղափոխման հնարավորություն է տալիս, օգնում է, ավանդական ընթերցանության համեմատ, ստեղծագործության բոլոր շերտերի ավելի արդյունավետ ըմբռնմանը: Որոշ հոդվածներ կարելի կլինեն տեսողականորեն մշակել՝ ֆիլմի կամ անիմացիայի օգնությամբ, իսկ որոշները՝ ձայնի օգնությամբ: Այդպիսով ընթերցողի ստեղծագործունեությունն իրականություն կդառնար մեծ քանակությամբ տարբեր ուղղություններով, իսկ հիպերմիջավայրը կնպաստեր, որ ավելի շատ զգայարաններ մասնակցեն ընկալման գործընթացին:

«Թեյով նկարված բնանկարը» համակարգչային միջավայր տեղափոխելու միջոցն ու գծապատկերը, ինձ թվում է՝ արդեն տրված են «վեպ խաչբառների սիրահարների համար»-ի բովանդակության սկզբում և գրողի ցուցումների մեջ («Ինչպես կարդալ այս վեպը հորիզոնական», «Ինչպես կարդալ այս վեպը ուղղահայաց»): Ավելին, կարծում եմ, այս ստեղծագործությունն ամենից հարմարն է հիպերտեքստային ձևաչափ տեղափոխելու համար, հենց շնորհիվ ծանոթագրությունների, որոնք հստակ մատնանշում են ամբողջը՝ ըստ թեմաների, կերպարների, իրադարձությունների, սիրային պատմությունների և այլն:

Առավել բարդ կլինեն «Քամու ներսի կողմը» վեպի տեղափոխումը վերացական միջավայր: Որովհետև Յերոյի ու Լեանդոյի պատմությունների

միջև կապերը, նշաններն ու ցանցերը բնագրի երեսի վրա են և վեպի կառուցվածքի բնույթից ելնելով՝ այնքան նուրբ ու աննշան են, որ կպահանջվեր բացառապես սովետական աստվածաբանական նախաբան, չնայած այդ դեպքում էլ ահագին քանակությամբ նշաններ կմնային միջանկյալ տարածություններում, ինչն, անկասկած, այդ բնագրի արժանիքն է: Այդ վեպի վերլուծության ժամանակ ի հայտ են գալիս գործնական խնդիրներ. ինչպես ասենք՝ Լեանդոյի կողմից բռնված մի թել գտնել Յերոյի (կամ հակառակը) պատմության մեջ և կապել դրանք: Այդ թելերն այնքան են բազմաճյուղ, որ ցանկություն է առաջանում երկու պատմությունները կապող բառ-կեռիկների, անձնանունների կամ ցանկացած նշանների ցուցակ ունենալու, որպեսզի առանձին չփնտրենք դրանք (թելերը) գրքի յուրաքանչյուր կեսում: Բայց և դրա համար էլ, անկասկած, պահանջվում է համակարգիչ, որպեսզի էկրանի վրա զուգահեռաբար հետևենք տեքստային կտորներին:

Պավիչի «Յավերժություն և ևս մեկ օր» պիեսը, «Ճաշացանկ թատերական ընթրիքի համար» ենթավերնագրով, այնպես է հավաքված, որ ունի երեք փոխհամալրող սկիզբ կամ «նախուտեստ», երեք վերջաբան կամ «աղանդեր» և մեկ կենտրոնական մաս կամ «հիմնական ճաշատեսակ», որի շուրջ պտտվում են այդ սկիզբներն ու վերջերը՝ տարբեր կապերի մեջ մտնելով իրար հետ: Առաջանում է առնվազն ինը տարբերակ, որոնցից յուրաքանչյուրն իրենից ավարտուն ամբողջություն է ներկայացնում: Ընթերցող-հանդիսատեսից, թատերա-



կան բեմադրիչից ու թատերական խմբից է կախված, թե որ տարբերակի վրա կանգ կառնեն և որ ավարտը կընտրեն. հեյի-է՞նդ, ողբերգական վերջաբա՞ն, թե՞ բնապահպանական /էկոլոգիական/ վերջ: Երևի կարելի է ասել, որ «Չավերժություն և ևս մեկ օրը» հիպերպիես է: Այն դասվում է բնագրերի այն կարգին, որոնք չեն կարող նույնականորեն տպագրվել գրքում, որովհետև սկիզբների ու ավարտների փոխադարձ փոխարինելիությունը անհնար է պատկերացնել առանց ժամանակագրական շարքի որոշակիացման (օրինակ, «1-ին նախուտեստ», «2-րդ նախուտեստ»):

Պավիչի չորրորդ վեպը՝ «Վերջին սերը Կոստանդնուպոլսում», «Գուշակության ձեռնարկ» ենթավերնագրով, կազմված է 22 (0-21) գլուխներից, որոնք կրում են տարո խաղաքարտերի անուններ: Այս ստեղծագործությունը տարո խաղաքարտերի յուրօրինակ ռոմանտիկ մեկնություն է, մեկնություն ոմն կենդանացած տարոյի, որտեղ յուրաքանչյուր քարտ առանձին պատմվածք է, որովհետև յուրաքանչյուր գլուխ խորը մակարդակի վրա թղթակցում է առանձին քարտի հիմնական նշանակությունների ու խորհրդաբանության հետ: Այս տարովեպի միջով ընթերցողները կանցնեն սկզբից մինչև վերջ, աստիճանն աստիճանի հետևից, փոխարենը՝ գիրքը փակելով, կկարողանան բաշխել քարտերը և իրենց ճակատագիրն իմանալ համապատասխան գլուխներում՝ կարդալով դրանք ևս մեկ ան-

գամ, բաշխման համաձայն: Գոյություն ունի ընթերցման երկու հիմնական միջոց: Առաջինը, կարելի է ասել՝ դասական միջոցն է, իսկ երկրորդը՝ այն լրացուցիչ մակարդակը՝ սեփական ճակատագրի ընթերցումն է յուրաքանչյուր առանձին ընթերցողի կողմից: Գիրքը, որպես գուշակության ձեռնարկ, որպես ուղեցույց, ընթերցանության ուրիշ մակարդակի վրա մուտք է գործում հենց կյանքի մեջ, խառնվում է նրան, իսկ դա հնարավոր է դարձնում և՛ բնագրի մաս-մաս ընթերցումը, և՛ բնագրի ուրիշ անկյան տակ ընթերցումը, քան տրված է վեպի իրադարձությունների մակարդակով: Պավիչի տարովեպը համակարգչային տարբերակում հեշտությամբ կարելի է համարել խաղաքարտերով տեսախաղ, ինչպիսիք լիքն են աշխարհում: Բայց այստեղ խաղի մեջ, զուգահեռաբար, մի ամբողջ վեպի տեքստ է ուղեկցելու խաղաքարտերին:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ 20-րդ դարի գրականության մեջ հիպերտեքստի բնույթի ստեղծագործությունների ի հայտ գալով, գրականության կողմից նոր տեխնոլոգիաների յուրացումով, տեղի է ունենում կարևոր բեկում, այնպես որ գրականությունը կարող է բաժանվել երկու ուղղությունների՝ ավանդական՝ ոչ ինտերակտիվի և ինտերակտիվ գրականության, և ամեն դեպքում բեխտրիստիկայի ապագան այդ հունի մեջ է:

Թարգմանությունը ռուսերենից՝  
Գայանե ԲԱԽՏԱՍՅԱՆԻ



**Օրրեն ՌԻՍԻՉ**  
/Սերբիա/

**Այնքան Կյանքեր Անցան Լույ Սի Երգ Ոգելով...**

Այնքան կյանքեր անցան լույ մի երգ ոգելով  
Օրն այդ ասես պալատի փակված դուռ էր  
Գիշերը թանձրացող մառախուղի մեջ  
Վայրի գազանների գլխին սարսուռ էր մաղում

Եթե սիրո պակաս լինի երգը մեզ կդավաճանի  
Նկարիչները ուսուցիչները բժիշկներն ու ուսանողները խմբերգում  
Իրենց ձայնն են բարձրացնում առ անհուն  
Կրկեսային ծաղրածուներ արժանի եւ անարժան  
Իսկ պարզ ճշմարտությունն ինքն իրեն է ուսուցանում

Ամեն թողություն կեղծված է  
Մենք ողորմ արարածներս անկոչ չենք եկել  
Խիղճը պատմության օրերը մեր վաղուց է համրել

Բայց մարտահորդոր խմբերն իրենցն են պահանջում  
Իսկ սովերները կմկմում են կարծես փաստարկներից  
Ամբողջ մի դար. երկար ընթերցումներ գիշեր ու գոր

**Ամբողջ Սի Դար. Երկար Ընթերցումներ գիշեր ու գոր**

Ամբողջ մի դար. երկար ընթերցումներ գիշեր ու գոր  
Որ փակեց գիրքը մեր հանց ալիքները ծովի  
Ժամերը մեր քնեած խոսում են մեր մասին  
Իսկ երգը մեր ջինջ դեռ հառնում է սաղմուսից

Մութ տարիները մեզ բնավ չեն ընկրկել  
Կարոտի ու բանտարկության բյուր չար օրեր հետո  
Կտրիճությունը նախնիների և սերունդները լուսեղ  
Այս նամակն են ուխտում

## Գեղարմ Առն 2017

Մոտենում եմ բլրին ուր հավքերն են երամ կազմել  
Տանելով իմ նամակը  
Մինչ հայրենիքն իմ քնած է կաղնու շվաքում

Հինավուրց պատմությանը մի էջ եմ հավելում  
Որ առանց հովվի լացի տարիները համախմբվեն  
Ժամանակի պես որ կորսվել է երկու թիթեռների մեջ

### **Ժամանակի Պես որ Կորսվել է Երկու Թիթեռների Մեջ**

Ժամանակի պես որ կորսվել է երկու թիթեռների մեջ  
Բավ չէր ցորենի ականջի ներսում արեւի համար  
Ոչ էլ համառ անդադար անձրետոտ օրվա  
Եվ ոչ էլ մեր ինքնաճանաչումը պատկերում այդ  
Աստվածային ուրախություն է մեզ շատ շնորհվել ի փառս Արարչի  
Այնքան իղձեր կան  
Որ պիտ ազատ արձակվեն Սուրբ Ծննդյան տոնին

Հացը անհասանելի էության ու գեղեցկության  
Գործերի գործը հանց հրաշքը հրաշքների  
Աստված այս հացով բյուր կյանքեր է պահպանում

Եվ մերկացնում է: Աստված ամենագոր է իր գործում  
Նսեմագույնից մինչև վսեմագույն շնորհներ  
Շարակնոցներն ամեն ինչ պատմում են թեւ թանաքն է պակաս...

### **Շարակնոցներն Ամեն Ինչ Պատմում Են Թեւ Թանաքն է Պակաս...**

Շարակնոցներն ամեն ինչ պատմում են թեւ թանաքն է պակաս  
Կենսական շարժման համար իր սեփական դռան շեմին  
Որ պատմությունը խոր նուրբ լուսաբանվի  
Վարքը սրբոց աշխարհին հայտնի դարձնի

Գրերն անխոս, անկանխատես հանց գալիքը,  
Խիստ չափավոր են ապագայի կոչերի դեմ  
Ցերեկվա լույսը կրկին իր փայլն է կորցնում  
Երբ փակվում է սրբերի կազմը երկարող

Դյուրաբորբ հանց մի փքոց  
Լոկ հատուկենտ կայծեր մոխիրներում չեն մարում  
Յուցանելով աննախադեպ արտառոցություն

## Գեղարմ Աշուն 2017

Ոչ թե գրիչ այլ մուրճ ու գրի՞Բչ  
Եւ ոչ մի խոսք բավ չէ արդէն  
Երբ կրակոտ Բանաստեղծը տեսարան է նկարագրում

### **Երբ Կրակոտ Բանաստեղծը Տեսարան է Նկարագրում**

Երբ կրակոտ Բանաստեղծը տեսարան է նկարագրում  
Պարկեշտ լույս-կրողի ձեռքն է միայն հակված դողալ  
Բայց խոսքը հրավառվելու ուժն իր չի կորցնում  
Եւ վառողի պես մեկեն պայթում է նա

Օ՛, այս երեկո մեղուները բզկունով են երկինքը լցրել:  
Պտտվելով սխրանքի շուրջ ասես ընծա գոհ-սեղանից  
Հին գիրքը տես բաց է դարձյալ - նետերը թռչում են  
Բալկանյան վարպետի հետ -

Նետաձիգներ ու վարպետներ մեր պատմության  
Որ հմտորեն ձգում սաստիկ ու զանգեր են հնչեցնում  
Միդձորից, Ռ-տանից ու Խիսարից\*

Բայց արվեստը խաղաղ ձուլման տրված է սոսկ սակավներին  
Քիչ են ավաղ վարպետները նման  
Նրանք նույնիսկ հեռատես ու արդարամիտ չեն  
Ոչ էլ գույն են օգտագործում իբրեւ նշան իրենց է-ի

*\* Սերբիայի լեռները*

Թարգամություններն անգլերեն տարբերակից՝  
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

Սերբերենից անգլերեն թարգամությունները՝  
Դանիել ՏՐԱԶԿՈՎԻՉԻ

**Ֆրանց ՀՈՒԵՐ**  
/Շվեյցարիա/

**ՏՈՐԹԸ**



Երբ Լոկառնոյի կայարանից ոտքով իջնում ես ցած՝ հին քաղաքի ողորթյամբ, մի քանի քայլ հետո հասնում ես մի անցում, որտեղ սովորաբար նստած են լինում գունավոր գլխարկներով ու մարգաշապիկներով երիտասարդներ՝ կարտոֆիլի ֆրիի սովարաթոթ տուփերն ու կոկա-կոլայի բաժակներն իրենց առաջ դրած: Մետաղյա սեղաններն ու աթոռներն այստեղ բաշխված են տարբեր աստիճանների վրա, որոնք ամենեւին չեն սագում ֆաստ ֆուդի մթնոլորտին: Եվ եթե ուշադիր նայես, կնկատես՝ ինչու՞: Դրանք այն աստիճաններն են, որոնք տանում են վերել՝ հին «Գրանդ հոթել» հյուրանոցի պարտեզ, դեպի Լոկառնոյի «Գրանդ հոթել», որն, ինչպես մեկ այլ ժամանակի երազանք՝ շրջապատված մշտադալար սոճիներով, արմավենիներով, մրտավարդերի թփուտներով, խոյացած է հետին պլանում իր հսկայական միջնադարավանդով, որի երկու սյուների միջև տեղակայված ծաղկամաններում կերպարանքներն այնպես են քարացել, ասես հենց նոր են վերջացրել պարզ վերելից եկող առողջարանի նվազախմբի երաժշտության տակ:

Ուզու՞մ եք շարունակել Դուք Չեր ճանապարհը դեպի Պիացա Գրանդե, թե՞ ժամանակ ունեք լսելու մի պատմություն, որ սկիզբ էր առել այս հյուրանոցում:

Ես այն իմացել եմ մի շենքում, որը չնայած նույն ժամանակի կառույց է, բայց երբեւէ մման չի եղել «Գրանդ հոթել» հյուրանոցին: Ծերանոց, որը գտնվում է Լոկառնոյի հետեւում ընկած հովիտների վ մեկում: Սի համեստ շինություն, որի անկյունային երկու աշտարակների հետեւում վերակառուցված միջնակառույցն է, իսկ դրա առաջ՝ մեծ սալապատ հրապարակը: Վերջինս դուրս է գալիս գլիցինիայով պարուրված տաղավարի վրա, իսկ վերելում, որտեղից լուսա-

## Գեղարմ Աշուն 2017

վոր, փոփոխվող տառերով շողում է հյուրանոցի անունը Լոկառնոյում, ծերանոցի մոտ անջնջելի նախշագրությամբ երեսում է հիմնադրի անունը :

Անցյալ տարի անձնական գործերով եկել էի ծերանոց: Տիչինո գավառը սկսել էր պարզել բազմաթիվ հողակտորների բաժանման հարցը, սեփականատերերին առաջարկում էին միավորվել կամ էլ փոխանակել: Լեռնային արոտատեղում ես մի փոքրիկ հողակտոր ունեի՝ սարայի հետ: Մենք սիրում էինք ամառային օրերն այստեղ անցկացնել: Ես նույնպես ստացական թղթով որոշեցի հանդիպել հարեան հողամասի տիրոջ հետ: Վերջերս նա ապրում էր ծերանոցում: Մենք իրար ճանաչեցինք, նա ուրախացավ իմ այցելությամբ: Նա բողոքում էր իր թուլացող տեսողությունից, շաքարախտից, ինչից ոտքերը հազիվ էին շարժվում: Կարճ ասած՝ դժգոհում էր մարմնի թուլությունից, ինչի համար պարզապես կարելի է գործածել «ծերություն» բառը: Առանց երկարացնելու նա համաձայնության եկավ հողի փոխանակման առաջարկի հետ: Հետո հետաքրքրվեց աղբյուրի, վտակի եւ ծեր շագանակենու վիճակից ու պատմեց ինձ իր մանկության տարիներից, երբ գյուղում 600 գլուխ կով կար, որոնցից այժմ մի հատ էլ չի մնացել:

Մեր գրույցի ընթացքում նրա հարեանը կիսաբաց բերանով, անշարժ պառկած էր անկողնում, եւ միայն ժամանակ առ ժամանակ լսվում էր նրա ցածր տնքոցը: Երբ ես հարցրի նրա վիճակից, նա չարձագանքեց:

-Նա չի լսում,- ասաց իմ ծանոթը,- շուտով կդառնա 100 տարեկան, կարծում եմ՝ վաղուց է ուզում մեռնել, բայց չի կարողանում:

Մենք շարունակեցինք գրուցել: Ես հետաքրքրվեցի, թե արդյո՞ք առաջվա նման լանջերում վայրի խոզեր կան: Հանկարծ հարեանը գլուխը բարձրացրեց ու ասաց. «Սի օր նրանք կգտնեն տորթը»,- ու նորից կախեց գլուխը:

Իմ ծանոթը ծիծաղեց.

-Սա միակ բանն է, որ խեղճ մարդը դեռ ասում է: Այդ իսկ պատճառով մենք նրան «Տորթ» ենք կոչում, մի մականուն, որով եկել է այստեղ, այդպես նրան ամբողջ կյանքում անվանել են գյուղում: Բայց ինչու՞, ոչ ոք չգիտի, գուցե իմանայինք, եթե գոնե որեւէ բարեկամ-այցելու ունենար:

Ես մոտեցա ծերունու մահճակալին, կռացա նրա վրա ու հարցրի.

-Իսկ որտե՞ղ կգտնեն տորթը:

Առանց աչքերը բացելու նա ասաց.

-Լճում:

Ես դիմեցի իմ ծանոթին.

-Իսկ դու ընթերցե՞լ ես, որ ծովային ոստիկանությունը վերջերս Լագո Մաջորեում, մի խեղդված մարդու որոնումների ժամանակ լճի տիղմում իբր գտել է թիթեղյա մի տուփ, որի վրա գրված է եղել Grand Hotel Locarno, եւ իբր դրա մեջ եղել են ժանգոտված պայթուցիչներ, հնարավոր է՝ դինամիտի լիցքի համար: Այս գտնված իրի շուրջ խորհրդավոր բաներ են պատմում:

Հազիվ էի խոսքս ավարտել, ծերուկը բարձրացավ տեղից, աչքերը լայն չռեց ու գոչեց,

-«L'hannofinalmentetrovata!»: Վերջապես նրանք գտան այն:

-Տո՞րթը,- հարցրի ես ու ավելացրի,- բայց դրա մեջ դինամիտ կար:

Այդ պահին հայտնվեց խնամակալուհին՝ իր հետ բերելով ճաշը եւ շատ զարմացավ՝ տեսնելով ծերունուն մահճակալին ուղիղ նստած: Նա ավելի շատ զարմացավ,

## Գեղարմ Առն 2017

երբ ծերուկն ինձ ասաց.

-Ես պետք է հիմա գնամ եւ կվերադառնամ ճաշից հետո: Միայն դրանից հետո քեզ կպատմեն տորթի պատմությունը:

Ես փնտրեցի մի ռեստորան, որտեղ ինձ ճագարի ազդրով հիանալի պոլենտա կմատուցեն: Ճաշից հետո, երբ վերադարձա ծերանոց, ծերուկի հետ առանձնահատուկ փոփոխություն էր կատարվել: Նա նստած էր պատուհանի մոտ, թիկնաթոռին: Հագին ուներ կապույտ ժակետ՝ կրծքին տրեզներ եւ գլխարկ, որի վրա գրված էր Գրանդ հոթել Լոկառնո. Նա պատմում էր առանց կանգ առնելու, եւ ես մի պահ չհավատացի, որ խոսողն այն նույն մարդն է, որին ես տեսել էի առավոտյան:

-Նստեք,- ասաց նա ինձ ու ցույց տվեց այցելուների աթոռը:- Թեեւ ես Ձեզ չեմ ճանաչում, բայց որովհետեւ Դուք եք գտնված տուփի մասին լուրը բերել, ուզում եմ Ձեզ իմ մասին պատմել: Նաեւ՝ Ռիգետիին,- ավելացրեց նա եւ գլխով ցույց տվեց շաքարախտով հիվանդ իր հարեւանին,- արդեն ասել եմ՝ նա նույնպես ուզում է լսել:

- Իմ անունն է Էռնեստո Տոնինի: Ես ծնվել եմ այս հովիտում, 1904թ.: Դուք շվեյցարաբնակ գերմանացի եք, չէ՞: Ես չգիտեմ, Դուք պատկերացում ունե՞ք այն մասին, թե ինչ կյանքով եմ այդ ժամանակ ապրել այստեղ: Դա միակ պայքարն էր գոյատևման, որ մղվում էր ամեն մի թիզ հողում՝ դաշտային ծայրամասերից մինչեւ անտառներն ու լեռան ստորոտները: Ամեն մի քառակուսի մետր, որը կարողանում էին տնտեսապես գործածել, արժեք ուներ: Յուրաքանչյուր շագանակի ծառ այս նշանակությունն ուներ եւ հարյուրավոր սոված ստամոքսների համար նախաճաշ, ճաշ կամ ընթրիք էր դառնում: Հաճախ երեխաները ստիպված էին լինում ամբողջ ամառը մնալ վերին լեռնալանջում, այծերի եւ ոչխարների հետ, եւ օրվա համար նրանց սնունդը լինում էր 3-4 լիտր այծի կաթ: Բոլոր ընտանիքներում կային շատ երեխաներ: Երբ մայրը յոթերորդ երեխայի ծնունդի ժամանակ մահացավ, իսկ հորը հնձի ժամանակ խայթեց սև իժը և հակաթույն չկար նրան փրկելու, երեխաներին հանձնեցին բարեկամներին, իսկ դա սովորաբար նշանակում էր, որ քաղաղի առաջին կանչից մինչև մայրամուտ իրենք պետք է տանջվեն: Կամ էլ բերում էին որբանոց: Իմ բախտը բերեց, ես նույնպես հայտնվեցի այդտեղ եւ ավելի հաջողակ դուրս եկա, քանի որ դպրոցից հետո Լոկառնոյի «Գրանդ հոթել» հյուրանոցում ցրիչի աշխատանք ստացա:

Իհարկե, այստեղ ևս փորձում էին մեզ ամբողջովին ուժասպառ անել: Մեզ համար օրը բացվում էր առավոտյան ժամը հինգին, հետո մենք սրբում էինք մեծ ձեղնահարկը, նախահրապարակը, գնում էինք հացթուխի մոտից բուլկիները բերելու և վաչ նրան, ով կբռնվեր հանկարծ, եթե դրանցից մեկը կերած լիներ: Ավագ խոհարարը հաշվում էր դրանք և քո աշխատավարձից հանում, եթե դա կարելի էր աշխատավարձ ասել. օրը՝ հիսուն ռապեն, այն դեպքում, երբ մեկ բուլկին արժեր տասը ռապեն: Չեմ ուզում ձեզ ձանձրացնել այդ ծանր օրերի պատմությամբ, միայն ասեմ, որ ինձ՝ որպես ամենափոքրի վրա էին բարդում այն ամենն, ինչից ինձանից մեծերը փորձում էին խուսափել: Սենյակում մենք ապրում էինք չորս հոգով, քնում էինք իրար վրա դրած երկու մահճակալների վրա, որոնց արանքում հազիվ մի կանգնելու տեղ կար: Իսկ մնացածների համար, որոնք եկել էին Լոկառնոյից, Ասկոնայից, Տեներոյից, անշնորհք ու հիմար հովտից էի: Ես հնարավորություն չունեի տեսակցության գնալ իմ քույրերին ու եղբայրներին, կարճ ասած՝ ես մենակ էի, թշվառ ու աղքատ: Ամեն օր, սակայն, ես ծառայում էի այնպիսի մարդկանց, որոնք մարդամոտ, ուրախ և հարուստ էին: Եվ այսպես ես դարձա կոմունիստ:

## Գեղարմ Աշուն 2017

Էռնեստ Տոնինին ժպտաց և հայացքը շրջեց մեկից մյուսին, եւ մենք ստիպված էինք անակնկալի եկածի տեսք ընդունել.

-Ի՞նչ է, չէի՞ք սպասում, թե՞ սխալվում եմ:

Մենք՝ երկու ունկնդիրներս, գլուխներս կախեցինք, իսկ նա շարունակեց.

-Երիտասարդ հացթուխը, ով, նայած հանգամանքներին, ինքն էր բաժանում բուլկիները, հանգստյան մի հազվագյուտ երեկո ինձ տարավ մի հավաքույթի, որը տեղի էր ունենում Մուրալտոյի փոքրիկ տպարանում: Այս հավաքույթը կամ ժողովը ավելի շուտ դավադրություն էր: Այդտեղ հավաքվում էին ընդամենը վեց կամ յոթ հոգի, երբեմն ներկա էր լինում նաեւ Ջուլիետտան՝ տպագրիչի դուստրը: Այս տպագրիչը մեզ պատմում էր, թե ինչպես էր Մարքսը ստեղծել մի աշխարհ, որտեղ չկան հարուստ ու աղքատ, եւ ամեն ինչ պատկանում էր բոլորին: Նա պատմում էր, թե ինչպես էր մեր մեծ ընկեր Լենինը Շվեյցարիայից մեկնել Ռուսաստան, այնտեղ տապալել ցարին, որ այդ աշխարհը վերաշինի: Հետո նա ավելացրեց, որ ավելի լավ կլիներ աշխատանքի տեղում առաջմ ոչինչ չասել, որովհետեւ իրենց մոտ դեռ դեկավարում էին հարուստները, եւ մենք անմիջապես դուրս կթռչենք Լոկառնոյի «Գրանդ հոթելից»:

Իհարկե, ես լռում էի, բայց այդ պահից սկսած, երբ լինում էի կոմունիստների մոտ, աշխարհն ինձ համար այլ տեսք էր ընդունում: Ես դարձա ավելի հանգիստ, աշխատանքս ավելի լավ էի կատարում, որովհետեւ գիտեի այդ ժամանակ, որ այդ ամենն այսպես չի մնա, որ մի օր ես կկարողանամ այստեղ հրավիրել իմ քույրերին ու եղբայրներին, որոնք աշխատում էին որպես ստրուկներ, աղախիմներ կամ քարհատներ կամ էլ դեռ որբանոցում էին: Ես նրանց կբերեի մեր սենյակները, որտեղից բացվում էին ծովային տեսարաններ:

Ես շատ սիրում տեսք ունեի, դրա համար ժամանակ առ ժամանակ թեյավճար էի ստանում: Ես դրանով գնեցի գերմաներենի, անգլերենի եւ ֆրանսերենի փոքրիկ դասագրքեր, որոնք թաքցնում էի պալատական մեջ եւ դրանք հանում էի միայն թղթածրարները ցրելու ժամանակ, որպեսզի ծանոթանամ այդ լեզուների հետ: Տպագրիչը միշտ մեզ ասում էր. «Մենք մի բջիջ կլինենք, հնարավոր է, որ մեզանից մեկին մի անգամ ուղարկեն արտասահման, որտեղ կերտվում է համաշխարհային պատմությունը»:

Երբ ես հյուրերի ճամպրուկները սենյակ էի տանում, փորձում էի միշտ ինչ-որ բան իրենց լեզվով ասել եւ նրանցից էլ նոր բան սովորել: Դա ինձ սիրելի դարձրեց, եւ հաճախ հյուրերը պահանջում էին, որ իրենց կայարան ուղեկցի փոքրիկ Էռնեստոն կամ էլ թեյը Էռնեստոն սենյակ տանի: Դա հյուրանոցում աննկատ չմնաց եւ երեք տարի անց ինձ տեղափոխեցին հարկի ծառայողական բաժին եւ ժամանակ առ ժամանակ էլ ինձ ժամանակավոր մատուցող էին նշանակում: Ամիսը երկու երեկո գնում էի ժողովների, լսել էի, որ ընկեր Լենինը հիմնահատակ է արել Ռուսաստանը, որ իբր Մյունխենում ձախողվել է խորհրդարանական հանրապետությունը եւ դրանից մենք պետք է զգուշանանք, որ ինչքան դժվար կլինի մեզ մոտ հեղափոխությունը:

Իսկ հետո միանգամից համաշխարհային պատմությունը հասավ Լոկառնո: 1925թ.-ի աշնանը եվրոպական պետությունների կեսն իր վարչապետներին հավաքեց այստեղ՝ Տիչինո, առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքները քննարկելու: Ինչքան ես հասկացա, խոսքը նախեւառաջ գնում էր, թե արդյո՞ք Գերմանիան կրկին կդառնա Եվրոպայի անդամ պետություն: Դա դեռ պարզ չէր, մենք դա նկատեցինք: Բոլոր պատվիրակությունները, գերմանականից բացի, մեր հյուրանոցում պետք է սպրեին: Դրանք անգլիացիներ էին, ֆրանսիացիներ, իտալացիներ, բելգիացիներ



## Գեղարմ Աշուն 2017

եւ, իհարկեւ, ինչպես գիտեք, լեհեր ու չեխեր: Վերջիններս եկան ուշացումով, պարոն Բենեշն ու իր կինը, որը միշտ կրում էր ծղոտե գլխարկ:

Այդ տասնչորս օրերի ընթացքում ամբողջ Լոկառնոն դրսում էր: Երկու-երեք հարյուր լրագրողներ ամեն օր վազում էին արդարադատության պալատ, որտեղ տեղի էին ունենում նիստերը: Նրանց չէին թույլատրում ներս մտնել: Հետո նրանք գալիս էին «Գրանդ հոթել» մամուլի սաուլիսի, որտեղ եւս ոչինչ չէին իմանում, իսկ հետո՝ բանկերի միութուն, այստեղ հեռախոսում ու հեռագրեր էին ուղարկում: Կային քաղաքագետներ, որոնց անունները միայն թերթերից էին իմանում, հանկարծ կարող էին տեսնել իրականում: Գերմանացի Շտրեսեմանը՝ իր փայլուն ճաղատով, երեկոները Գրանդում զարեջուր էր խմում, ֆրանսիացի Բրանդը՝ փոքր ու մի քիչ կորացած, մի անգամ գնում էր կինո, բրիտանացի Չեմբերլենին տեսնում էին կնոջ հետ՝ Լիդոյի մոտ զբոսնելիս: Մենք, իհարկեւ, նրանց բոլորին շատ մոտ էինք, նախաճաշի սեղանի մոտ կամ ընթրելիս, իսկ մեր անձնակազմը վաղ առավոտից մինչեւ ուշ երեկո ուժասպառ էր լինում եւ բացակայելն արգելված էր: Սի անգամ շեֆ խոհարարն ինձ բռնացրեց ետնամուտքի աստիճանների վրա, երբ ես մահու չափ հոգնած ուզում էի գնալ իմ սենյակ: Ու ստիպված եղա նրան օգնել ներկելու բուկիները, որոնք հետո ես բերեցի կեսգիշերային կոնֆերանսին: Ես լսեցի, թե ինչպես Գրանդին, Մուսոլլինիի աջ ձեռքը, սպառնում էր իտալացի լրագրողներին, որ եթե առավոտյան պայմանագրի նախագծից թեկուզ մի բառ հայտնվի իրենց թերթերից մեկում, այդ թերթերն անմիջապես կփակվեն: Իսկ հետո ես նրանց թույլտվությամբ մատուցում էի այդ լրագրողներին իմ բուկիները, իսկ Լյուդգին, որը երկրորդ ժամանակավոր մատուցողն էր, նրանց շամպայն էր հյուրասիրում: Եվ այսպես ես սովորեցի այն, ինչ կոչվում է մամուլի ազատություն: Եվ ինձ պարզ դարձավ, թե ինչի համար էր տպագրիչը ֆաշիստների մասին վրդովմունքով խոսում:

Խռովության մեջ էր հայտնվել ոչ միայն ամբողջ Լոկառնոն, այլև մեր բջիջը: Տպագրիչը մեզ իրազեկում էր, որ իբր կոմունիստները դեմ են այս բանակցություններին: Գերմանիան էլ, որ ակտիվացել էր, ուժեղացնում էր Եվրոպայում աջ բուրժուական ուժերը, այդ պատճառով դժվարանում էր հեղափոխական հեղաշրջումը: Գրա համար էլ, ըստ կոմունիստների, այդ կոնֆերանսը պետք էր նենգադուլվի:

Ինչքա՞ն էր այս ամենի լրջությունը՝ ես իմացա, երբ հավաքից հետո, կոնֆերանսից քիչ առաջ տպագրիչն ինձ պահեց ու ասաց.

-Դու աշխատում ես այս հյուրանոցում եւ առանց կասկածի տեղիք տալու ամենամոտն ես այդ քաղաքագետներին: Եվ դրա համար բոլոր ընկերները քեզանից ակնկալում են մեծ գործ համաշխարհային հեղափոխության համար:

-Ի՞նչ գործ,- հարցրի ես:

Նա բացեց թղթապանակը, որի մեջ գտնվում էին մի քանի դինամիտի ձողեր եւ ցույց տվեց՝ ինչպես է պետք բոցավառել բիկֆորդյան քողի ծայրը:

-Հաշվարկը կատարված է տաս բոպեի համար, որպեսզի ոչ մեկը չհասցնի փախչել,-ավելացրեց տպագրիչը:

Ես գունատվեցի.

-Դա նշանակում է...

-Այո, Էռնեստո, դա նշանակում է, որ քո անունը կգրվի պատմության բոլոր դասագրքերում, եւ Պիացա Գրանդեն կկոչվի Պիացա Էռնեստո Տոնինո: Պա՞րզ է:

-Պարզ է, շեֆ: Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք,- ես մրթմրթացի, ապա ճա-

## Գեղարմ Առն 2017

նապարհվեցի տուն՝ թեխ տակ այդ թղթապանակը, ու քանի որ ես արդեն առանձին սենյակ ունեի, որն այնքան մեծ էր, ինչքան ամենալավ ավելախուցը, ես այն դրեցի այնտեղ՝ ճամպուրակիս մեջ, որը պահում էի մահճակալի տակ: Արագ որոշումս կայացրի: Մինչ այդ իմ կյանքը եղել էր ծանր ու տխուր, մեր բջջից դուրս ես ընկերներ չունեի, հյուրանոցում պաշտոն ստանալու մեծ հնարավորություններ չունեի, ոչ ոք ինձ չէր կարոտում: Դրա համար էլ թող իմ անունը տարածվի աշխարհում, իսկ ավելի ուշ իմ քույրերն ու եղբայրներն իրենց եղբոր անունը կրող հրապարակում լիմոնադ կխմեն:

Էռնեստո Տոնինին ընդհատեց խոսքը եւ հարցրեց ինձ.

-Կարո՞ք եք սեղանիկի թեյի բաժակն ինձ մեկնել:

Երբ նա ձեռքն առավ բաժակը, այն դատարկեց մի քանի կում անելով եւ լեզուն քսեց չորացած շրթունքներին:

Թեյամանից ես երկրորդ բաժակը լցրի, բայց նա ձեռքով հասկացրեց, որ չի ուզում եւ իր պատմությունը շարունակեց:

-Կոնֆերանսը սկսվեց, հարցն այնպես էր դրված, թե որտեղ կարող էի ես հնարավորինս խիտ հավաքվածների: Բացի նրանից, որ ստուգվել էր նախաարահում՝ չորրորդ հարկի բարձրությամբ կախված ջահի ամրությունը, անվտանգության համար, ընթրիքի ժամանակ պատվիրակությունները նստում էին իրարից հնարավորինս հեռու: Ուրեմն՝ ես ստիպված էի մի լավ մտածել, թե որ պատվիրակության վրա պետք է մահափորձը կատարել: Իմ գործողության շառավղում ամենառաջիններն, անկասկած, անգլիական ու ֆրանսիական պատվիրակություններն էին: Ես արդեն ընտրել էի անգլիացիներին, որովհետեւ Չեմբեռլենը կոնֆերանսի նախագահն էր, իսկ մադամ Բրյանդն ինձ միշտ թեյավճար էր տալիս, երբ ես նրան քաղաքապետի կողմից ծաղկեփունջ էի բերում:

Այնպես որ՝ պատահականությունն ինձ առիթ տվեց, որը կստիպի դեռ ինձ նախանձել:

Իմ կարեւորագույն հյուրերից մեկը, որ հյուրանոցում ներս ու դուրս էր անում, եւ որի առաջ բոլորը զգաստանում էին, մի ֆրանսիացի էր՝ Լուչեր անունով: Նա իսկական կապիտալիստ էր, տպագրիչը ատելությամբ էր նրա անունը տալիս, երբ խոսում էր շոգեմալի անձնակազմի եւ Չեմտովալի երկաթգծի չնչին աշխատավարձերի մասին, որովհետեւ երկուսն էլ պատկանում էին պարոն Լուչերին, եւ հնարավոր է՝ նրա շնորհիվ է կոնֆերանսը գումարվել հենց Լուկառնոյում: Այդ ժամանակ պարոն Լուչերը հյուրանոցի հրուշակագործի մոտ մի մեծ տորթ էր պատվիրել, որը պետք էր հաջորդ շաբաթ բերվի իր «Fior d aranci» ջերմանավը: Ինչպես շուտով պարզվեց, այս նավով հրավիրյալ կոնֆերանսի գլխավոր մասնակիցները դուրս կգան լճի վրա շրջագայության, այնպես որ՝ նրանք կկարողանան գեղեցիկ մթնոլորտում իրենց քննարկումները շարունակել:

Սեղանի վրա՝ 12 հոգու համար պատվիրված էր դնել Տիչինոյի հարուստ ուտեստներից կարմիր մերլոթ եւ սպիտակ ու կանաչ վելտլիներ՝ գինիով: Իսկ ավելի ուշ, շրջագայության ժամանակ սուրճի հետ պետք է մատուցեին այդ մեծ տորթը: Ի գարմանս ինձ հենց ինձ հանձնարարեցին տորթը նավ բերել եւ սպասարկման ընթացքում լինել ավագ մատուցողի աջ ձեռքը: Մի կողմից դա կապված էր կայանալիք մեծ երեկույթի հետ, որի նախապատրաստության համար գործի էին դրել բոլոր ուժերը, մյուս կողմից մեծ դեր էր խաղում այն, որ ես որոշ չափով հասկանում էի գերմաներեն, անգլերեն ու ֆրանսերեն:

## Գեղարմ Աշուն 2017

Այդ գիշեր, պատկերացրեք, ես համարյա չէի քնել եւ երեւի կպատկերացնեք նաեւ՝ ինչ վիճակով էի ես այդ օրը, կեսօրից հետո դիմամիտը նավ բերել: Տորթը երկհարկանի էր, եւ հրուշակագործը հարած սերուցքով գրել էր՝ Pace Locarno: Այն դրել էին քիթեղյա տուփի մեջ, որը փակել էին կեռերով, եւ երբ ես այն տանում էի խոհանոց, սկզբից մտա իմ սենյակ, դիմամիտի ձողերն այնքան խոր մտքորի տորթի մեջ, որ միայն պայթուցիկի լարն էր դուրս մնացել: Հետո ես կրկին փակեցի տուփը եւ այն, ասես մասնատուփ, ամենակարճ ճանապարհով իջեցրի նավահանգիստ, որտեղ ինձ սպասում էր ավագ մատուցողը: Որովհետեւ նավի փոքրիկ սրահը շատ նեղ էր, տորթի համար տեղ էին նախապատրաստել միջնատախտակամածի նստատեղի տակ: Դա ուներ նաեւ այն առավելությունը, որ տորթը սառը կմնա, արդեն հոկտեմբերի կեսերն էին: Այսպիսով ես այն տեղավորեցի նավի վրա եւ կեսականջ ընդունում էի սպասարկման հետ կապված ցուցմունքները, գլխավորը՝ զգում էի գրպանիս մեջ դրած լուցկիները եւ արդեն պատրաստ էի մտնելու համաշխարհային պատմության մեջ:

Եվ երբ նախարարն ու մնացած բարձրաստիճան քարտուղարները մեկը մյուսի հետեւից, առանց որեւէ բան նախազգալու բարձրանում էին նավ, որը նրանց պետք է դեպի մահ տաներ, պարոն Լուժերի ողջույներն էին ընդունում Չեմբեռլենը, Բրյանդը, Շտրեսենանը, Լյութերը, Յահուլան եւ մնացածները, երբ նավը հեռացավ ծովերից եւ շարժվեց Լուկինոյի ուղղությամբ, երբ նրանք վայելում էին իրենց բութերբրոսները, Coppa խոզապուխտի եւ Salami երշիկի կտորները, իրար էին խփում սպիտակ գինով լի բաժակները, անընդհատ լսվում էր «ժողովրդական միություն» բառերը, կատարվեց ինչ-որ առանձնահատուկ բան:

Դուք կհասկանաք, որ այդ ամենից, ինչ ինձ սպասվում էր, ես բավականին ջղալին վիճակում էի հայտնվել, եւ հենց կարծես դիտավորյալ սպիտակ գինին թափեցի լեդի Չեմբեռլենի՝ նավի միակ կնոջ զգեստին: Ավագ մատուցողը հայացքով սաստեց ինձ, իսկ այդ ընթացքում լեդի Չեմբեռլենը ներողամտաբար ինձ նայեց ու հարցրեց. «Are you in love, young man» - «Դուք սիրահարվա՞ծ եք»:

Եվ հենց այդ պահին հանկարծ ես պարզեցի, որ իրոք սիրահարված էի, եւ հենց Ջուլիետտային՝ տպագրիչի աղջկան: Ես սիրում էի հեռվից հետեւել նրան, երբ մեզ՝ դավադիրներիս խմելու բան էր բերում ու հեռանում: Ես նկատել էի, որ վաղուց էի առիթ փնտրում նրան մենակ տեսնելու եւ զբոսանքի հրավիրելու: Ես հասկանում էի, որ ես պարզապես ոչ թե գերված էի այդ մտքերով, այլ ուղղակի վառվում էի նրան համբուրելու, գրկելու ցանկությամբ, եւ որ ես ոչ մի դեպքում չէի ցանկանա մտնել համաշխարհային պատմության մեջ, քանի դեռ ես սիրած աղջիկ չունեի ու շատ զարմացա, երբ ես ակամա լսեցի անգլերենով տված իմ պատասխանը. «Yes, I am, Madame, and I beg your pardon» - «Այո, մադամ, կներեք»:

Այստեղ Էռնեստո Տոնինին ձեռքով հենվեց բազկաթռռի առաջնային կորուսյան վրա եւ իր զառամած մարմինը ձգեց առաջ, ինչքան հնարավոր էր, նայեց մեզ թախանձազին, ապա շարունակեց.

-Եվ երբ պահը եկավ տորթը բերելու, դա ինձ ավագ մատուցողը հրահանգեց, ես գնացի վերին տախտակամած, եւ ոչնչով այլեւս չէի կարող ինձ օգնել: Եվ ես դիտավորյալ սղացի մի թաց տեղ: Թիթեղյա արկղի մեջ դրված տորթը՝ բազրիքի վրայով սահելով, ընկավ ծովի մեջ եւ դանդաղ սուզվեց:

Ավագ մատուցողի կատաղությանը չափ չկար, պարոն Լուժինը եւս ֆրանսերենով ինձ վրա ֆշշացրեց՝ «հիմար», «սպուշ», եւ ես իմ հետույքին մտրակներ կստանայի,

## Գեղարմ Առն 2017

Եթե չլիներ լեղի Չեմբեռլենը, որը բռնեց ձեռքս եւ հաշտարար ձայնով ասաց. «He is in love, gentlemen - why don't you ove each othert oo`» - «Նա սիրահարված է, պարոնայք, ինչու՞ դուք եւս իրար չեք սիրում»:

Ես երբեք այդպես չէի կարծրել, ինչպես այդ ժամանակ եւ ով գիտի՝ արդյո՞ք Գերմանիան կընդունվեր Ազգային լիգա առանց սիրո մասին լեղի Չեմբեռլենի բարեխոսության: Իսկ ես այսպես երեւի մի քիչ նպաստեցի աշխարհի ընթացքին: Այս պատմությունն, իհարկե, տարածվեց, այդ պահից սկսած բոլորն ինձ կոչում էին «Տորք», եւ եթե լեղի Չեմբեռլենը հյուրանոցի տնօրենի մոտ ինձ համար չմիջնորդեր, ինձ հաստատ վառել էին:

Թե ի՞նչ կար տուփի մեջ, ոչ ոք չիմացավ, բայց հաջորդ իսկ օրը ես գնացի տպագրիչի մոտ եւ ասացի, թե իբր դիմամիտներն ընկել են Լագո Մաջորե եւ հետո՝ ավելի լավ կլինի հաջորդ մահափորձն անձամբ ձեռնարկի, ինձ նման հիմարին վատահելու փոխարեն: Ես ասացի նաեւ, որ այլեւս ժողովներին չեմ գնա, որ այլեւս չեմ հավատում կոմունիստներին, եթե դրանով պիտի կործանվեին այնպիսի համեստ մարդիկ, ինչպիսիք են պարոն եւ տիկին Չեմբեռլենները եւ դեռ ինքս էլ մեռնեմ:

Ես նրան խոսք տվեցի այդ մասին ոչ մեկին չպատմել, ինչի համար եւ նա շատ շնորհակալ եղավ: Ավելի ուշ նա դարձավ իմ աները, որովհետեւ Ջուլիետտան ինձ սիրեց: Մենք ամուսնացանք, բայց շատ կարճ ժամանակ իրար գրկեցինք, համբուրեցինք, որովհետեւ նա մահացավ տուբերկյոզից, շատ երիտասարդ ու անպտուղ: Ես այսօր էլ սիրում եմ նրան ու լեղի Չեմբեռլենին: Նրանք երկուսով խանգարեցին ինձ մտնել համաաշխարհային պատմության մեջ :

Ծեր մարդը հոգնած սուզվեց բազկաթոռի մեջ եւ միառժամանակ սենյակում խոր լռություն էր: Հետո նա ինձ խնդրեց լվացարանից բերել իր ատամների պրոթեզի բաժակները, ողողել դրանք ու բացել իր պահարանի ներքեւի դարակը: Այնտեղ նրա ճամպրուկն էր, որի մեջ նա, հավանաբար, մի ժամանակ պահում էր դիմամիտը: Ծամպրուկի հետեւում դրված էր մի շիշ խտալական գինի եւ մի անագե բաժակ «Գրանտ հոթել Լոկառնո» գրությամբ:

Նա չիմեց ու թեւ դողում էր, մեր բաժակները անձամբ լցրեց առանց մի կաթիլ թափելու: Եվ մենք կամաց ու դանդաղ դատարկեցինք ամբողջ շիշը, մինչեւ սկսեց անձրեւել ու աստիճանաբար մթնել:

Երկու օրից, երբ ես զանգեցի իմ ծանոթին, որովհետեւ փոխանակման գործարքն ընդունվել էր, նա ինձ ասաց, որ Էռնեստո Տոնինին հաջորդ իսկ գիշերը խաղաղ ու հանգիստ կնքել է իր մահկանացուն:

Գերմաներից թարգմանությունը՝  
Սիրվարդ ԱՏԵՓԱՆՅԱՆԻ

Literary translations

**Henrik EDOYAN**



**EVERYTHING...**

You may do everything when there is nothing to do,  
you may say everything when you don't have anything to say,  
you may go anywhere when you have no place to go.  
Everything may happen when nothing happens.  
When it's all right around you then nothing is right.  
When time is open for you from head to feet,  
so you don't have any more time.  
Everything is over.

**THE UNAPPROACHABLE**

The unapproachable is the one you are nearby  
you can approach, you can touch, but you  
strive for someone else. The unapproachable is the one  
which is given to you here, at this moment  
but you are looking for  
it in another place. The unapproachable  
is the one, the name of which you repeat  
so much time that you can not  
find it no more. Someone takes you away  
from you; you are the loss of yourself.  
Gather all the fragments  
of your life from here and there,  
make them one whole, build yourself  
and measure the shadow of yours -  
the only unapproachable!

Գեղարմ Աշուն 2017

**I HAVE NO END**

My train stops at your station.  
My ship approaches your port  
slowly.  
My day ends in your night.  
My words slope down  
into your stretched hands.  
My silence is repeated  
in your consciousness.  
My steps stop in front of your door,  
behind of which I don't know who lives.  
My shadow falls and disappears  
in your shadow.  
My time slips to you,  
and disappears within you.  
My property is all that  
what you take from me.  
And I have no end.  
And I have no beginning  
in your palms.

\*\*\*

I was going and my soul was following me,  
Sometimes he was running ahead,  
or was lagging behind, and sometimes  
he's leaving me or approaching,  
then he was talking and being silent ...

I thought,  
the fall was coming.

Translated from Armenian by  
Christina KOCHARIAN

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԻՐԱՆԱԿԱՆ  
ՊՈԵԶԻԱ**



**Բիժան ՋԱԼԱԼԻ**

/1927-1999/

\*\*\*

Ես հավերժությունը  
Փնտրել եմ խոսքում  
Եվ իմ հոգին  
Նրան եմ վաճառել

\*\*\*

Մահը  
Ինչ ձրի է  
Բոլորս այն վերցնում ենք  
Բոլորս այն ճաշակում ենք

\*\*\*

Ճակատագիրը ընթանում է  
Հոսող ջրի պես  
Եվ մենք նրա մեջ  
Թփրտում ենք

\*\*\*

Չգիտեմ դժոխային է  
Թե դրախտային  
Այս երգը  
Ինձ երկինք է կանչում  
Թե քշում է ընդերք

\*\*\*

Մեր տենչանքները  
Մեզ հոշոտում են  
Ինչպես  
Ամուր քարը ծակող  
Ջրի կաթիլները

## Գեղարմ Աշուն 2017

\*\*\*

Ես ոչ բանաստեղծությունն եմ ուզել  
Ոչ աստղը  
Ոչ էլ ծաղիկը  
Ես ցավն եմ ուզել  
Որ բողբոջում է  
Բանաստեղծության մեջ  
Ծաղկի  
Եվ աստղի հետ միասին:

\*\*\*

Գեպի ինձ եկաք  
Խոսքի ուսապարկով  
Այն ժամանակ երբ ես  
Լռության ուսապարկով  
Գնում էի մեկ այլ ճանապարհով

\*\*\*

Իմ քաղցածության ու ծարավության համար  
Հաց ու ջուր չուզեցի  
Միայն օդն ուզեցի  
Ճշալու համար

\*\*\*

Ջուրը ինչ անմեղորեն էր թափվում  
Փոքրիկ ջրվեժից  
Եվ չապակյանվելու համար  
Ինչ փութկոտ էր փախչում

\*\*\*

Այսօր  
Երեկ և վաղը  
Ասես մի այլք է  
Որ քշում է մեզ  
Կամ մի պատրանք  
Որ մեզ մաշեցնում է

\*\*\*

Օրվա ջարդված թևը  
Տեսնում եմ  
Եվ դիտում եմ  
Նրա տրամությունը  
Այժմ մայրամուտ է



## Գեղարմ Աշուն 2017

Եվ մի եղանակ  
Օրվա մեջ  
Լացելու համար:

\*\*\*

Իմ ոտնահետքին  
Ոտք եմ դնում  
Ինքս ինձ գտնելու համար  
Սակայն թվում է մի օտարական  
Անցել է  
Այստեղից

\*\*\*

Ինչ գետնամած անցավ  
Այն ինչ երկնքից  
Ճանկեցի  
Եվ ինչպես երկինք բարձրացավ  
Այն ինչ հողի մեջ  
Գտա

\*\*\*

Ինչպես մեկնաբանեմ  
Պատումն այս սիրո  
Առանց տրտմության  
Եվ առանց այն կողմ  
Հայացք նետելու  
Որ կողմ չէ  
Հույս է միայն ու սպասում  
Որ ապրում է  
Հեռու հեռուներում

\*\*\*

Բանաստեղծության մեջ  
Մենք երկու աշխարհից էլ  
Խոսում ենք  
Այն աշխարհից որ տեսնում ենք  
Եվ այն աշխարհից որ չենք տեսնում  
Այդիսկ պատճառով է  
Որ բանաստեղծությունը  
Նման է Լապտերի  
Որ երգում է  
Երկու աշխարհներում էլ

## Գեղարմ Աշուն 2017

\*\*\*

Մենք տաք ջրերի ժառանգորդն ենք  
Եվ աշխարհի  
Սկիզբն ենք արարչության  
Եվ հավերժության  
Սառը ջրերը նույնպես  
Կհոսեն մեր մեջ

\*\*\*

Տրտմությունը  
Լեռ չէ  
Որից վեր բարձրանանք  
Եվ փոս չէ  
Որի մեջ գլորվենք  
Տրտմությունը  
Հարթ ճանապարհ է  
Որ այսօրվանից  
Գնում է  
Դեպի վաղը

\*\*\*

Հորիզոնում  
Հանգուցյալներն են  
Որ ոչ լեզու ունեն  
Եվ ոչ էլ խոսք  
Սակայն լռության կախարդանքով  
Ու մթության  
Ինձ կանչում են նրանք  
Դեպի իրենց

\*\*\*

Դու լալիս էիր  
Քո կարողությունների համար  
Քանզի գիտեիր  
Որ բոլորը ընծայելու ես  
Աշխարհի  
Չքավորությանը

\*\*\*

Թղթի յուրաքանչյուր էջ  
Իր ճակատագիրն ունի  
Եվ պահանջում է  
Իր բառերը

\*\*\*

Հիմա եմ հասկանում  
Որ մենք բոլորս  
Իջել ենք երկնքից  
Անձրևի նման  
Եվ կրկին  
Կգոլորշիանանք

### **Սեյդ ՀԱՔԻՔ ՆԱԶԱՐԻ**

#### **ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԶՅԱՆ ՓԱԹԻԼ**

Մեկ միլիոն ձյան փաթիլին  
Ասել եմ՝ կանգ առեք,  
Ուզում եմ քեզ համար  
բանաստեղծություն գրել՝  
Սպիտակ...  
Տետրիս ուսերին,  
Այսքան ձյունը  
Բառերը իրար են խառնում...

Ասացիր՝ թափվեք,  
Մեկ հատիկ «Քեզ սիրում եմ»-ի համար  
Չմեռը չեն հետաձգում...

\*\*\*

Ստիպված ես հավատալ, որ սիրում եմ քեզ,  
Երբ մեկ միլիոն ձյան փաթիլներից  
Միայն ես եմ բախում  
Լուսամուտիդ ապակին...

\*\*\*

Լուսամուտից այն կողմ  
Մեկ միլիոն ձյան փաթիլ,  
Լուսամուտից այս կողմ  
Սշուշ...  
Մատնաձայրերս այրվում են  
Սի բանաստեղծության կարոտից...

## Գեղարմ Առն 2017

\*\*\*

Ահաբեկիչները կրակում են  
Մեկ միլիոն ձյան փաթիլին,  
Չնեմարդիկ  
Աշխարհի չեն գալու:

\*\*\*

Մենությունը  
Մեկ միլիոն ձյան փաթիլի չափ  
Թիկնել է քաղաքի ուսերին...

\*\*\*

Վստահություն չկա  
Այս գիշերին...  
Մեկ միլիոն ձյան փաթիլ թափվել են, և  
Մարդը  
Դեռևս միայնակ է...

\*\*\*

Արագ որոշումը կայացրու  
Կամ ցած իջիր  
Կամ վերադարձիր ամպերի գիրկը,  
Երկնքի ու երկրի միջև  
Ապահով չի,  
Այսքան մոլորյալ գնդակների մեջ.  
Ձյան փոքրիկ փաթիլ...

\*\*\*

Անձրևին  
Ընտելացել են քո աչքերի շրջակայքում,  
Ձյանը՝  
Իմ մազերի շրջակայքում...  
Երբեք մի ընտելացիր,  
Մենք տարբեր ենք իրարից...

\*\*\*

Կարող ես ձնեմարդ սարքել  
Չորս եղանակի համար...  
Մազերիս նստած ձյունը  
Երբեք չի հավելու...

\*\*\*

Այս բանաստեղծությունը  
Քեզ համար են գրել,

## Գեղարմ Աշուն 2017

Բայց հազար հոգի եւ կարող է կարդալ՝  
Ամեն մեկը մեկ ուրիշի համար,  
Այս լուսամուտը  
Քեզ համար եմ բացել,  
Բայց հազար հոգի կարող է նրանից դուրս ծիկրակել՝  
Ամեն մեկը մեկ ուրիշին տեսնելու համար,  
Չյունը  
Իմ մագերին է, բայց  
Միայն քեզ համար է թափվում,  
Եվ ոչ մի հազար հոգի չեն կարող  
Քեզ այնպես սիրել,  
Ինչպես ես եմ քեզ սիրում...

### **Գիթի ԽՈՇԳԵԼ**

#### **ՈՒՐ ՈՐ ՆԱՅԵՍ ԱՍՏՂ Է ԾԼՈՒՄ**

Շապկիդ արևը,  
Եթե ձեռքերս տաքացնեն  
Ամեն մի բառը թռչուն կլինի՝  
Ճախրանքում:  
Ես մինչև ո՞ր բարձրությունը կթռչեմ,  
Քեզանից բացի ոչ ոք չգիտի...

Լռությունները միահյուսում եմ,  
Ինչպես ուռկանը ձկնորսության,  
Սակայն տարածքով ծովի:

Երկրից մինչև երկիր,  
Լուսնից մինչև լուսին,  
Արեգակից մինչև արեգակ,  
Ուր որ նայես աստղ է ծլում  
Եվ բոլոր անձրևները  
Դառնում են մարգարիտներ:

Փակում եմ աչքերս ու ճամփորդում եմ  
Դեպի քո կամքը,  
Դեպի այն մարմինը, որ հյուսել եմ  
Շուրջը այս մարմնի,  
Եվ հարձակվում եմ դեպի բջիջները ճակատագրիս,  
Թերևս ինքս իմ մեջ տարալուծվեմ...

## Գեղարմ Աշուն 2017

### **ԻՆՉ ՈՒՍՈՒՑԱՆԻՐ ՏՈԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ**

Բոլոր անհամբեր թմբուկները  
Հարվածում են երակներիս պատերին,  
Եվ բոլոր զանգերը  
Դողանջում են սրտիս մեջ,  
Միթե՞ դու էլ իմ լռությանն ես խաբվում,  
Ասես քո ժամանակը  
Տարբերվում է իմ ժամանակից:  
Ինձ ուսուցանիր տոկունությունը համբերության,  
Չլինի հանկարծ այլոց ներկայությամբ  
Քղանցքդ բռնեմ  
Կամ կառչեմ քո ժպիտից:

### **ՄԻԱԿ ՄԵՂՔՍ ՀԱՅԵԼՈՒՆ ՆԱՅԵԼՆ ԷՐ**

Միակ մեղքս հայելուն նայելն էր  
Եվ անէանալը քո մեջ,  
Երբ ինձ էիր նայում...  
Միակ մեղքս բացելն էր լուսամուտի  
Եվ հրավիրելը քո մազերի բույրին,  
Որ տարածվի իմ մեղմության այգու մեջ:

### **ԳՈՒ ԱՄԵՆԱԲԱՐՉՐ ՇԱՏՐՎԱՆՆ ԷՒՐ**

Իմ քայլերը փոքր էին,  
Իսկ քո աշխարհը մեծ:  
Իմ ուրախությունը կտեղավորվեր  
Մի թռչունի սրտի մեջ,  
Սակայն դու անէանում էիր  
Անձայրածիր տիեզերքում...  
Մատներս շոշափում էին  
Նուրբ ցողունը ծաղիկների,  
Սակայն դու  
Ամենաբարձր շատրվանն էիր  
Եվ ամենավերին կաթիլներդ  
Կորցնում էի երկնքում:  
Երբեմն գլուխս ընկնում էր ծնկներիդ  
Այն պահին, երբ  
Սուզվում էի փերիների հեքիաթներում

## Գեղարմ Աշուն 2017

### ԱՅՆ ՕՐՎԱ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ, ԵՐԲ ՆԿԱՐՈՒՄ ԷԻՐ ԵՐԿՐԱԳՈՒՆԳԸ

Տեսանք մեղրաճանճերին՝  
Քո քաղցր խոսքը  
Իրենց փեթակները տանող:  
Եթե խորհրդանիշները ծաղկեն  
Քեզ համար կկառուցեն  
Փիրուզագույն մի գմբեթ,  
Այն օրվա հիշողությամբ  
Երբ նկարում էիր երկրագունդը,  
Իսկ ես քեզ էի տալիս ներկերը

\*\*\*

Նա վերադառնում է,  
Որպեսզի իր նոր անունը ճահճին ասի,  
Եվ նստած իր սայլում  
Հանգիստ անցնի արևի ներքո...

Նա գյուղ կգա այս գիշեր,  
Կնայի լուսնին,  
Կնստի իր գերեզմանին  
Եվ ինձ կտեսնի...  
Ես հենց այն նունուՖարն եմ,  
Որ տարիներ առաջ  
Ծաղկել էի  
Նրա լուսամուտի տակ...

\*\*\*

Ինչու՞ այստեղ գարուն չի գալիս  
Եվ ոչ մի մասրենի  
Չի նստում իմ վարսերին:

Մի ձայն ասում է.  
- Դու գերեզմանատանը  
Ննջել ես քարի տակ,  
Ուրեմն փակիր աչքերդ  
Եվ տնավորվիր  
Քո բաժին լուռության մեջ:

Հարցնում եմ, եթե արթնանամ  
Արդյոք այս քարը մի կողմ կքաշե՞ս,  
Որպեսզի քո գյուղում, կրկին անգամ,  
Նստեմ քո դիմաց...

## Գեղարմ Առն 2017

Չեռքերը վերցնում են քարը.  
Մի քար սրտիցս,  
Մի քար ճակատիցս,  
Մի քար ճակատագրիցս...

\*\*\*

Կոկոսենու ճյուղերը  
Երևում են լուսամուտի ետևում  
Եվ այլևս ոչ մի թաշկինակ  
Չի սրբում ճակատս...

Երեկ գիշեր  
Հազարավոր թռչուն տեսա երագում,  
Թռչունը, որ վանդակում էր՝  
Ես էի:

### **Քիյանա ՌԱՇԻԳԻ**

\*\*\*

Կուզեի որ շաբաթը յոթանասուն օր լիներ  
Որպեսզի կեռասները ընդմիջտ  
Մնային ճյուղերի վրա

\*\*\*

Մի ուղևորի ճամպուրկը  
Լցնում է մենությունը իջևանատան  
Օրը  
Մենությունը ուղևորների  
Ուղևորները անձնագրերով  
Իջևանատները ցուցանակներով  
Ես կանգնել եմ  
Խորհում եմ քամու մենության մասին  
Քամու մենության  
Որ երբեք բացի փչելուց ուրիշ անվանում չի ունեցել

\*\*\*

*Ֆորուլին\**

Հայելու դիմաց մեծանում եմ  
Չեմ խորհում ծաղիկների գուգավորման մասին

---

\*Ֆորուլի Ֆարրոխզադ - Վաղամեռիկ պարսկուհի բանաստեղծ:



## Գեղարմ Առն 2017

Փողոցում էլ քամի չի գալիս  
Ինձ սեղմում են գրկիս մեջ  
Կիսամերկ շորով  
Դուրս են նետվում հայելուց  
Ոչ խորհում են ծաղիկների գուգավորման  
Եվ ոչ էլ այս ամուլ փողոցի մասին  
Հենց այն հողային հղին են  
Որ մատները օղակել է շրջագոտիս

\*\*\*

Քո երկինքը քեզ համար  
Իմ երկինքը ինձ համար  
Մենք երկուսս մի անգամ ենք ծնվում  
Մի անգամ ենք մեռնում  
Ես քո երազանքներն են հագնում  
Դու գրկիր իմ մոծավանջները

\*\*\*

Ձեռքերիցս մի աղեղ են շինել  
Որ ամեն անգամ քեզ նետելով  
Անցնես գրկիս միջով

\*\*\*

Ինձ կախել են իմ վզնոցից  
Որպեսզի հավատամ  
Կյանքը երբեմն սրանից գատ չի կարող լինել  
Վզնոցը որ կապում ես ստվերիդ կոկորդին  
Սավեր որ մի մեծ պարանով  
Իրեն կապում է իր ցնորքներին

\*\*\*

Թռչունը  
Կտցահարեց իր մենությունը  
Մենությունը թռավ  
Թռչունը  
Միայն թռչուն մնաց  
Թռչունի հետ  
Մենակ մնաց

\*\*\*

Մեռած մարդը մոռացվում է քաղաքում  
Կենդանի մարդը մոռացվում է քաղաքում  
Քաղաքը միայնակ  
Կենդանի է մնում  
Մեռնում է

## Գեղարմ Աշուն 2017

...

Մարդը անցնում է փողոցի եզրով

\*\*\*

Սանդուղքների վերջում

Ինչ-որ մեկը սպասում է քեզ

Ամեն օր

Այն պահից երբ սկսվում է օրը

Ամեն գիշեր

Այն պահից երբ գիշերը...

Օրը ինչ-որ մեկն է քեզ սպասող

Գիշերը ինչ-որ մեկն է...

Ժամանակը ինչ-որ մեկն է...

\*\*\*

Այստեղ չի կարող գոյություն ունենալ

Ոչ մի բանի անվանում չի մնում այս էջի հիշողության մեջ

Սա մի էջ է ձմռանից

Այն տողը որ անցնում է այս տեքստի միջով

Ճերմակ թղթի վրա սայթաքում է

\*\*\*

Սրանից հետո

Վեր բարձրացրեց կոշիկի կրունկը

Վերցրեց ձեռնափայտը

Սրանից հետո

Հասավ իր քաղաքին

Այսուհետ

Նրան գտնելու համար

Պետք է վերադառնամ

Այս տեքստին նախորդող աշխարհը

\*\*\*

Ինքն իր խամաճիկն էր

Անձայն ծիծաղում էր

Լալիս էր

Տիկնիկային թատրոնի տիկնիկը

Սի հավերժական ներկայացման մեջ

Ինքն իր խամաճիկն էր

Խաղում էր բոլոր չգրված դերերը

Ծիծաղից լաց

Լացից ծիծաղ

## Գեղարմ Առն 2017

Տիկնիկային թատրոնի տիկնիկը  
Որ կախված չէր ոչ մի թելից

\*\*\*

Բռնակը պտտեցնում է  
Ոչ թե դուռը բացելու համար  
Ոչ թե ներս մտնելու համար  
Ոչ էլ նույնիսկ գնալու  
Բռնակը պտտեցնում է  
Ոչ թե ինձ վախեցնելու համար  
Ոչ թե վախից ազատվելու  
Միայն պտտեցնում է բռնակը  
Պտտեցնում է  
Պտտեցնում է  
Սա միակ ձայնն է որ նրա հետ խոսում է

\*\*\*

Մի քանի փայտե ձի  
Մի քանի հեծյալ  
Մի քանի իրական գամբիկ  
Մի քանի փայտե հեծյալ  
Մի քանի հոգի  
Վերջին անգամվա համար նայում եմ մրցադաշտը  
Վերջին անգամվա համար շահած...  
Վերջին անգամվա համար մի քանի հոգուց մեկն եմ դառնում  
Ընտրություն...  
Իրական գամբիկ  
Փայտե ձի  
Ոչինչ չի պատահում  
Բոլոր դեպքերում գնդակը արձակվում է  
Գռնակները բացվում են

Պարսկերենից թարգմանությունները՝  
Էդուարդ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ

**Աշոտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

**ՄՈՒՐՃԻ ԵՎ ՍԱԼԻ  
ԱՐԱՆՔՈՒՄ**



Քրիստոֆ Ռանսմայրը ծնվել է 1954-ին, Ավստրիայի Վերին Ավստրիա երկրամասի Վելս բնակավայրում: 1972-1978 թթ. փիլիսոփայություն և ազգագրություն է ուսանել Վիեննայի համալսարանում: Իբրև ազատ լրագրող՝ երկար տարիներ թղթակցել է Վիեննայում լույս տեսնող հեղինակավոր էքստրաբլատ, Տրանսատլանտիկ, Գեո և Մերիան պարբերականներին: Իր գրական երախայրիքը հանդիսացող «Պայծառ կործանում» բանաստեղծական հատորյակի (1982), ապա և «Սառույցի սարսափը» վեպի (1984) լույս ընծայումից հետո թողնում է լրագրողական գործունեությունը և ցորս ապրում է իբրև ազատ ստեղծագործող: 1994-ից մշտապես բնակվում է իռլանդական Կորկ քաղաքում: Ռանսմայրին մեծ համբավ բերած նշանավոր վեպերն են՝ «Վերջին աշխարհը» (1988), «Մորթուս կիտահարա» (1995), «Թռչող լեռը» (2006), «Վեհերոտ մարդու ատլասը» (2012) ևն:

Վախճանաբանական թեմաների՝ կործանումների, աղետների, հայտնութեանական տեսիլքների, մարդկության ապագայի հանդեպ անթաքույց վախով լցված՝ հորինաստեղծ աշխարհների հնարակերտողն ու հետազոտողն է Ռանսմայրը: Նրա երկերում ճգնաժամերին ու վերահաս աղետներին դիմակայելու մղումը առաջընթաց զարգացման հիմնարար քննադատության հեղինակի ներքին համոզմունք է: Նա դիմում է մարդկության անցյալի ճգնաժամային աղետներին՝ գալիք աղետների կանխատեսման, լուսաբանման և ըստ հնարավորի՝ կանխման նպատակով: Եվ եթե հաջողվում է անգամ կյանքի հեղհեղիկությունն արվեստի հաղթանակներով կերպարիփեսել, միևնույն է՝ գոյության համելուկը մնում է անլուծելի: Ռանսմայրը մետաֆիզիկ չէ, այլ՝ մարդկային ազատության ջատագով: Իր ինչ-որ տեղ թափառաշրջիկ կենսակերպի բերումով՝

## Գեղարմ Աշուն 2017

նա իրեն կիսաքոչվոր էր անվանում: Նրա փոքր ժանրի արձակ մանրապատումները, որոնցում նա կանխագծում է Քնոսոսի լաբիրինթոսի կառուցման, 1453 թ. Կոստանդնուպոլսի վերջին օրվա կամ 1918 թ. Գալիցիայում Պրժեմիշլի Ազատ Հանրապետության հռչակման ձախողման իր տեսիլքները, հիշողություններ են այն մասին, որ դրանք ոչ միայն պատահել են իրականում, այլև՝ որ ժամանակին նաև հնարավոր են եղել:

1988 թ., երբ Վարչավյան պայմանագրի երկրներում սկիզբ էր առնում փլուզման գործընթացը և Ղարաբաղյան շարժումը ծավալվում էր ողջ թափով, Ռանսմայրը լույս ընծայեց իրեն հռչակ բերած առաջին վեպը՝ «Վերջին աշխարհը», որն արդեն թարգմանվել է աշխարհի երեք տասնյակ լեզուներով: Վեպի երևակայական հորինաստեղծման մեկնակետը հռոմեացի մեծ բանաստեղծ Օվիդիոսի պատմականորեն հավաստված արտաքսումն է Օգոստոս կայսեր կողմից, հ.Ք. 8 թվականին: Հռոմեացի ազնվական Կոտտան, նույնպես պատմական անձնավորություն, որի անունը հիշատակվում է նաև Օվիդիոսի «Նամակներ արքորից» գրքում, ականջալուր լինելով Նազոնի մահվան մասին ասեկոսներին, նրան փնտրելու, ինչպես նաև կայսեր հրամանով հրո ճարակ եղած նրա գլուխ-գործոցի՝ «Կերպարանափոխությունների» պատճենը ձեռք բերելու նպատակով ուղևորվում է Սև ծովի ափին գտնվող բանաստեղծի արտորավայրը՝ Թոմի բնակավայրը (ներկայիս Կոստանցա քաղաքը Ռումինիայում): Սակայն այդ «երկաթյա գործ քաղաքում» Կոտտան հանդիպում է լոկ իր բարեկամի հետքերին: Գտնում է նրա ավերակված տունը լեռներում, Նազոնի ալևոր ծառա Պյութագորասին և Կերպարանափոխությունների հույժ առեղծվածային նշաններին – պատկերներում, կերպարներում, զարմանահրաշ հան-

գամանքներում, մինչև որ Կոտտան ինքն էլ թվում է՝ կորսվում է կերպարանափոխությունների խորհրդավոր անիրական աշխարհում: Կոտտան ականատեսն է դառնում, թե ինչպես է Օվիդիոսի Կերպարանափոխությունների կերպարներով բնակեցված այդ ծովափնյա քաղաքը կործանվում և նրա բնակիչները կերպարանափոխվում են քարերի ու թռչունների: Քայլ առ քայլ բնությունը ետ է նվաճում քաղաքը: Սակայն Կոտտան սեփական եսի կորստյան սպառնալիքից դրդված՝ լքում է քաղաքը և քաշվում լեռները: Աշխարհի կործանման այս մոտիվով Ռանսմայրը արտահայտում է տեխնիկական զարգացման հետևանքով գլխիվայր շրջված 20-րդ դարավերջի հասարակության անգործության զգացողություններն ու կենսական վախերը: Վեպում հեղինակը Օվիդիոսի դասական երկը վերափոխում է ժամանակակից արձակի և թողնում է, որ անտիկ և արդի աշխարհներն իրար միախառնվեն: Լեզվական եզակի բանաստեղծական միջոցներով վեպը ընթերցողին գայթակղելով տանում է մի զարմանահրաշ երևակայական աշխարհ: Վեպի հետնախորշում պատմվում է Հռոմում անցկացրած Օվիդիոսի կյանքը և նրա գրական գործունեությունը՝ ընդհուպ մինչև նրան քաղաքից արքորելը: Օվիդիոսն ի սկզբանե, իր առաջին գործերից սկսած՝ անխնա քննադատություն է բանեցնում Հռոմի իշխանական բուրգի հասցեին և չնայած հասարակության մեջ ունեցած իր գրական մեծ հաջողությանը, նա արքորվում է՝ քաղաքային մի ստադիոնի բացման արարողության ժամանակ կայսեր ներկայությամբ արտասանած իր համարձակ ճառի պատճառով: Ժամանակների միախառնման երևույթն առավել քան տեսանելի է դարձնում հին ու նոր ժամանակների կենդանի կապը:

Իր վիպական մտահղացման առու-

## Գեղարմ Աշուն 2017

մով ուշագրավ է 1995-ին լույս ընծայված Ռանսմայրի «Մորբուս Կիտահարա» վեպ-անտիտոտոպիան, աշխարհի այլընտրանքային պատմությունը, ուր նկարագրվում է մի աշխարհ, ուր պատերազմում պարտություն կրած կողմը (զուգահեռ պլանում՝ 2-րդ աշխարհամարտում պարտված Գերմանիան ու Ավստրիան) զարգացած արդյունաբերական երկրից վերածվում է հետամնաց գյուղատնտեսական հասարակության: Ռանսմայրն այստեղ նկատի ունի 1944թ. օգոստոսին հրապարակ հանված, այսպես կոչված՝ Մորգենթաուի ծրագիրը, որի հեղինակն էր 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Յենրի Մորգենթաուի (1856–1946) որդի, Ֆրանկլին Ռուզվելտի նախագահության օրոք ԱՄՆ ֆինանսների նախարար Յենրի Մորգենթաու կրտսերը: Յետպատերազմյան Գերմանիային վերաբերող իր այս ծրագիրը 1944թ. հունիսին նա ամօձամբ ներկայացրել է Ֆ. Ռուզվելտին և Ու. Չերչիլին, սակայն Ռուզվելտը, հետագայում էլ Տրումենը հրաժարվեցին դրան ընթացք տալ:

1918 թվականը աշխարհացունց քաղաքական փոթորիկների տարի էր, երբ իրար հետևից խորտակվում էին դարերով գոյություն ունեցող երեք միջին եվրոպական կայսրությունները՝ գերմանական, ավստրո-հունգարական, ռուսական: Զուգահեռաբար վերածնունդ էին ապրում նախկիններում աշխարհի քարտեզից ջնջված և ահա մոխիրներից հառնող պետություններ՝ Լեհաստանը, Լիտվան, Չեխոսլովակիան... Դեռևս 1915 թ. գերմանական ազատ-դեմոկրատների առաջնորդ Ֆրիդրիխ Նաունանի կողմից քաղաքական քննարկման դրվեց Միջին-Եվրոպա հասկացությունը, որը ենթադրում էր այդ բազմազգ ու բազմադավանանք աշխարհագրական տարածքի միավորումը մեկ-միասնական պետական կազմավորման մեջ՝

Գերմանիայի մշակութային տիրապետության տիրույթում, գաղափար, որի ուտոպիական բնույթն ու սնանկությունն ակնհայտ դարձավ արդեն 1918-ի պատմական իրադարձությունների խառնարանում: Պարզվեց, որ այնտեղ ապրող առանձին ժողովուրդներն ունեին սեփական ազգային պետություններն հիմնելու իրենց նվիրական երազանքը՝ հաճախ ի հեճուկս, անգամ ի վնաս մյուսների: Այս երկու իրարամերժ, հավերժապես փոխբացառող, ցանկալի և իրականի գաղափարներն են ընկած Ռանսմայրի պատմվածքում մարմնավորված փաստաբան Լիբերմանի և կայազորի հիվանդանոցի բժիշկ Սուչեկի թաքուն ու բացահայտ բանավեճի հիմքում: Ռանսմայրը միանշանակ կազմաքանդում է որևէ մեծագոր տերության հովանու ներքո միջին եվրոպական ժողովուրդներին համասեռ զանգվածի վերածելու և դրանով իսկ նրանց խաղաղ համագոյակցության պարտադրման կամ ապահովման գաղափարը, միաժամանակ քննադատության հակառակ սլաքն ուղղելով նաև այդ նույն ժողովուրդների ազգայնական կեցվածքին, ազգային եսասիրության ու անհանդուրժողականության հանգամանքին: Հայեցակետ, ինչն այսօր էլ արդիական է: Բայց սա կարելի է նաև իբրև անջատողականության նորոյա քարոզ նկատել, հատկապես քաղաքականության այն սուբյեկտների առնչությամբ, որոնք ձգտում են ավելի ներփակ, քան թե բաց ազգային-պետական համակարգերի: Այն, ինչը ցօրս չլուծված խնդիր է մնում միջին եվրոպական տարածաշրջանի համար, առավել կամ պակաս պարբերաչափով իր լուծմանն է սպասում նաև հարակից, ապա և աշխարհագրական ամենահեռու լայնություններում ինքնահաստատվել ձգտող այլևայլ էթնո-ցեղախումբ-ժողովուրդազգ միավորների համար:

## ՊՐԺԵՄԻՇԼ

### Միջին-եվրոպական ուսումնական ձեռնարկ 1997թ.

1918 թվականի՝ Բոլոր սրբերի տոնակատարության օրը, հրագնային վերքից Լուդվիգ Ույբերալի արյունածորելուց երկու շաբաթ առաջ, Պրժեմիշլի<sup>1</sup> Օդակաձև հրապարակում սկսվել էր Ոսկե դարաշրջանը: Այսպես էր, համենայնդեպս, կանխագուշակում մի փաստաբան, ով Օդակաձև հրապարակի մայրիների ներքո այդ մեղմ նոյեմբերյան երեկոյան ելույթ էր ունենում ջահակիրների ու սովոր բազմության առաջ: Պրժեմիշլում ճանաչում էին Հերման Լիբերմանին՝ ճառասացին, որպես Գալիցիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդի և որպես բարեկիրք մի մարդու, ով ամեն կեսօրից առաջ Գրանդ Կաֆե Շտիբերում լրագիր էր ընթեռնում, միջօրեին ճաշում էր կայարանային Քոն ճաշարահում և տարիներ առաջ ապարդյուն փորձ էր ձեռնարկել ամուսնանալու Գիզովսկի ընտանիքից սերող Հելենե Ռոզենբաումի հետ: Սակայն կիրքը, որով պարոն փաստաբանն այդ երեկո խոսում էր, իր ունկնդիրների մեծագույն մասին անձանոթ էր: Ոսկե Դարաշրջան... Գեղեցիկ, անչափ գեղեցիկ էր հնչում այդ ելույթի սկիզբը: Պարոն փաստաբանը մշտապես կարդում էր բազմաձայլ թերթիկին գրված հոռմեացի մի բանաստեղծի խոսքերը, բանատողերը, երկարուձիգ բանատողերը և ասաց, որ այսպիսի կամ առնվազն սրա նման մի բան պետք է հիմա նաև Գալիցիայում հաստատվի. «Ոսկե դարաշրջանում ո՛չ սաղավարտ կար և ո՛չ էլ տուներ: Չունենալով զինվորների կարիք՝ ժողովուրդներն այնտեղ ապրում էին անհոգ ու հեզանուրբ խաղաղության մեջ»...

Պրժեմիշլի Ազատ Հանրապետություն, այնուհետև բացականչեց Լիբերմանը և ձեռքը բարձրացրեց խմբավարի հանգույն, որ ոչ թե ձողիկով, այլ դատարկ բռունցքով էր չափ տալիս – Պրժեմիշլի Ազատ Հանրապետությունը, որի հիմնադրումն այստեղ և այսօր նման մի ցնձությամբ հռչակվեց, ցնցեց ավստրո-հունգարական իշխանությանը, որպեսզի ի վերջո աշխարհով մեկ տարփողի այն, ինչը Վիեննայում ու Բուդապեշտում մշտապես խոստանում էին, հուսահատ հավաստիացնում մինչ ի մահ, և որը Միջին եվրոպական երկրներում, այսպես կոչված Թագահպատակ երկրներում, երբեք իրականություն չէր դարձել. իրավահավասար ազգերի խաղաղ համագոյակցություն՝ բազմաձայն ու ժողովրդավարական պետության մեջ: Քաղաքի լեհ, ուկրաինացի ու հրեա ազգաբնակչությունը, նաև լուծարված կայսերական և թագավորական կայսերական խորվաթ, հունգար և բոհեմացի զինվորները պետք է ա՛յս Հանրապետությունում բարեկեցիկ, բայց որ ավելի կարևոր է՝ միասնական ապագա կերտեն, և ... փաստաբանը կարճատև, շունչը հետ բերելու չափ դադար տվեց, ձեռքերը ցած բերեց և ապա դանդաղորեն ասաց՝ ավելի շուտ ինքն իրեն, քան հանկարծակի անհանգիստ դարձած բազմությանը. և հետագայում գուցե նաև Հայրենիք:

1 Քաղաք Լեհաստանի հարավ-արևելքում, Ուկրաինայի սահմանին: Պրժեմիշլը դարեր շարունակ եղել է միջին եվրոպական խոշոր առևտրային կենտրոններից մեկը և սկսած 1895-ից՝ նաև երկաթուղով էր կապված հաբսբուրգյան միապետության կարևորագույն կենտրոնների՝ Կրակովին, Լվովին ու Բուդապեշտին: Քաղաքն առ այսօր պահպանել է իր բազմազգ նկարագիրը (լեհեր, ռուսներ, ուկրաինացիներ, չեխեր, գերմանացիներ, հրեաներ, հայեր):

## Գեղարմ Աշուն 2017

Բազմաձայն հայրենիք, ազգերի ընտանիք, ծաղկող դանուբյան երկրներ և Հաբսբուրգների կործանման ժառանգությունը, մի խոսքով՝ Ազատ Միջին Եվրոպա: Լիբերմանն անդրադառնում էր մի հնամենի կարոտաբաղձության պատկերներին, որոնցով նաև ավստրո-հունգարական անցյալի մասին արտահայտվող շատուշատ բանախոսներ էին իրենց ելույթները զարդարում և որոնցով նաև միջինեվրոպական ապագայի մասին ճանարտակող շատուշատ ճառասացներ ու հողվածագիրներ էին իրենց ճառերն ու գրվածքները պճնում: Սակայն այս պատկերները չէ, որ բազմությանն հանկարծակի անհանգիստ արեցին, այլ ընդամենը մի քանի ուկրաինական սայլապաններ, որ օղեգործ Ֆեդկովիչի դարպասին էին դեմ արել երկու ջահակիրների և այնտեղ ջանում էին նրանց ձեռքից կրակը խլել: Թե արդյոք սայլապանները հարբա՞ծ էին կամ կուրացե՞լ էին Լիբերմանի ճառի ուտոպիական փայլից, ճառասացի ամբիոնի բարձունքից հնարավոր չէր գանազանել: Լիբերմանն արեց այն, ինչը շատուշատ ճառասացներ են անում, երբ ժողովուրդը վերջապես սկսում է շարժվել. նա սպասողական դիրք գրավեց:

Սայլապանները վերջապես տեղի տվեցին դեպքին ուշադիր հետևող և գնալով չարացող ջահակիրների գերազանցող ուժի առաջ և հետ քաշվեցին կամարակապ ծառուղու խորումուք ստվերների մեջ: Օղեգործի դարպասի առջևի ջրափոսում ծխախոտի մի գլանակ հանգցվեց: Կոտորակված ձայնով, անեծքների շարան տեղալու պես, կամարակապ անցողու խավարամած խորքից տղամարդկային լուսապայծառ մի ձայն հնչեցրեց ուկրաինական մի երգի առաջին ելևէջները. Շչե նե վմեռլա Ուկրաինա ... Դեռ չի՛ մեռել Ուկրաինան: Պրժեմիշլի հանրապետականների բարձր գոչյունները, սակայն, տեղնուտեղը խլացրեցին նաև այս խափանարար փորձը:

«Ընկերներ՛ր, համաքաղաքացիներ՛ր, բարեկամներ...»՝ կրկնում էր Լիբերմանը, այժմ վերստին բարձրաձայն ու ինքնավստահ, դիմելվածների ընդունված կարգով, որ նա գործածում էր նաև Գրանդ Կաֆե Շտիբերում ամեն անգամ, երբ նա անսպասելիորեն կտրվում էր ժողովրդավար այրերի մտքերի փոխանակման կարմիր-սեղանային փրփրաբերան շոգեխանգարմունքից և ձայնի վերամբարձ հնչերանգով դիմում էր սովարաքանակ սրճարանային հասարակությանը: Աստիճանաբար մարեց իրարանցումը Օդակաձև հրապարակում: Ոգևորության աղմուկ-աղաղակը տեղի տվեց ընդարմացման անորորի առաջ, որ տարածվում էր պատգամախոսի ամբիոնի շուրջըլորը, ինչպես տապի ու սառնամանիքի կտրուկ փոփոխությունից տրաքած տակառի միջի հեղուկը:

«Ընկերներ, համաքաղաքացիներ, բարեկամներ... Միապետությունը կարող էր դառնալ Եվրոպայի սիրտը, սակայն նա կորցրեց իր այդ հնարավորությունը, մսխեց այն: Միապետությունը երես թեքեց իր սլավոն մեծամասնությունից և ժողովուրդների խաղաղ համագոյակցության փոխարեն ի ցույց դրեց ազգերի խղճուկ ու հնամաշ բուրգը, որի գազաթին այսպես կոչված պետականակերտ ազգությունն է գահակալում – գերմանացիները: Միապետությունը, ընկերներ, չհասկացավ, որ միջին-եվրոպական ժողովուրդներից որևէ մեկը բավականաչափ հզոր չէ, որպեսզի ի գործ լինի իշխելու մյուսներին: Չհասկացավ, որ հենց միայն այս պատճառով արդեն իսկ քաղաքական բանախոսությունը այս ժողովուրդների հաշտեցման ու իրավահավասարության պահանջ է դնում: Եվ ուրեմն միապետությունը պե՛տք է այսպիսով խորտակվի՝ ինչպես յուրաքանչյուր կայսրություն, երբ այն կորցնում է ժամանակի հրամայականի բնագրը: Այժմ, ընկերներ, մեր ուսերին է դրված այս կայսրության ավերակների վրա մի նոր միասնական Միջին Եվրոպայի կերտումը, որ վերապրել է պատերազմը՝ որպես հետևանք ազգերի սրբապիղծ աստիճանակարգության և որն այժմ առանց որևէ ազնվականական իշխանության իր միասնությունն է գտնելու: Եվ Պրժեմիշլը, ընկերներ, համաքաղաքացիներ և բարեկամներ, դառնալու է այսօրինակ ժողովուրդների հանրակցության նախատիպն ու ուսումնական ձեռնարկը»...



Կիսաձայն ընդմիջարկություններով, ինչպես օրինակ՝ Լիբերմանը լեզվին է տալիս կամ՝ Ա՛խ, Լիբերման, Լիբերման, կայագորի հիվանդանոցի չեխ բժիշկ Յարոսլավ Սուչեկը Գրանդ Կաֆե Շտիբերում հնչող սոցիալ-դեմոկրատների այս և նմանօրինակ ելույթներին՝ երբեմնակի, բիլիարդի սեղանից չկտրվելով, ապա և կտրուկ խոյահարումներով դեպի երեք բյուրեղապակյա ջահերով զարդարված սրահի խորքը, կարճառոտ հակաճանաչություններ էր իրեն թույլ տալիս, համենայնդեպս, երբևէ չհետևելով Լիբերմանի առաջարկությանն առ այն, որ նա իր առարկությունները լավ կանի դեմոկրատների նեղ շրջանակներում ներկայացնի: Սուչեկը սկզբունքորեն արտահայտվում էր բիլիարդի սեղանի արծաթակապույտ ծխագոլորշիներով պարուրված հեռաստանի շղարշաքողի ֆիկունքից և դրանով իսկ զարմանալիորեն անորսալի էր թվում:

«Միջին եվրոպական ժողովուրդները սակայն ո՛չ ազնվիշխանական, ո՛չ էլ դեմոկրատական բազմազգ պետություն են տենչում», - ասաց չեխ բժիշկը դեռ անցած շաբաթ՝ անձրևած մի ետկեսօրի, «այլ նրանք ցանկանում են պարզ ու հասարակ մի բան՝ իրենց սեփական, ինքնիշխան, խելապակաս ու փոքրիկ ազգային պետությունները, իրենց սեփական հռեղացող արդյունաբերությունները, կոռումպացված խորհրդարաններն ու զվարճալիորեն հանդերձավորված բանակները: Նայեք՝ խնդրում եմ՝ Ձեր շուրջը, պարոն Լիբերման, ի՞նչ եք տեսնում: Դուք տեսնում էք Միջին Եվրոպան՝ մի գազանանոց, չեխերը հայիոյում են սլովակներին, լեհերին, գերմանացիներին: Լեհերը՝ լիտվացիներին ու ուկրաինացիներին: Սլովակները հունգարներին: Հունգարները՝ ռումինացիներին: Խորվաթները՝ սլովեններին, սերբերին ու իտալացիներին: Սերբերը՝ ալբանացիներին ու չերնոգորցիներին: Սլովենները իտալացիներին ու բոսնիացիներին և այսպես շարունակ, և գերմանացիները հայիոյում են սլավոններին ընդհանրապես, բոլոր թշնամությունները, բնականաբար, նաև փոխադարձվում են և բոլոր մասնակիցների կողմից մշտապես նորովի և մշտապես խելակորույս նախապաշարումներով գերհագեցված: Այս քաջահայտ ժողովուրդների ընտանիքի անդամների համար ընդհանուրը հենց միայն այն է, որ նրանք ամեն հարմար առիթով հարձակվում են հրեաների վրա: Հրեական ջարդերը, սակայն, նաև այն միակ ձեռնարկումն է, որին ընտանիքն այս, միասնաբար, ինքն իրեն պատրաստ է գտնում: Խաղաղ համագոյակցություն: Դրոշներ ծածանող և իրենց ազգային օրհներգերը գոռոռացող այս զանգվածներից որոշները հենց միայն նոր են հայտնագործել իրենց ազգային բնավորությունը և այժմ ավելի հրատապ բան չունեն անելու, քան այս խեղկատակությունը սեփական պետության մեծադողող տարփողումի ներքո պահել-պահպանել՝ մինչև հաջորդ պատերազմը, մինչև հաջորդ հրեական հետապնդումները, մինչև հաջորդ ասպատակությունը: Ընդամենը՝ նրանք կույր են մնում իրար հանդեպ. կույր ու խելացնոր: Ազգությո՛ւն... Ա՛խ, Լիբերման, Լիբերման, ինչպիսի՛ ցնդաբանություն: Սակայն ժամանակավորապես սա նույնիսկ հույժ արդիական է մնում, այս ապուշության կարևորումը և դրանով իսկ հավատը սեփական, առանձնապես՝ փառավոր պատմության հանդեպ, հավատը հույժ առանձնաշնորհյալ և հանճարեղորեն ոլորապտույտ սեփական ճանապարհի հանդեպ՝ կապիկների ոհմակից մինչև գերգիշատիչ ազգային պետությունը: Այն Եվրոպայում, որի մասին Դուք խոսում եք, մեծարգո պարոն, Բոհեմիան գտնվում է ծովափին և Տրիեստը լեռնաստանում: Ձեր ճառերը ժամանակի մակարդակի բարձրության վրա չեն: Եվ ժամանակը, պարոն դեմոկրատ, վստահաբար Ձեր ճառերի բարձրության մակարդակին չի գտնվում:

Ձինվորական հիվանդանոցի բժիշկ Սուչեկը երկուշաբթվա մինչկեսօրեի իր այս պոռթկումը բիլիարդի մակամի անսպասելի մի հարվածով ավարտեց, ամբողջովին խորատուզված էր իր խաղի մեջ և այլևս անհաղորդ էր իրենից որևէ պատասխան ակնկալող Կարմիր սեղանականների բարձրացրած բողոքի ձայնին:

## Գեղարմ Աշուն 2017

Որպես մի ահարկու հրդեհի գոհ՝ Հերման Լիբերմանը ճառասացի իր ամբիոնից վեր պարզեց առկայծող, հուրհրատող ջահերի մխացող դաշտը: Սուչեկի կողմից այդ երեկոյան որևէ բացականչություն չեղավ: Բժիշկն օրեր առաջ, իր անձնակազմով հանդերձ, տեղափոխվել էր և ապարդյուն փորձել էր խանգարել իր գործընկերներին իրենց հետ քարշ տալու կայագործի հիվանդանոցի բոլոր շարժական սարքավորումները: Ծանր բեռնավորված, երգելով ու գորաքայլելով՝ չեխերը, ժամանակի քառսից դուրս պրծնելով, ընդառաջ գնացին իրենց սեփական պետությունը:

«Մենք հավաքվել ենք այստեղ»՝ բղավեց Լիբերմանը կրակներից, կերպարանքներից, դեմքերից և վետվետացող ստվերներից հյուսված վայրի թավուտի միջից, «սպացուցելու, որ Միջին Եվրոպան միայն իր ժողովուրդների միասնությամբ է ի գորու պաշտպանվել ու խուսանավել օտար բանակների ու շահերի թատերաբեմ դառնալուց: Կեցցե՛ Պրժեմիշլի Ազատ Հանրապետությունը, ազգերի հանրակցության ուսումնական ձեռնարկը, կեցցե՛»:

Vivat<sup>2</sup> և ուռա՝ հռնդալով արձագանքվում էր ներքևներից: Ջահակիրները ճոճում էին իրենց լույսերը գլխավերևում կամ կրակի շրջանակներ ու օղաշրջաններ էին գծում օդում: Հաղթականորեն և շինձու չափաշեշտով, որ ասես վաղուց սպասված մի ազդանշան աչքաթող էր արվել և բաց թողնվածն այժմ արագացված տեմպով հարկավոր էր հետ բերել, ազդարարեց փողային նվագախումբը: Յնձության միջից սուրուլիկ վեր էին խոյանում Օդակաձև հրապարակի մայրիները Գալիցիայի մթամած երկնքում:

Վստահաբար – այս Բոլոր սրբերի տոնի երեկոյան հանդիսությունը կարող էր նաև այլ կերպ ընթանալ. գուցե կարող էր Հանրապետությունն առանց փողային երաժշտության հոչակվել, գուցե և Օդակաձև հրապարակի մայրիներն այն ժամանակ կանգնած չէին այլևս, չեխ բժշկի անունը Սուչեկ չէր, այլ Պալացկի կամ մեկ ուրիշը, և գուցե չկային նաև սայլապանները, այլ Սիչի<sup>3</sup> համագգեստավոր անդամները, ուկրաինական ռազմականացված հրշեջների ջոկը, որ ձեռնամարտի էր բռնվել ջահակիրների հետ: Նույնպես և, փաստը մնում է փաստ, որ սոցիալ-դեմոկրատ Հերման Լիբերմանի կողմից ամենայն ոգևորությամբ հոչակված Պրժեմիշլի Ազատ Հանրապետությունը գոյատևեց մինչև 1918 թվականի Բոլոր սրբերի - Բոլոր հոգիների տոնական օրվա գիշերը: Բանգի այդ Հանրապետության առաջին օրվա բացվելուն պես քաղաք ներխուժեցին ուկրաինական բոլոր շեների գյուղացիները, հողագործներն ու արհեստավորները – ազգայնականները Վիրտչկոյից ու Յակամանիչիից, Պոսոյաչից, Ստանիսլավչուկից ու Կորմանուչիից, ուլքեր, դոկտոր Ջահայկիևիչ անունով մի երկրորդ փաստաբանի առաջնորդությամբ, զինված ու անզեն՝ ներխուժեցին Պրժեմիշլ և դրանով իրենց բողոքն արտահայտեցին ընդդեմ փաստաբան Լիբերմանի բազմազգ պետության. Պրժեմիշլը մշտապես ուկրաինական է եղել: Պրժեմիշլը մշտապես մնալու՝ է ուկրաինական:

Ուկրաինացիներն այսպիսով գրավեցին խորհրդարանի շենքը, շրջանային վարչությունը, տեղահանված կայագործի հիվանդանոցը, կայարանն իր ճաշասրահով և ընդամենը նախորդ երեկոյան կազմված Ազատ Հանրապետության կառավարական հանձնաժողովը - չորս հաշտվողական ուկրաինացիների, չորս լեհերի և Լայբ Լանդաուին՝ հրեական կուսակցության առաջնորդին - տնային կալանքի տակ դրեցին: Նաև Ազատ Հան-

<sup>2</sup> Կեցցե՛ (լատ.):

<sup>3</sup> Սիչ - 16-18-րդ դարերում ուկրաինական կազակական ամրացված վարչական կենտրոնականների ընդհանուր անվանումը: Հնագույնը Ջապորոժյան Սիչն էր, որը, ինչպես և նրա հաջորդները, մշտապես կռիվների մեջ էր Ռուսական և Օսմանյան կայսրությունների, ինչպես և լեհական ու լիտվական պետական կազմավորումների հետ:

## Գեղարմ Աշուն 2017

րապետության անունը ջնջվեց և փոխարինվեց Պրեմիշլ անվամբ:

«Միմիայն Դոկտոր Ջահայկիկիչ...»՝ ասված էր մի թուցիկում, որ ավելի ուշ Գրանդ Կաֆե Շտիբերում հարկ է որ բռնագրավված լինեք, «Ջահայկիկիչը, ով արդեն իսկ տարազների փառատոներին և ազգագրական շքերթներին սիրում էր մշտապես իբրև ուկրաինական հեթման հանդերձավորվել - ահա այս կառնավալային խենթուկն է առաջնորդում հիմա ուկրաինական հորդան ընդդեմ քաղաքի...»:

Պրեմիշլի համար մոլոր պայքարի վախճանը կանխատեսելի էր՝ ինչպես որ կանխատեսելի է ուտոպիստական բոլոր պայքարների վախճանը, բնականաբար, լեհերը չհանդուրժեցին, որ Պրեմիշլն ընկավ ուկրաինական տիրապետության ներքո: Պրեմիշլ... Հենց միայն հնչումն է բարբարոսական: Այդ անիծյալ ուկրաինացիք: Եվ սակայն լոկ ռուքենացի<sup>4</sup> գեղջուկներն էին, լեմկերն ու բոյկենները<sup>5</sup>, որ իրենց համար ազգային անուններ ու մի-մի դրոշ էին ձեռք բերել և յուրաքանչյուր ճառագաստի առթիվ, ով միանշանակ ու բավական երկարաշունչ անունով էր իրողությունը բնորոշում, քթի տակ Ուկրաինա էին գոմռում: Սակայն Պրեմիշլը մշտապես լեհակա՛ն է եղել: Եվ Պրեմիշլը ընդմիշտ լեհակա՛ն է մնացել:

Ուկրաինական տիրապետության երկու շաբաթներից հետո, ազգային ճամբարների միջև հարաճուն խռովքի ու ամենօրյա բախումներից հետո քաղաք ներխուժեցին լեհական զորաբանակները՝ Ռոխ անունով մի գեներալի հրամանատարության ներքո, ծեծուջարդի ենթարկեցին խառնամբոխին ու վռնդեցին իրենց գյուղերը և փաստաբան Ջահայկիկիչին տնային կալանքի տակ դրեցին: Շայքովկա խամուխուպանում և Ֆրանց-Յոզեֆ-նավամատույցի Սան առափնյակում մաս կրակոցներ հնչեցին: Սակայն մահացու վերք ստացավ միայն մի մարդ: Չավթիչների արձանագրությունը ավանդել է նրա անունը, դա մովսեսականություն դավանող լեհ Լուովիկ Ույբերալն էր, ում մի գյուղացի Բալուչից, ով գետի ավազով բեռնված եզների իր լծասարքը Ֆրանց-Յոզեֆ-նավամատույցի մանրախճեն հատակի նստարանին էր տեղադրել, տեսել էր, թե ինչպես երկու կարճառոտ կրակահերթերից նա բերանքսիվայր գետնին տապալվեց:

Գերմաներենից թարգմանությունը՝  
Աշոտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

<sup>4</sup> Ռուքեններ կամ ռուսիններ - Այսօրվա ռուսների, ուկրաինացիների և բելոռուսների նախնիները: 11-րդ դարից ի վեր Գալիցիայում ու Կարպատյան նախալեռներում բնակվող արևելասլավոնական ցեղախումբ, որը XV-XVII դդ. գտնվել է տարբեր պետական կազմավորումների հպատակության ներքո՝ Լիտվական Մեծ դքսության, Լեհ-լիտվական պետության և Հունգարիայի թագավորության, 18-րդ դարից մինչև 20-րդ դարասկիզբը մտել է Հաբսբուրգների միապետության կազմի մեջ:

<sup>5</sup> Լեմկեր ու բոյկեններ - Երկու ազգային փոքրամասնություններն էլ, մաս հուգոլները, մինչև 2-րդ աշխարհամարտը ստվար զանգվածներով, սերնդեսերունդ բնակվելիս են եղել Լեհաստանում, այսօր նրանք, կարելի է ասել՝ գրեթե վերացել են: Լեմկերենն ու բոյկեներենը ուկրաիներենի ենթաբարբառներ են, որոնք իրենց վրա կրում են լեհերենի ու սլովակերենի մեծ ազդեցությունը, առկա են նաև ռումիներենի և հունգարերենի լեզվական հետքերը: Դավանանքը՝ հունադավան կաթոլիցիզմից անցում ուղղափառությանը: 1944 թվականին Լեհաստանի ժամանակավոր կառավարությունը և ԽՍՀՄ-ը ստորագրեցին Ազգաբնակչության փոխանակման համաձայնագիր, որով այս փոքր ազգությունների բնակչության մեծ մասը բռնությամբ տեղահանվեց ու վերաբնակեցվեց Ուկրաինայում՝ Լեհաստանում թողնելով իրենց անշարժ գույքն ու ունեցվածքը: Մնացածները ևս տարահանվեցին իրենց բնօրրանից և ցրվեցին Լեհաստանով մեկ: Այսպես վերացվեց նաև այդ ժողովուրդների մշակութային ժառանգությունը:

## Խ Ճ Ա Ն Կ Ա Ր



### **Գիրք ընթերցողներն ավելի բարի են, քան հեռուստացույց դիտողները**

Գիրք ընթերցող մարդիկ ավելի «ընկերական, հասկացող և գթասիրտ» են, քան նրանք, ովքեր հեռուստացույց են դիտում: Ինչպես տեղեկացնում է The Independent-ը, այս մասին վկայում են Մեծ Բրիտանիայի Քինգսթոնի համալսարանի հետազոտողների իրականացրած ուսումնասիրու-

թյան արդյունքները:

Հետազոտության ղեկավար Ռոուզ Թերները հարցում է անցկացրել 123 կամավորի շրջանում, թե ժամանցի որ տարբերակն են նախընտրում՝ գրքերը, խաղերը, թե՞ հեռուստացույց դիտելը: Այնուհետև փորձարկվել են նրանց միջանձնային հատկանիշները:

Արդյունքում պարզվել է, որ նրանք, ովքեր գեղարվեստական գրականություն են ընթերցում, դրական վարքագիծ են ցուցաբերել, իսկ նրանք, ովքեր սիրավեպ ու դրամաներ են ընթերցում, առավել հակված են կարեկցանքի:



### **Չինաստանում արտառոց դիզայնով «ապագայի գրախանութ» է բացվել**

Չինաստանի Սուչոու քաղաքում բացված նոր գրախանութի արտառոց ինտերիերին նայելիս թվում է, թե ապագան արդեն եկել է: Այստեղ կարելի է գտնել «Կայծոռիկների քարանձավ», անգամ՝ «Ծիածանային հովիտ», գրում է bigpicture.ru-ն:

Չարմանալի գրախանութի դիզայնի մշակմամբ զբաղվել է չինացի ճարտարապետ և դիզայներ Յու Տինի Wutopia Lab ընկերությունը:

Տարածքը բաժանված է չորս գոտու, որոնք ձևավորված են տարբեր ոճով:

«Բյուրեղապակյա պալատ» անվանումով՝ նոր ստացված գրքերի սրահի պատերը պատրաստված են թափանցիկ ակրիլից:



### **Կոլումբիացին հանրային գրադարան է ստեղծել աղբանոցներում գտած գրքերով**

Կոլումբիացի Խոսե Ալբերտո Գուտիերեսը, 20 տարի առաջ աղբանոցում հայտնաբերելով Լև Տոլստոյի «Աննա Կարենինա» ստեղծագործությունը՝ ամբողջովին վերավորից իր կյանքը:

Կոլումբիացին, ով այն ժամանակ որպես աղբահավաք էր աշխատում, անմիջապես նկատեց ռուսական դասական գրականության նմուշը, որից հետո սկսեց գրքեր փնտրել և հավաքել բոլոր վայրերից, այդ թվում և աղբանոցներից: Այսօր 55-ամյա տղամարդը, որը բնակվում է մայրաքաղաք Բոգոտայի արվարձաններից մեկում, իր երկհարկանի տան հարևանությամբ «Բառերի ուժը» անվանումով հանրային գրադարան է բացել: